# ԳԻՐՔ
# ԱՇԽԱՐՀԱՑ
# ԵՒ
# ԱՌԱՍՊԵԼԱՐԱ ՆՈՒԹԵԱՆՑ.
# Որէ
# ԱՂՈՒԷՍԱԳԻՐՔ:

'ի Հայրապետութե Տեառն
Յակոբայ կաթուղիկոսի
Սրբոյ Էջմիածնի:

Յամսթէրտամ.

'ի Թուոյ փրկչին 1668:
Եւ Հայոց ՌՃԺԷ. Հոկտեմբերի
ամսոյ մէկ:

...ԵՐԵՎԱՆԻ ... ՀԱՄԱԼՍ...
ԳՐԱԴԱՐԱՆ
...ского Государст... университета им. В. М. Молотова

Սգեմ զբանս գովեստի․
Ճշմարտաբան առնս մեծի։
Սակաւ բանիւ յայտածողի․
բայց զօրութեամբ զարմանալի։
Կաթնաբուծից չամոքելի․
բայց գխտողաց ախորժելի։
Ուղղխոհաց զկէտ սահմանի․
իմաստութեան որ ըստ կարգի։
Ներակերտեալ զբանս աշխարհի․
տարորոշեալ ըստ գաւառի։
Դիւրաքանչիւրոն ըստ պատշաճի․
մօսէս քերթող խորենացի։

ԲԱՇԽԻՆ ՀԱՅՈՍՏԱՆԻՆ
...նէր
ԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑԻՑ
...3 ՆՈՅԵՄ. 1918 Թ, ԹԻՖԼԻՍ.
68 1817

# Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ։

ՅԱՂԱԳՍ ԱՇԽԱՐՀԱ-
գրութեան [illegible]ային գիրս
ոչ ուրեք գտանեմք ո-
ճով ասացեալ այլ գոյզն
ինչ՝ դուն ուրեք՝ և այն որոշ ուարս

հաս և տաժանելի։ Արդ՝ վասն զի ան
հասք դոցա եղեալ մեզ յարտաքինս
սըն հարկաւորիմք ձեռնարկել։
Որով զաշխարհագրութիւն յարմարե
ցին 'ի ճանապարհորդութեան և 'ի
նաւարկութեան՝ և ստուգեցին յերկ
րաչափութեան։ և ինքն երկրաչափու
թեան՝ գտաւ յաստեղաբաշխութեան։
Քանզի ուշ եղեալ առաջինքն խո
կային, թէ ո՛րք տեղիք երկրի, ընդ
որովք են կացեալք մասամբք երկ
նային բոլորակին։ Եւ զմեծութին
տունջեան և գիշերոյ։ և զոր իմն
երկրի։ և զոր ի ներքոյ երկնից միշտ
բերելով։ յայտնեն և զբնակութին
մարդկան։ 'Ի միջօրական գծէն
զդիրն առնելով ապարիզական չա
փու ըստ ճանապարհորդութեան և
ըստ նաւարկութեան։ իմացեալ զկայ
անսն և զփոփոխիլն։ զայլ այլուր
այլապէս երևեալ։ քանզի իմն այրե
ցածքն բերրին կենդանատեսակքն՝
մտանեն և ծագին։ Բայց փոքր
արջն

արջն գծերիվերոյ կացեալ լինի երկ
նի 'ի հիւսիսայինն կողմանն աս
պարիզօք հինգհարիւրեւերկու հըն
գերեկօք։ Նաւ անդէն թուլա
կղզի. որ մեկնէ զհիւսիսականացն,
եւ ծանուցելոյ երկրի իբրեւ զգետ՝
ըստ լայնութեն չափու։ որք 'ի միջո
րէական շրջանակն երեքհարիւրեւ
վաթսունեւերկու բիւրուք՝ վեցհա
զարեկօք մասամբք։ հինգհարիւր
չափուց ասպարիզաց. մեծ շուրջու
նելութք։ Իսկ 'ի հարաւայինն,
խոնարհի 'ի սուզականն. եւ այլա
կերպ զայլսն երեւեցուցանէ։ որք
Մետոդորոս Սամոստացի պատմէ
զհնդկաց. թէ 'ի լիմիմեռուիկոնն
նաւելով յերկիրն՝ ունելով զտու
ռոնն միջերկնեայ՝ եւ զլուդայ ընդ
մէջ կխուռխայ։ Իսկ յաղխայ ընդ մէջ
նաւելով երկրականն. զտանամբու
սոտղ՝ որ է պպոս 'ի նոցանէ եր
թեալ. եւ իմէջ նոցա Սպուիկիկոն
հնչական. եւ այլ բազում ինչ։

Եւ զցամաքեալ գօտին բերելով
ընդ մէջ տիեզերականին՝ առ Եթէ-
պացւոց Ճանապարհորդութենէ
յԱկիղերրայ աշխարհէն։ Եւ ընդ
Տուասոն ծայր ընդ Ձմեռնային շաւ-
ղօք՝ յաներեւականն եւ 'ի սուզա-
կանն կոյս։ Քանզի եւ յեօթնէ նա-
հանգէն մինն տուեալ է հարաւայ-
նոյ միջօրէականի գծին։ Եւ զայլս-
վեցն 'ի նմանէ յարջայինն կոյս։
Այսպէս եւ երկու ընդայինս ժամս
ունելով։ երեք ը̃ Ալէքսանդրիայ։
կիսաժամաւ յառաջ մատուցեալ՝
ուպ̃ եւ ա̃մ։ Չորս Պոնտոս՝ որ է մի-
ջին նահանգացն, ըստ գնտակին
յայտնութեցն։ Հինգ ընդ Հռոմ։
Վեց ընդ Կոստանդնու պօլիս։
Եօթն ընդ Սկիւթիայ։ եւ ա̃մ աշ-
խարհաց դոցին դասեցան։ Յորս
նախ առնլի է զտիեզերաց ստորա-
գրութիս, նմանութե̃ երկու գնտա-
կան սաստղականաւ՝ զկէս շրջանա-
կին մեծի՝ ունելով հարիւրեւութ-
սուն

սուներէք բնակութի մարդկան։
Նաև զվերաչափութի առնելով ժա
մադրոսականաւն, իձեւն երևե
լոյ աստուորոն և սկիւթիւոն գործ
արանաց։ բայց կարևոր է Պէո
պետուայ տուի ցամաքաչափութին։
որ է Պտղոմէոս և Սղօդէոս։ շա
փեալ ասպարիզօք զ̃մ բնակութի
մարդկան։ Նրկայնութ̃է յՄ.րև
մուից սկիզբն արարեալ՝ որ է ծով
անծանօթ Ովկիանոս։ 'Ի ծայրէ
անծանօթ աշխարհին մինչև յԱ.րև
ելս՝ յեզր անծանօթ երկրի մասունս
հարիւր ութսուն։ Այնպէս և լայ
նութի սկիզբն արարեալ յայրեցե
լոյ գօտւոյն՝ չափեալ զ̇իւսիսիւ.
անծանօթ ծով և երկիր՝ մասունս
վաթսունևհինգ։ և դարձեալ յայ
րեալ գօտւոյն 'ի ̇արաւկոյս չա
փեալ յանծանօթ երկիր՝ մասունս
տասնևհինգ՝ լինիլ ̃ամ լայնութե
մասունս ութսուն։ Նաև առաւել
յորտաքսկոյս քան զայս՝ չէ ուրուք

զեզր երկրի տեսեալ՝ և կամ գիտա
ցեալ՝ ոպ ասէ Պտղոմէոս ։ Այլ ծա
նօթ կոչի երկիր և ովկիանոս ։ յորս
երկրագիր բոլորակին տիեզերա
գրութեցն առեալ Պապայ Աղեք
սանդրացւոյ համառօտաբար երկ
րագրութե ։ Յորմէ մեր ծայրա
քաղ արարեալ զմեծամեծսն և
զնշանաւորսն միայն ։ և զչափս որ
չափութեցն ։ ոչ ըստ յատակի երկ
րի՝ այլ ըստ բարձրացեալ լերանց
տեսութե ։ ընդ օդս անցանելով
՚ի ձեռն գործարանաց ։ նկարելով
զնշոյլս արեգական և լուսնի և աս
տեղաց ։ ըստ տանց խուրեանց եօթն
նահանգացն՝ փոփոխման սահմա
նաց ։ Եւ է սահման բան կարճա
ռօտ յայտնիչ բնութե ենթակայ
իրողութե ։ որ զխուրն ՚ի ներքս փա
կէ՝ և զայլն ՚ի բացորոշէ՝ և չափէ
զմասն ։ Եւ է մասն հինգհարիւր
ասպարէզ ։ և ասպարէզն է հեռա
գնացութե՝ այսինքն է վտաւան մի ։

Եւ

Լու է ասպարէզն ըստ օգտակարու-
թե քայլս հարիւր։ և քայլն վեց
ոտն է. և ոտն վեց մատն։ Մղոնն
ասպարէզ մի։ իսկ ասպարիզաց աս-
պարէզն հարիւրերքառասուներեք
քայլ։ և մղոնն է եօթն ասպարէզ։
Ըստ լինիլ գետնաչափութ մղոնն հա-
զար քայլ։ Լու փարսախն երեք մղոն
է։ Բայց օգտակարութ՝ է մասն
հինգ հարիւր ասպարէզ՝ ի լայն երկ-
րաչափութե, և նոյն չափ է երկայնու-
թիւն չորեքկուսի։ որպ զի լինիլ մասին
եօթանասունևմի մղոն։ չորք եօթն,
քանևութն։ Արդ՝ այս չափովս
չափեցին զերկիր և զծով։ սկիզբն
արարեալ յայրեցելոյ գօտւոյն՝ զոր
կոչեն միջօրական գիծ։ յորում
բնաւին ոչինչ բուսանի. յաղագս
միշտ յաձախելոյ ընդ նմա արեգա-
կանն յամառնային եղանակն։ զեղա-
նակ ձմեռնային փոփոխեալ և անդ-
րէն դարձեալ։ Սորոյ ասացին
զարեգակն շատ փոքրագոյն քան

ա 5 զերկիր

զերկիրս զայս լինել։ քանզի՝ վեցեր որդ կամ երրորդ լինել արեգական։ զերկուս նահանգսն ասելով բովանդակութի արեգական՝ այսինքն է օթեւանս քառասուն։ յորմէ ըստ հեղման օդոյն նրբացեալ բորբոքութե ասացին զայրեցական գօտին. և սառ՝ և անդ։ Իսկ նորա զՈվկիանոս ընդմիջելով 'ի բնակութենն։ և հարաւային կիսագնտին։ զոր ընդդէմ երկրի կոչեցին, բնակելոյ երկրիս մեծութբ։ ոչ ըստ սմա՝ այլ հիւսիսային կիսագնտին. զոր կոչեն գոյացեալ։ քանզի 'ի նմա ասացին փոքրագոյն գծագրեալ՝ վս անձուկ գոլոյ բոլորակին. և զդէմն նմանապէս նորին հարաւային եզրն զոր կոչեն ցամաքեալ։ Իսկ ոչ միայն զայրեցեալ գօտեաւն ասեն զովկիանոս՝ և զամ երկրաւն շուրջ գոլ։ զոր և Կոստանդինոս Անտիոքացի 'ի քրիստոնէական տաղագրութենն ասէ՝ յաղագս

տաս

տապանակին անցելոյ՝ յարևելեան
երկրէն առ մեզ՝ 'ի մէջօկոյս։ Բայց
Պտղոմէոս՝ որոյ արք բազմաշրջու-
թ̃ք զա̃մ չափեցին։ ոչ ամէն շուրջ
լինիլ զովկիանոս այլ 'ի միոյ կողմա
նէ անկեան՝ հիւսիսոյ արևմտից՝
և տարածի յարևելակոյս ընդ հիւ-
սիսի։ յերկուց մասանցն մասն մի
ընդ արևմուտս։ Ի հարաւակոյս
'ի չորս մասանցն. երեք մասունքն
որք 'ի նմանէ սկսեալք զանծանօթ-
երկրէ առէ շրջապատեալ զբնա
կութն մարդկայինս բնութե։ Ի ջու-
զերից ծովուցն մեծամեծաց ըզ
ընդկայնոյն ասեմ. և զ[illegible]ունակա
նէն. և զՀիւրկանին ծով։ և երկեր
բնակութն մարդկան առէ շուրջ
լինիլ զնոքօք՝ և է ճշմարիտ։

Ա. [illegible]

Բանզի զ[illegible]ունականաւն և զ[illegible]ա
բիականաւն, և մերոց իսկ ա-
րանց պատահեցաւ շուրջ անցանիլ.
յորոյ

յորոյ վարկանիմ և զՀնդկայնոյն նոյնպէս լինիլ: և ո՛չ որպէս ոմանք ա-սացին Ովկիանոսի պարունակեալ զամ: այլ հաւանեալ եմ Պտղոմեայ պատմութեն. որոյ արք զայրեցեալ գօտեաւն անցին 'ի հարաւոյ կոյս. և զազգսն զայնոսիկ Ճշգրտեցին. և զասահմանս Ճարակաց նոյ̄ն չափեալ՝ Յակիզխիբրայ մինչև 'ի լուսնի լեառն և անդր ևս՝ յանծանօթ երկիր. և շուրջ եկեալ զանծանօթ երկրաւն՝ յՈվկիանոսէ մինչև ցՈվկիանոս՝ և զևսառաւելն լաեաց. զորս ոչ երբեք կոխեաց ոտն՝ և կամ ետես ակն մարդոյ. որում Ածային գրոց 'ի Ճահ գան վկայութիւք. որպէս Յոբ ասէ. թէ ձգեաց զհիւսիս զոչընչիւ. և եթէ հրաման պատեաց զերեսս ջուրց, այսինքն եթէ հրամանն Ան բաւականէ ունիլ զեզր ջրոց անծանօթի ծովու. ոչ պիտոյացեալ անցանել երկրի. և ոչ եզր սպառուածի անծանօթի երկրի պիտոյացեալ ջրոյ.

ջրոյ. բայց թէ և է զանձանօթ երկրաւ ծովս. կամ շուրջ զանձանօթիւ ծովու երկիր. մեք ոչ անհասեղեալ մտածութեց լուեմք. և գրեմք զայս միայն. զոր կոխեաց ոտն, և ետես ակն մարդոյ։

Արդ՝ սկսցուք ըստ Պապպայ Աղէքսանդրացւոյ երկրագծութեն՝ որ ըստ ինքնագիր բոլորակին Կղօդիայ Պտղոմեայ տիեզերագրութեցն չափուց. զոր սկսեալ յարեւելոյ գօտւոյն կրկնակի, և՛ ի հիւսիսոյ, և՛ ի հարաւոյ. բայց սկսանի յարեւել գօտին յանծանօթ երկրէն սինէացւոց՝ անցանելով ԺԲ Տաբաւորբանի կղզւոյ սորրոտն. և ընդ Նեղոս գետոյ վտակն՝ և ընդ ծոմ Եթէօպայս ըստ հարաւոյ կողմանէ Թէզբիմաց լերինն. որ կոչի աստուծոց աթոռ. ընդ ձկնակեր Եթէօպայեցին, յանծանօթ երկեր. իսկ յՈվկիանոսէ, զկողմամբք զևփիւռոս հողմոյ սկսա

սկսանի. քսան և մեկ մասն է լայնութին
առ ձկնկերովք Լ. Թէ օպայեցուքն
և Խէտզքիմաց լերամբք. և պատէ
զարևմուտս, մինչև խապառ լայնու
թին չափու. և դառնայ առ հիւսի
սի յարևելս մինչև վաթսուն մասն
լայնութին. որէ հանդէպ Կարկինէ
տեան ծոցոյն Պոնտոսի առ Բրետ
տոնիւ. և անտի յառաջ անծանօթ եր
կիր. և պատէ զմնացեալ մասունսն
հիւսիսոյ. և զարևելս և զհարաւ
քսան մասն յարևելից մինչև ցնոյն
Ովկիանոս. իսկ զաւելին քան զայ
սոսիկ չէ ուրուք տեսեալ և կամ ծա
նուցեալ. վն̃ այնորիկ անծանօթ կո
չի երկիր և Ովկիանոս: և Ովկիանոս
ծանօթ նաւագնացութե: և կղզիք
երեք հանդէպ ներքսագոյն Լիբիոյ
որք երանելեաց կղզիք կոչին. և դո
ցա ծ̃ արևմտից վեց կղզի այլ է. և դո
ցա 'ի հիւսիսային չորս կղզիք հան
դէպ Բրիտանեաց՝ և մի նեղուցն
որ կոչի սեպտէ, այսինքն եօթնեակ՝
քան

քանզի զեօթն մղոն ունի լայնութե տեղւոյն՝ որ գետաբար ելանէ յՈվկիանոսէ, և ծնանի զյունաց ծովն. որոյ յարևմտից կղզի կայ այլ մի ևս ։ Իսկ Ովկիանոս երթեալ ընդ հիւսիսի և դարձեալ ընդ արևելս առնէ երկուս կղզիս մեծամեծս. որք կոչին Բրիտանացւոց աշխարհք՝ և զԹուղիս մեծ կղզի. որոյ հասարակն անծանօթ երկիր համարեալ է. և կղզի մի այլ՝ որ սկանդրէ անուանի. յորում դունթք լեալք են. և քան զայս կղզիս այլ նաւագնացութե չկայ՝ և ոչ հասեալ է ոտն մարդոյ. վասն այնորիկ կոչի անծանօթ ծով. մտանեն և գետք քսանևմէկ յարևմուտ յՈվկիանոս ։

Իսկ երեք ծովք՝ որովք երկիր շուրջ է ։ Առաջինն ծով՝ Հնդկայինն. որ կոչի կարմիր ծով՝ յորմէ ծոցոյ ելանեն պարսից և արաբացւոց ծովք. և սահմանի 'ի հարաւոյ անբնակ և անծանօթ երկրաւ ։

Իսկ

Իսկ յարեւմտից՝ սենեցւոց աշխար
հաւ. եւ 'ի հիւսիսոյ՝ հնդկօք եւ
պարսիւք եւ արաբացւօք։ Իսկ յարեւ
մտից Եգիպտացւօք եւ Եթէովպա
ցւօք։

Երկրորդ գօտին Յունաց՝ որ ծնանի
յԱփրիկեանսս է՝ եւ լայնացեալ ձգի
մինչեւ յասորիս. եւ սահմանի յարեւե
լից ասորօք եւ փիւնիկեցօք։ Իսկ
յարեւելից հրէաստանիւ հարաւոյ
մինչեւ յԵգիպտոս։ Իսկ յարեւե
լից հիւսիսոյ միջերկրօք մինչեւ ց
Քաղկեդոն՝ յորմէ ծոցոյ ելանէ
Պոնտոսի ծովն։ Իսկ 'ի հիւսիսոյ
Եւրոպիւ մինչեւ ցՍեպտէ։ Իսկ 'ի հա
րաւոյ Լիբիիւ մինչեւ ցնոյն Սեպտէ։
Երրորդ ծով Վրկանի՝ որ կոչի Կաս
բից ծով. եւ ձգի երկայնութիւն 'ի
բերանոյ երասխայ եւ կուր գետոյ
մինչեւ մուտս Վօղէտիւ էօմէտայ
գետոյ. եւ սահմանի յարեւմտից հայ
օք. իսկ յարեւմտից հիւսիսոյ աղվա

նիւք՝ և Սաւքթօք։ իսկ յարևելից հիւսիսոյ Սկիւթացօք․ իսկ յարևելից ազգաւն՝ որ կոչի Րըխականք ամբոստակէք։ իսկ յարևելից հարաւոյ Վրկան աշխարհաւն։ Իսկ ՚ի հարաւոյ Մարօք՝ Գելփօք՝ և Գեղմօք՝ և Կասբիւք․ մինչև ՚ի մուտս Երասխայ։ Նոյնպ̃ և զերկիր բաժանեալ յերիս, յԵւրոպիայ՝ ՚ի Լիբիայ՝ և յԱսիայ․ և ունի զարևմտական հիւսիսայինն կողմանէ Եւրոպիա մինչև ՚ի Տանայիս գետ։ Եւ զարևմտական հարաւայնով կողմամբ Լիբիայ մինչև ցկարմիր ծովն։ Իսկ այսոցիկ սահմանաց յարևելակողմն զհիւսիս և զհարաւ զմէջ Ասիա ունի մինչև ցանծանօթ երկիր․ վ̃ն որոյ մեծագոյն է․ քան զայլ հատուածաւ։ Իսկ միջոց աշխարհի բնակուլի մարդկան Պտղոմէոս զԵրջանիկն զԱրաբիայ սահմանց ես ոչ հաւաստատամ։ քանզի Արաբիայ բանն զԵրջանիկն Արաբիայ ծագս

երկրի կոչէ ուստի եկն դշխոյն հա
րաւոյ՝ բայց մէջ լսի՝ որ զմիաչափ
հեռակացութ̃ի ունի ՚ի ծայրիցն և
յեզերացն. և այն է Սէմ, որում և
աստուածայինք գիրք վկայեն. Թէ
պէտ զչափուցն Պտղոմեայ երկայ
նատարած յարեւելս կոյս: այլ զեր
կուս չափս ՚ի մի դնելով նկարա
գրեսցուք այսպէս. և հարաւայինն
ութ աւելի գայ. քանզ հիւսիսայինն
ըստ Պտղոմէական չափուն. զոր եր
կու ՚ի մի եդեալ կերպագրեսցուք
զերկայնութ̃ի չափուցն, ութսուն
ամբողջ պահեսցուք՝ վ̃ զի նեղ է. և
զհարիւրն կրկնեսցուք լինի յիսուն,
և այնպ̃ նմանագրեսցուք: Սոյնգու
նակ և ըստ հարաւոյ յայրեցական
գօտեաւն կրկնեսցուք զութն ՚ի
չորս. և բերէ ստուգապ̃ զնմանու
թ̃ի զՊտղոմէական երկրագրուե̃ն:
Եւ արդ՝ որովհետև բովանդակե
ցաք զհամառակախօսութ̃իդ. այսու
հետև սկսցուք պատմել զաշխարհ

աց

տուանձինն ըստ գրոց տեղագրութեցն Պապայ աղեքսանդրացւոյ. ակիզբն արարեալ յարեւմուտ յՈվկիանոսէ. ՚ի սպանիոյ աշխարհէ։

## Սահմանօք աշխարհն Սպանիոյ.

Սպանիա՝ է երեք անկիւնի իմնձեւով. կալով իմէջ ծովուց որպէս կղզի. սահմանի յարեւմտից եւ հիւսիսոյ Ովկիանոսիւ։ իսկ յարեւելից Պիւռենէ լերամբ։ իսկ ՚ի հարաւոյ յունաց ծովուն։ Նա բաժանի նայերիս աշխարհս փոքունս. որք ունին գաւառս բազումս՝ եւ քաղաքս. զորս անուամբ յիշատակել աշխատութ͞ի անշահ համարեցաք. եւ ոչ միայն զգաւառս եւ զքաղաքս, այլեւ խորհեցաք միայն գրել զլերինս անուանիս՝ եւ զգետս հզօրս՝ եւ զքաղաքս հոյակապս. եւ եթէ այլ ինչ նշանաւոր իցէ։ Թողլով իւրաց զթիւս եւ զչափս եւ զմանրամասնաբար պատմութիւնս։

Բրիտանացւոց՝ որք են երկու կղզիք՝ ՚ի հիւսիսայնոյ Ովկիանոսի ՚ի վերոյ կողմանէ Սպանիոյ. և անուն արևմտեան կղզւոյն Իբուռմ բառնիա. և է գարեհատաձև ձղձկէն՝ յորում գետք հզօրք տասն և վեց՝ և ազգք բազումք. իսկ անուն արևելեայն կղզւոյն՝ Բրիտանիա. որ է մեծ քան զնա՝ և է եղրկաձև բազմաձիւղ. յորում գետք հզօրք քսան և հինգ. և յոյժ մեծածառուք անտառուք. և շուրջ զկղզեաւն մանունք կղզիք քառասուն և հինգ և Թուղիս մեծ կղզի։

Գաղղիա յարևելից կողմ սպանիոյ. և սահմանի ՚ի հիւսիսոյ, և յարևմտից Ովկիանոսիւ. իսկ ՚ի հարաւոյ յարևելից յունաց ծովուն։ և բաժանի Գաղղիայ աշխարհս չորս։ յորում լերինք մեծք՝ և գետք հզօրք քսանևհինն. և կղզիք շուրջ զիւրեաւ տասնևչորս։ ունի

քա

քաղաքս և ազգս բազումս՝ և հզօրա-
զազգն փռանգաց։ լինի 'ի նմա գօ-
մէշ սպիտակ և սպանօղ։

Գերմանիա, յելից կալով Գաղ-
ղիոյ առ հիւսիսայլն Ովկիանո-
սիւ. մինչև ցՍարմատացւոց լե-
րինսն. և ցԴանուբ գետ. որ է Տօ-
զու Ռուսաց. գայ և մտանէ 'ի Պոն-
տոս ծովն։ և սա մեծ է քան զՏօ-
նաւիս։ ունի Գերմանիա ազգս
եօթն՝ յորոց մինն Գունդք. ունի
լերինս անուանիս երեք։ ունի և
գետս հզօրս տասնևմի՝ և կղզիս ինն.
և անտառս չորս յոյժ մեծամեծս.
ունի և զերկաթակտորութի։

Դաղմատիա յելից կալով Գաղ-
ղիոյ և առ երի Գերմանիոյ՝ և
սահմանի յարևմտից ակամբք Դա-
նուբեայ գետոյ. իսկ 'ի հիւսիսոյ և յա-
րևելից նոյն Դանուբեայ դարձուա-
ծօքն. իսկ 'ի հարաւոյ՝ Յոնիոն ծո-

ցուլն. և ունի Դալմատիա աշ խարհս վեց՝ քաղաքս և գաւառս բազում. ունի և լերինս վեց՝ և գետս քսան՝ և կղզիս եօթն: Նաւ լի նի ՚ի Դալմատիայ գաւառն որ զերզն՝ Բոնոնիա անուն. որ զկուն ձգէ ռքսորդաց նւրոց, և այրէ:

Իտալիայ է յարևելից Դալմատիոյ՝ և առ երի Դալմատիոյ ՚ի հիւսի սոյ կուսէ. և սահմանի ըստ արև մտից և հիւսիսոյ՝ Սպանիացօք, և Ակուէ լերամբք. իսկ ըստ հիւսիսոյ և արևելից, Յունական և Ադրիա կանու խորշիւն. իսկ ըստ հարաւոյ Միւջինական Պիղագոսիւն: Նա ունի Իտալիայ աշխարհս վեց. քա ղաքս և գաւառս բազում: ունի և լերինս. և գետս տասնևվեց: և կղզիս տասնևեօթն. յորոց մինն Պոնտիայ՝ ուստի Պիղատոսն էր: Ունի և մայրա քաղաքս երկուս. զՀոյակապն Աւենայ և զմեծն Հռոմ, բայց են յԻտալիայ

և

և այլք աշխարհք Կօսիկ անուն. 'ի Սկիւռնոս կղզւոյն. չորահարիւր մղոնաւ շրջապատելով. յորում գաւառք տասնևչորք. և գետք վեց. և մի Ոսկի անուն լեառն՝ ուր ոսկի և արծաթն հատանի երկրաբուսակ իբրև ծնեբեկ.

Սարդոնիա է մեծ կղզի. հուպ կալով 'ի Սկիւռնոս կղզին ընդհարաւոյ. Երկայն թևով 'ի հիւսիսոյ 'ի հարաւկոյս։ Նա ունի գետս չորս. և լերինս դժուարս, և ամուր տեղիս։ յորում քաղաքք ինն. և գաւառք քսան։ մանունք կղզիք ինն. և շրջապատութին Սարդոնիոյ եօթնհարիւր ութսուն մղոն։

Սիկիլիա՝ է մեծ կղզի՝ յարևելից կալով Սարդոնիոյ կղզւոյն։ Նա է Սիկիլիայ երեք անկիւնի ձևով. 'ի ծայրէ 'ի ծայր հ՛րիւր մղոն. յորում գաւառք եօթն։ քաղաքք ինն.

գետք տասնեւութն · կղզիք տասն
և վեց ։ լերինք երկու , և Պաութէ
նոս՝ յորմէ գետք բղխեն · և Րաւ
կանոս՝ որոյ կատարն հրով տոչորի ·
և է Սեկեռլիայ յոյժ արգաւանդ ։

Սարմատացւոց՝ որոյ հասարակն
յարեւելից կալով, Օղուրայ որ
է Գուլղարք Գերմանացւոց՝ առ
Հիւսիսային Ովկիանոսիւ՝ մինչև
ցանծանօթ երկիր · զոր Պալաք կո
չեն՝ և Ցուպխա լեառն, յորմէ ելա
նէ Տօնաւիս գետ · և ունի Սար
մատիա աշխարհս փոքունս՝ և քրիս
տոնէից զՊռեւսոն խորհին, որ է ցա
մաք կղզի · և 'ի հեթանոսաց բա
ղումս ։ Ունի լերինս հինգ · գետս
տասնեւերեք · փոքրլիճ մի · և կղզիս
երկուս ։ ունի և քաղաքս երկուս
մինն կոչի Աղեքսանդրու · և միւսն
Կեգարու ։

Թրակացւոց աշխարհն յարեւելից
կալով Դալմատիոյ ։ և ունի

Թրա

Թրակիայ՝ փոքր աշխարհս հինգ, և մի մեծ։ յորում են Սկլաւացւոց ազգք բաժանե հինգ· որոց փոխանակ մտին Գունդք· ունի լերինս՝ և գետս՝ և քաղաքս՝ և կղզիս՝ և լիճս· և մայրաքաղաք զԵրջանիկն Կոստանդնուպօլիս։

Մակեդոնիայ ելից կալով յունական Պիղագոսին՝ առ երի Դաղմատիոյ՝ և Թրակիոյ· ՚ի հարաւ Թողլով զԵլլադայ։ Եւ ունի Մակեդոնիայ լերինս վեց· և գետս չորս· գաւառս երեսուն՝ քաղաքս տասն և եօթն· ծովս երեք· կղզիս չորս։ Եւ լինի ՚ի Մակեդոնիայ մարմարիօն կանաչ սպիտակախայտ։

Ելլադայ առ երի կալով Մակեդոնիոյ՝ ի մէջ Պիղագոսացն։ Եւ ունի Ելլադայ փոքր աշխարհս վեց· զԵպիրուդ· զԱքայիայ· զԱտտիկէ· զԵւբիայ զապարաժ· զԿրիտէս

մէծ կղզի. և Սպեղանիոս ցամաք
կղզի: Ունի լերինս՝ և գետս՝ և գաւ-
առս՝ և քաղաքս՝ և կղզիս բազում
յոյժ. ունի և մեհեանս երիս,
ծուէ զԽուայ և զԱրտեմիս և զՊօնեդո-
նոս՝ ունի և մայրաքաղաք զՀոյա-
կայն զԱթէնս. ունի և ջուրս 'ի
կղզւոջն զՍիւուս՝ որ անպատ-
ճառ այսր անդր հոսի, ուր խորա-
սոյզ եղև Արիստոտէլ:

Աշխարհ Ճէճէպացոց. ոտրն.

Առաջինն՝ է որ է Ոսինկուրուրա.
Սօրխտանիայ. Տինգանի տարա-
ծի 'ի Սեպտէ առ հարաւակոյս
արևմտեայ Ովկիանոսի: Նա ունի
Սօրխտանիայ լերինս վեց. գետս
տասնևերեք: ազգս տասնևվեց. և
զՊուռնիոն Պեգիոն, որ է հրագոյն
դաշտ: Սօրատառնիայի, Կիտուայն,
Խայն, յելից կալով Տիգոնւոյ՝ և
տարածանի 'ի հարաւակոյս՝ առ-ի
Ր եղզէլէօք: և ունի գետս տասնև
եօթն՝

եօթն՝ և փոքր լիճս երեք՝ և լերինս
հինգ. և քաղաքս բազումս՝ և գաւ
առս քսանեհինգ՝ և զպղնձափորա
նոց երկիրն. լինի 'ի լերինս այսմիկ
ընտիր Տինաբառնիս. այսինքն է
դեղ կարմիր.

Ափրիկէ յելից կալով Մօրիտա
նիոյ առ ծովեզերբն. և բա
ժանի Ափրիկէ յերկուս աշխարհս.
և մի այլ առանձնակի, որ Տրապօ
լիս անուանի. Նա ունի Ափրիկէ
լերինս ութն. գետս տասնևինն.
գաւառս քառասունևմի. լիճս
ութն. ծոցս եօթն. կղզիս տասն
և վեց. և քաղաքս բազումս. և զԿար
կեդոնիայ մայրաքաղաք. Լինի
յԱփրիկէ բանջար նոյն Լուտաս
անուն. զոր եթէ ոք ուտէ, զհայրե
նիս մոռանայ. լինի անդ և կարմիր յա
կինդ՝ և եախուտ. լինի անդ սևսաթ.
բոյս փափուկ՝ ի ծովու՝ որ ելեալ յա
րևէ յօդ կարծրացեալ քարանայ.
Բուն

Կիւռենականն, որ է Պենտապօլիս՝ յելից կալով Մարմարիկեայ երկրի ծովեզեր։ Սա ունի Պենտապօլիս՝ գաւառս տասնևհինգ։ և գետս երեք. և լիճ մի. և կղզիս երկու. և քաղաքս բազումս՝ և զՀերակլեայն լերինս. և զԼնդաբեր երկիրն. և տեղիս ինչ նորակերպս գազանուտս. և զերեկորնական պարտէզսն. և քարայրս Լակինեցւոց։

Մարմարիկանն Լիբիա՝ և ընդ Եգիպտոս յելից կալով Կիւռենական աշխարհին՝ և առ երրի ծովեզերն յարևմուտս՝ խորշ երկայնի կարմիր ծովուն. և ունի Եգիպտոս լերինս տասնևերկու. և գուբս երկու չինուածոյս։ և լիճս երեք ինքնեղօ։ և երեք լիճք այլք՝ զորս Նեղոսի վտակքն առնեն. և գետ ունի զՆեղոս՝ որ է Գեհոն։ ունի և գաւառս քառասունևմի՝ և քաղաքս բազումս՝ և մայրաքաղաք զՄեծն

Աղեք

Աղէքսանդրիայ. ունի և կղզիս 'ի
Յունաց ծովուն տասնևմի. և 'ի
Կարմիր ծովուն երեք: ունի և
զաւազուտ, և զանանձրև երկիրն:

Ենտոս Լիբէի. որ Թարգմանի
ներքսագոյն Լիբէի. յելից կա
լով արևմտական Ովկիանոսի. յերի
կալով Ափրիկոյ: և սահմանիներք
սագոյն Եթէովպաւ առ այրեցելով
գօտեաւն: Եւ ունի Ենտոս Լի
բի. լերինս ութն. գետս քսանև
մէկ՝ լիճս վեց. կղզիս տասնևերեք:
և ճարակեն Ենտոս Լիբէ՝ ազգք
տասնևվեց: լինին և թզուկք մօտ
Ովկիանոսի 'ի Սպիտակ լերինն. ան
ցանեն ընդ Ենտոս Լիբիայ և ըռն
կեղջերք գազանք յՈվկիանոս 'ի
Նեղոս. ուր կոկորդիլոս գազանն,
և այլք գազանք՝ անցանեն ընդ Են
տոս Լիբիա. որք կոչին՝ Նափինթք.
մարդակերպք են և գինէսերք:

Մերինն Եթէովպիա յերի կալով
Ենատոս Լիբիոյ. և վերնոյն
Եգիպտոսի առ կարմիր ծովուն.
անցանելով զայրեցելով գօտեաւն
'ի հարաւակոյս առ ներսագոյն
Եթէովպացւոցն. ցնոյն սահման Ենա
տոս Լիբիոյ. Եւ ունի Եթէովպիա
փոքր աշխարհս երեք. զԲառբառ
նայ՝ և զԱզանիայ՝ և զՏռոգլօդս
յերկնէ՝ և գաւառս ազգաց երե
սուն և վեց. ունի և գետս երեք. և
լերինս տասն. ունի և կղզիս յԱրա
բացւոց ծոցին քսան և հինգ. և ունի
զԶմռնաբեր երկիր. և զԿնկաբեր՝
և զԿինամոմոնաբեր գաւառսն.

Ներքին Եթէովպիայ սկսանի յա
րևմտական անծանօթ երկրէ՝ յե
րիկալով Ովկիանոսի՝ և Ենատոս Լի
բիոյ. և 'ի հարաւոյ սահմանի անծա
նօթ երկրաւ. առ որով բնակեալք
են երեկորնականքն Եթէովպայե
ցիք՝ 'ի հարաւոյ այրեցելոյ գօտւոյ
կողմ.

կողմանէ․ մերկ․ք, վիշապամորտք․
եւ յերինջ ըստ Հիւսիսոյ առ Ովկիա
նոսի Ձկնակեր Եթէօպացիքն․ յո
րում կենդանի ինչ Տուքուս ա-
նուն՝ ոչխարանման՝ երկակենցաղ
եւ Ձկնակեր․ առ որով Աթակէնք
Եթէօպացիք․ յորում առիւծա
շուն գազանն․ որոյ ըստ Հիւսիսոյ
յերի Եղջերք Եթէօպացիք․ յո
րումկենդանի ինչ նման Ոանալու
թոյ մարդամարոտն եւ անուշահոտ․
առ որով Գերպիկէ, եւ Գերմու
նայք․ յորում աղծառասէրք՝ մար
դամարտք՝ ընձուղտք․ որոց՚ի հա
րաւոյ մինչեւ ց՚Նեղոս աշխարհ մի
Եթէօպացւոց՝ յորում փիղք սպի
տակք․ եղջերակնձիթք․ եւ վա
գերք․ յորոց յարեւելից լերինն՝ յո
րում վագերաձիք, եւ այծամարդք․
եւ ինձք գեղեցկախայտուցք։ Նուսո
ցա՚ի հարաւոյ աշխարհ մի առ ան
ծանօթ երկրաւ․ յորում է գազան
ինչ կանացի ունելով զգլուխ եւ
ձեռս՝

ձեւս՝ եւ զանձն չորստանի։ այլ մարդակերպ ինչ մերկ գազան շանականճիթ՝ եւ մեծականջ՝ ագեւոր. ոտք զառիւծակապիկ. որոց յերից բարձրագագաթունք Եթեօպացիք. եւ այլք մինչեւ ցլուսնի լեառն. յորում լինին քօշք սպիտակք՝ զօրաւորք եւ բռնաւորք. որոց յերից կուսէ Պաբօացիք՝ եւ իներքոյ սոցա մարդակեր Եթէօպացիք. յորում գազան ինչ հրաշունչ վարազանման. եւ Սաղամանդր գազան՝ որ նմանէ կովլի դիեցի. անցանէ ընդ հուր՝ եւ չիջուցանէ զնա։

Աշխարհն ընդ հանդէպ Ասիացւոյ։

Առաջին բաժին երկրի ընդ հանուր Ասիա է։ եւ ունի կողմունս. եւ նախ զկողմն միջերկրայս՝ որք մտանեն ընդ մէջ Յունաց ծովուն եւ Պոնտոսի։

Բիւթանիայ, յերից կալով Թագաւորական քաղաքին Կոստան

դինուպօլսի. և ունի Բիւթա-
նիայ՝ լերինս՝ և գետս՝ և լիճս՝ և կըղ-
զիս. ունի և մայրաքաղաքս մեծա-
մեծս երեք՝ զՆիկիայ. զՔաղկե-
դոն. զՆիկոմիդիայ։ որք ունին ընդ-
ինքեանս քաղաքս տասնևերեք. և
զգիւղաքաղաքս ծովեզերեայս՝ և վա-
ճառատեղիս. լինի և 'ի Բիւթա-
նիայ հող սպիտակ՝ զոր մանրաղա-
ցեալ և ցանեալ 'ի քանդուկս խմե-
ցորենոյ, ճճի ոչ ուտէ։

Միւսիայ՝ որ կոչի Հելիսպօնտոս-
ու երիկալով Բիւթանիոյ. և
ունի Միւսիայ՝ լերինս երեք՝ գետս
հինգ. կղզիս երկու. քաղաքս քառա-
սուն և մէկ։ և մայրաքաղաք ծովե-
զերեայ զԿիզիկոն՝ յորում տաճարն
է Ր.Ձ անուանեալ հրաշից։

Ասիա աւանձնակի յերի կալով
Միւսիոյ առ ծովուն. և ու-
նի Ասիա փոքր աշխարհս չորս.

զԼիդիայ․ զԿիլիկիա․ զՅոնիա․ զԿալաթիայ․ ունի Ասիա լերինս եօթն՝ կղզիս տասն․ գետս եօթն՝ քաղաքս տասնեհինգ․ և Մայրաքաղաք զԵփեսոս՝ և այլ ևս վեց։ և լինի յԱսիայ Մազատակէ 'ի խժէ Օտառոց։

Լիկիայ յեւլից կալով Ասիոյ։ և ունի Լիկիայ լերինս երկու․ գետս երեք։ կղզիս հինգ։ քաղաքս երիս։ և մայրաքաղաք զՄիւռնիայ․ և լինի Լիկիայ խունկ Օւզգին՝ և Տրառէ․ 'ի ծառոյ ծորելոյ ոպ̃ զխիժ՝ լոյծ ոպ̃ մեղր․ կամ ոպ̃ մրուր։

Փռիւգիայ յեւլից կալով առանձնակամ Ասիոյ՝ յերբի Լիկիոյ․ և ունի յինքեան Փռիւգիա աշխարհս երիս։ զՊիսիդիայ՝ որ ունի մայրաքաղաք զԱնտիոքիայ՝ ուր ասեն չինեալ զտապանն Նոյի, և այլ քաղաք քսանեւվեց։ Նաև յորոց մայրաքա

ղաք

ղաք Լաւոդիկայ՝ և այլք քաղաքք քառասուն՝ և աշխարհք երեք։

Սաղուսալեայ. որոց Մայրաքաղաք Սեղոնեա. և այլ քաղաքք երեսունք. և ունի լեառն զԼիդիոն. և գետս հինգ. և լիճս տասն և չորս. և դաշտս մեծամեծս։

Ոնորեա՝ յելից կալով Բիւթանիոյ. և առ երի Փռիւգիոյ. մինչև ցՊոնտոսի ծովն. և ունի Ոնորայ մայրաքաղաքս զԿղօդիուպօլիս. ընդ որով այլ քաղաքք հինգ։ և գետ ունի զՊարթենիոս զերեք վտակեան. յայսմ աղբեր երդնուին դեք վն անչափ ցրտութեն։

Փեղագոնիայ. յելից կալով Ոնորիոյ աշխարհին. որ է 'ի ծովուն Պոնտոսի. ունի գետս երկու. և մայրաքաղաք զԳերմանուպօլիս. որոյ ընդերդն Գանգր և քաղաքս

հինգ. և բերդս տասնևմի. գա-
ւառս վաթսունևմէկ։

Գաղատիայ առաջնոյն յելից կա
լով Փռիւգիոյ. և առ երի Պամ
փիղագոնիոյ. և լեառն ունի զերկ
րորդ Ոլիմպոն։ և գետս Օինան. որ
յառաջացեալ աշխարհն Թափի։

Գաղատիայ երկրորդ յելից կա
լով Փռիւգիոյ. և առ երի ա-
ռաջնոյ Գաղատիոյ. մինչև 'ի Պամ
փիւլիայ։ ունի լերինս՝ և գետս մա
նունս. որք յառաջացեալ գետոն
անկանին. և որք զլինձս առնեն.

Գամփիւլիայ յելից կալով Լիկիոյ.
և առ երի Գաղմատիոյ. ունի
յինքեան աշխարհս փոքունս հինգ.
և լեառն մէկ, գետս երեք. և կղզիս
երկու. և քաղաքս. լինի 'ի սմա
խուղկ Տիւուակիթոյ՝ 'ի փորոյ կե
րածոյ ձինձոյ։

Սօրիայ

Սօրիայ յելից կալով Պամփիւլիոյ․
առ երի ծովուն Հանդէպ Կիպ
րոս կղզւոյ․ և ունի լեառն զՏօրոս․
և գետս զՍփիմագոս․ և է՛ ի նմա մայ
րաքաղաք Սելեւկիա․ և այլք քա
ղաքք քսանեւչորս․ և լինի յաշխար
հիս յայսմիկ խունկ դեւրակոձոպս
Սպուգոմփիտ․ Կաղամբի․ ամենե
քեան 'ի ծառոյ ծորելոյ 'ի ձձոյ
միոյ կերոնածոյ։

Լիկաոնիա յելից կալով Գաղատիոյ
և առ երի Սօրիոյ ունելով զտա
րածումն իւր 'ի դաշտս ընդար
ձակս․ և զնոյն գետ․ և լերինս փո
քունս․ և լիճս երեք։

Կապադօկիայ երկրորդ յելից կա
լով Գաղատիոյ՝ և առ երի Լիկո
նիոյ․ ունելով լերինս մանունս․ և
գետս․ և լայնութի տարածեալ 'ի
դաշտս արձակս։

Հելենոպոնտոս յելից կալով Պա
փլագոնիոյ․ և առ երի Կապա



դոկիոյ

դովկիոյ և ծովու. ունի լերինս փո-
քունս բազումս. և գետս հզօրս.
և Ալիւս. և այլ մանունս:

Կապադովկիայ առաջին յելից կա-
լով երկրորդ Կապադովկիոյ. և
առ երի Պօլիմոնեական Պոնտոսին:
ունի լեառն զԱնտիտօրոս' և այլս
փոքունս. և գետս զՍեղոս և
զԱլիս:

Պոնտոս Պելիմոնեական յելից կա-
լով Լինոպոնտոսի' առ երն Պոն-
տոսի ծովու. ունի լերինս փոքունս
և դժուարավայրս. և գետ զԹեր-
մոնոս. և այլ մանունս:

Կիլիկէ ըստ ինքեան առաջին և
երկրորդ՝ յելից կալով Լիկոնիոյ
և Սորիոյ՝ յերի Կապադովկիոյ առաջ-
նոյ. լեառն ունի զՏօրոս. և գետս
վեց. և մայրաքաղաքս երկու. զՏար-
սոն. և զԱնարզաբայ՝ և այլ քաղաքս
բազումս. և բերդս երեքհարիւր
վաթսուն և հինգ. և դրունս երկու՝
ելա

ելանելոյ ատորեաց· և Կիլիկէ ամենա բեր· Համանգոյն երկրին Յորդանանու։

Կիպրոս կղզի յելից կալով Պամփիւլական Պեղագոսին առ երի Սօրիոյ և Կիլիկիոյ· և ունի Կիպրոս լեառն զՍեմպօս· և գետս երեք· լինի 'ի նմա աղանդանոյն 'ի ցողոյ անկեալ զխոտով կուճի· Թափիչ վարոցս՝ և մօրուս քօշից· և ունի Կիպրոս զսահմանս իւր յերկայն մասունս երեքհարիւր երեսուն մղոն· իսկ 'ի լայնն մասն մի։

Հայք յելից կալով Նիկիոյ առ Տորոս լերամբ· և ունի լերինս երիս· գետս չորս· և դրունս երկուս ելանելոյ Ասորւոց։

Առաջին Հայք յելից կալով առաջնոյ Կապադովկիոյ՝ առ երի երրորդ Հայոց· և սահմանի յելից Եփրատայ՝ և լեառն ունի զԱրգէոս՝ և գետ զԱլիս· և այլ մանունս

Երկրորդ Հայքն են· որք կան յելից Կապադովկիոյ· և երկայն տարածի մինչև ցԵփրատ· և ունի այլ գետս երկու· և լերինս բազումս մեծամեծս քսանևերկու։

Կապադովկայ Պոնտոս Կապադովկիոյ· յելից կա ղով Պօղոմենական Պոնտոսին՝ առ եզերբ ծովուն ՚ի ցամաքական լերինսն· որք բաժանեն ընդ նա, և ընդ Մեծ Հայս։ ունի լերինս երիս· և գետս չորս։

Ր՝հա նկարագրեցան մեծերկրայս
նուէրցեալք։

Սարմատացւոց աշխարհին հատուածն է· որ բաժանեալ է արևելեան ծայրիւն, և Յուպիաւ լերամբ· և Տօնայիս գետով· և Սիոտիս ծովակաւ· և անտի ընդ Կովկասային լերինսն առ Ս րօք և Ր․ զուճանիւք, մինչև ցԿասբից ծովն· և ունի Սարմատիայ լերինս զՀ ւթարինն· և բզ Չիա

Չիակնն․ և զայլ լերինս, եւ գետս բա-
զումս․ զեօթանասնավտակն Աթիլ․
յորում ամբռնայ ազգն Բարսիլաց։
Եւ բնակեն ՚ի Սարմատիայ ազգք
բազումք․ որք են այսոքիկ։ Խազիրք․
Բուլխք․ Բարսեղք․ Ափշեղք․ Ափ-
խազք Թագաւորականն․ Սարմատք․
Չիակերք․ Աւխազմասեանք․ Ող-
լակերք․ Սիւռիկացիք․ Սիւթուրգա-
ցիք․ Ամազունք․ Աղուանք․ Խե-
բուրք․ Բուգետք․ Սկիւթիք։ Ար-
գաւետք․ Սարգոյլք․ Թաակուլք․
Արգողք․ Պաճանք․ Փինչք․ Պոն-
ալք․ Հոնք․ Սափուրք․ Ոսանարք․
յորում Աղուանն դուռն․ և Ոսաքին
դուռն․ Թուշք․ Խուշք․ Բուս-
տրք․ Սարդակերք․ Յիսաւատք․
Պուղդամակարք․ Պոնիճակք․
Պիգայք․ Պէք․ Կատապաստա-
կանք․ Աղուանկանք․ Խենօթք․
Ճիղայք․ Ձիւղայք․ Խեղայք․
Կազրք․ Փուլխք․ Ճռոանք․ Խա-
բանք․ Թաւասպարդք․ Հեճմա-
տակք․

տակք․ Իժմաղ՛ք․ Փաախք․ Կուխա․
Փիքմնաք․ Նայքանք․ Սաղքութք․
մինչև ցԿասբից ծովն․ յորս և բա
զում Կովկասու հայի․ ուր ածեալ
է պարխան Դարբանդայ․ աշտա
րակ ահագին 'ի ծովուն կացեալ․
իսկ 'ի հիւսիսոյ նոր՝ հոնք․ և քա
ղաք նոցա Աստաշան՝ և այլք ընդ
նմա․ և թագաւորն հիւսիսոյ է
Կրականն․ որ է խաղրաց տէր․ և
դշխոյն թագուհի է խաթունն․ որ
է կինն խականայ 'ի Սարսիաց ազ
գէն։

Սողքխաէ այսինքն է Սպեր․ յելից
կալով Պոնտոս ծովու՝ առ երի
Սարմատիոյ․ և ունի Սպեր փոքր
աշխարհս չորս․ զՍնունեղիտ․ զՍ՝ գ
ուրիկէ․ զԿաղիւ․ զԴ՛անիւ․ որք
են Կսաւտիք։ ունի լերինս բա
զումս․ և գետս․ և գաւառս․ և քա
ղաքս՝ և բերդս․ և այլ գիւղաքա
ղաքս՝ և այլ վաճառատեղիս։

Սեւիոյ այսինքն է Վիրք. յերից-
կալով Աշգերայ. առ երի Սար-
մատիոյ՝ առ Կովկասու. մինչեւ ցա-
ղուանից սահման առ կուրգետով
եւ գաւառք են ՚ի Վիրս այսոքիկ.
Կղարջք. Բրոտահան. Հաւշէթ.
Ջաւախ. Սամցխէ. Տձարա.
Թուրգա. Սաթխոխ. Տառնէ-
սախ. Սանկղեաց փոր. Բուճէշ
փոր. Փողնափոր. Թրեղք. Կան-
գարք. Տաշիր. Խաչաւ. եւ Գոճան.
Լախմն. Բոդիթ. Կրիզլս. Կոսխ.
Սածխուռմէթ. Կուռճէթ. Նոր-
ծայ. Խսերկ. Թփանէթ. Կանխախ.
Ցխնաաձմայ. Բաղալէթ. Ոսա-
փան. Բէլթ. Ջէլթ. Սելցխէ.
Բուշէդա. Հալք. Գուռար.
Ոսորբափոր. Ջօրափոր. Խանցիխ.
եւ Քաղաք Վրաց Տփխիս. Համ-
շողդէ. Սնխիթայ. ուր մեր խաչն
է. ունի եւ բերդս՝ եւ գետս՝ եւ ծովս
լի ձկամբք։

Աղբանիոյ. այսինքն Աղուանք յե
ւլից կալով Կ րաց. առ երի Սար
մատիոյ՝ առ Կովկասաւ մինչեւ ց Կաս
բից ծով՝ եւ ց Հայոց սահման առ
Կուր գետով: եւ ունի աղուանք
դաշտս արգաւանդս. եւ գետս բա
զումս, եւ եղեգունս հզօրս. եւ քա
ղաքս՝ եւ բերդս. եւ գաւառք են
այսոքիկ. Կիբուլխ. Բանբիձան.
Հողմաղ. Շաքէդ՝ Լուօռ. Շա
քէ ոստան. Համբասի. Սարծպա
նան. Բաղադաշտ. Խբաղական.
եւ այլք գաւառք. զորս 'ի Հայոց
հանեալ են. Շիկաշէն. Գարդա
ման. Կողթ. Բուստի. Փառնէզ.
Կաղթազուռէ. Ոաւէ. Տուկքա
տակ. Առտռուստակ. Ռոտպայիակ.
Մեծ կափանք. Մեծ իրանք. Պար
ծկանք. Մոխանք. Պիանք. Հարճ
լանք. Վակունիք. Փոքր համանդ
Աստիսականնն. Ռոտաստառի.
Բերձորս. Ստասառուս. մինչեւ ց
խառնումն Երասխայ 'ի Կուր գետ:
Մեծ

Մեծ Հայք յելից կողմ Կապադու-
տովկիոյ և փոքու Հայոց՝ առ
Եփրատ գետով. մերձ 'ի Տօրոս
լեառն, որ բաժանէ զնա 'ի Միջագե-
տաց. և 'ի հարաւոյ սահմանի առ
Ասորեստանիւ. և դառնայ առ
Ատրպատականաւ Է Մարս մինչև
'ի մուտս Երասխայ 'ի Կասբից ծով:
Իսկ ըստ հիւսիսոյ առ երի կողմ
Աղուանից և Վրաց. և Եգերայ՝
մինչև ցնոյն դարձուածն Եփրա-
տայ 'ի հարաւ կոյս: և ունի Հայք
լերինս անուանիս, և գետս մե-
ծամեծս և մանունս, և ծովակս
երեք. Եւ ունի Մեծ Հայք փոքր
աշխարհս տասնևվեց. որք են այ-
սոքիկ:

Առաջին Բարձր Հայք. այսինքն
Կարնոյ կողմն: Չորրորդ Հայք:
Աղձնիք. Տուրուբերան. Մոկք.
Կորճայք. Պարսկահայք. Վասպու-
րականք. Սիւնիք. Արցախ. Փայ

տակարան Ուտիաց · Գուգարք · Տայք · Արարատ ։

Արդ չամբեմ զնոսա մարզպանաճանաչար պատմել. Բայց է առաջա ենէ աշխարհացուցէ 'ի Գիրք եւ 'ի Քարտէս ։

Արդ ունի բարձր Հայք գաւառս ինն Դարանաղի · Աղիւծ · Մնձուր · Եկեղեաց · Մանանաղի, Դերջան · Սպեր · Շաղգոմք · Կարին · և ըստ անուանց՝ արդարև բարձր է Հայք քան զամ երկիր · քանզի ընդ չորս կողմունս արձակէ գետս · ունի և լերինս երեք · և երէս բաղումս · և հաւս պիտանիս, և ջերմուկս, և աղս, և զայլ պարարտութիւն՝ և քաղաք զԿարնոյ · որ է Թէոդուպօլիս ։

Չորրորդ Հայք յերի կայ բարձր Հայոց · և գաւառք են 'ի նմա ութն ։ Խորձէն · Հաշտեանք · Պաղնատուն · Բալահովիտք · Ծոփք · Շադախ · Հանձիթ ։ Գորէք · Դեգիկ ։

գիւղ։ և ունի չորրորդ հայք բերդս. և գետս, և լերինս. և բլուրեղս։ ունի և երէս՝ և հաւս՝ և ձկունս. և'ի գաղանաց զՄուխուծ։

Աղձնիք առ Տիգրիս գետով կայ. գաւառս ունի տասն. զԱրզն. զՆփրկերտ. զԲռեղ. զԿեթէկ. զՏատիկ. զԱզնուաց ձոր. զԽէր հէթս. զԳզեղխ. զՍալնոյ ձոր. զՍասուն։ ունի զնաւթ և զերկաթ. ա ռաւել ես գխթոր. և հաւ զդեղակ։

Տուրուբերան. յերրի կայ չորրորդ հայոց, և գաւառք են 'ի նմա տասնևվեց։ Խոյթ. Ասպականիք. Տարօն. Արշամունիք. Մարդաղի. Դասնաւորք. Տուարածատափ. Դաղառ։ Հարք. Վարաժնունիք. Բզնունիք. Երևարք. Աղիովիտ. Ապահունիք։ Տկորի. Խորխորունիք։ ունի և ծով զԲզնունեաց. յերկայն հարիւր մղոն. և'ի լայնն վաթսուն։

ունի

ունի և զգաղպէ. և զմեղր. և զմաշկամիրգ։ և զապխտակ նաւթ. և զերկաթ։

Մոկք յերկից կալով Աղձնեաց՝ ունի ամուրս Տորոս լերինն. գաւառս ունի ինն. զԻշայր. զՄիւս զԻշայր. և զԻշոց գաւառ. զԱռուէենից ձոր. զՄիջա. զԱնձնակ մոկս. զԱրքայից գաւառ. զԱր գաստովիտ. զՋերմաձոր։ ունի և մրգաց զՀրշակ. և զմանրագոր. և 'ի գազանաց զԿինձ գեղեցկախայտուց. և 'ի հաւուց զԿաքաւ։

գահրա
ղակ

Կորճայք յերկից կայ Մոկաց առ Խորեստանիւ։ և գաւառս ունի տասնևմէկ. զԿորդուս. զԿոդրիս. զՏորոնանս. զՄոդողանս. զՊախրանս. զԿարթունիս. զՃահուկ. զՓոքրաղբակ. և ունի զԱռիկ. և 'ի պտղոց Շագանակ։

Պարսկահայք յելից կայ Կորճէից. և առ Ատրպատականաւ։ Գաւառս ունի ինն. Այլի. որ է Կուճիձան. Մարի՝ Թռակի. Ացուերս. Առնա. Տամբեր. Զարեհաւան. Զարաւանդ. Հեր. և ունի երէ զՅիւ. և զԱյծեամն։

Վասպուրական է՝ ՚ի մտից Պարսկահայոց. և առ եզերբ Կորճէից. Գաւառք են նր երեսուն և եօթն և են այսոքիկ. Ռշտունիք. Տոսբ. Բուդունիք. Արճիշակովիտ. Աղաւիտ. Բառիզակովիտ. Կաղանովիտ. Գառնի. Բաղալխովիտ. առ Բերանի. Բաժունիք. Առնոյոտն. Անձեւացիք. Ատրպատունիք. Երուանդունիք. Մարդաստան. Արտազակէ. Աղբակ մեծ. Անձախաձոր. Թոռնաւան. Ճուաշռոտ. Կրճունիք. Մեհնունիք. Պալունիք. Գուկան. Աղուանդռոտ. Պարսպարունիք. Արտաշիսան.

տան · Արտաւանեան · Բաղքան · Գաբիթեան · Գազրեգէն · Տանկրեայն · Աբաժնունեք · Գողթն գէննեւտ · Նախճաւան · յորում քաղաքն է եւ Սորանդ ։

Սիւնիք յելից կայ Արարատոյ ընդ մէջ Երասխայ եւ Արցախայ · եւ ունի գաւառս երկոտասան · Երնջակ · Ճահուկ · Վայոցձոր · Գեղարքունի · եւ ծովն Սոդք · Աղահէջք · Ծղուկք · Աբանդ · Բաղքձորք · Արեւիք · Սիսական · լինի ՚ի նմա մուրտ · եւ գերբերի · եւ նուռն, եւ ամուր տեղիք ։

Արցախ յերի կայ Սիւնեաց · եւ գաւառք են նր տասնեւերկու · զոր աղուանք ունին ։ միւս Հաբանդ · Վակունիք · Բերդաձոր · մեծ Իրանք · մեծ Կուանք · Հարճլանք · Մուխանք · Պիանք · Պայծկանք · Սիսական · Քուտակ · Քաստիմ ·

տիմ. Փառնէս. Կոլխթ. յորում
լինի քարախունկ։

Փայտակարան յելից կայ Սուտիայ
առ Խորասխա։ գաւառս ունի.
տասնևերկու։ զոր այժմ Տորպա-
տականք ունին։ Հրաքոտ։ Պերոժ։
Սարդանակերտ։ Խօթնփորա-
կեան բագինք։ ունի Սոտքբագայ։
Բաղանուտ։ Տուոս։ Բիժանհան-
հանի։ Տըթըլի։ Բագաւան։ Սպան-
դարանպերոժ։ Որմզդպերոժ։
Տլեան. լինի 'ի նմա Բամբակ ան-
բաւ և Գարի ինքնաբոյս։

Սուտի առ մտի կայ Խորասխայ՝ ընդ-
մէջ Երասխայ և կուր գետոյ։
ունի գաւառս՝ զոր Ազուանք ու-
նին եօթն։ Աթանուտ։ Տուի։
Տոպացեան։ Աղուէ։ Տուչքատակ
Գարդման։ Շ իկաշէն։ Սուտի
առանձնական. յորում Պարտաւ
քաղաք. լինի 'ի նմա Զիթենի,
Սարնկենի. և 'ի հաւուց Կատակ։

Գուգարք 'ի մտից կայ Ուտիոյ. և ունի գաւառս ինն՝ զոր Վիրք ունին. Ձորոց փոր. Ծոբոփոր. Կողբոփոր. Տաշիր. Թռեղք. Կանգարք. Արտահանք. Ջաւախք. Կղարջք. լինի 'ի նմա Անալութ. և հաճարածառ. և Սերգեւիլ՝ և Տօսախ.

Տայք առ երի կայ Գուգարայ՝ ամրոցօք և բերդօք կառուցեալ. և ունի գաւառս ինն. զԿողբ. ըզԲերդաց փոր. և զպարտիզաց փոր. զՃակատս. զԲուխայ. զՈքաղէ. զԱզորդ. զԿաւփոր. և լինի 'ի տայս Թուզ՝ և Նուռն. Աղտոր. Սերկեւիլ. Պողախակ և Նուշ.

Արարատ 'ի մէջ կայ յառաջասացեալ աշխարհացդ. և գաւառք են 'ի նմա քսան. Բասէնք. Գաբեղեանք. Աբեղեանք. Վահագունիք. Արշարունիք. Բագրեւանդ.

Ծաղ

Ծաղկոտն։ Շիրակ։ Վանանդ։
Արագածոտն։ Ճակատք։ Մա
սեացոտն։ Կոգովիտ։ Աշոցք։ Նիգ։
Կոտայք։ Մազազ։ Վարաժնունիք։
Ոստանն դւինայ՝ մինչև ցդաշտն
Շարուր։ Նու ունի Արարատ լե
րինս և դաշտս՝ և զա̃մ պարարտու
թն։ և ծովակն Գայլոտոյ։ և
որդն սխզաբերեալ յարմատոյ առւ
գորդ կարմրութն գունոյ։ և զմայր
եկեղեցեացն, 'ի Թագաւորա բնակ՝
և յարքայանիստ Վաղարշապատ
քաղաքի։

Ահանաստարեցան ա̃մ Հայք։

Ասորիք յելից կալով իւրեանց
ծովուն՝ և Հիւսիսոյ Հրէաստա
նի։ և ունին Ասորիք փոքր աշխարհս
ութն. և լերինս անուանիս զԼի
բանան. և զԿարմեղոս. և գետ Հզօր
զՅորդանան. և քաղաքս բազումս.
և Մայրաքաղաք զԱնտիոք. և ըզ
Դամասկոս. զԿնշրին. զՍամարիայ.

 և

և դրունս երկու. և վայրս ընդար
ձակս՝ և պիտանիս՝ և բարիս։

Հրէաստան յելից կալով Փիւնի
կական Պիղադոսին և սահմանի
Եգիպտոսիւ. և Ապառաժ Արա
բիաւ. և ունի Հրէաստան աշխարհս
երեք. զԳաղիղեայ. զՍամարիայ.
զԵդոմայ. և Լիճս երկու. զՏիբե
րադա և զՄեռեալ ծովն. և զգետ
զՅորդանան. և մայրաքաղաք ըզ
սբն Եմ. և է Հրէաստան քաղց
րաբեր և պտղալից. և է անուշա
հոտ. որ բղխէ զկաթն և զմեղր։

Ապառաժն Արաբիայ յելից կա
լով Եգիպտոսի. և արևմտեան
ծոցի Կարմիր ծովուն. ընդ որ
անցն է Իղլի. յերբ կալով Ասորւոց
և Հրէաստանի. և ունի Արաբիայ
Ապառաժ փոքր աշխարհս հինգ.
զՏաճկաստան. և զՓառանիտիս
ուր զտուն Աբրահամու բաջա
ղէն.

ղէն. և այլևս երեք աշխարհս. և գետս ոչ մի։

Միջագետս յելից կալով Տաւրուց առ Եփրատ գետով. և մտից Տ՚սորեստանի. առ Դիջադ գետովն. յերի կալով մեծ Հայոց. ունի լե րինս երկու. և գետս երկու. և քա ղաքս բազումս. յորոց միննէ Ուռ հայ. ուր անձեռագործ պատկեր փրկչին։

Բաբիլոն յերի կալով Միջագե տաց առ Կղոդաւ. մինչև ց Պարս կային ծոցն. և ունի աշխարհս չորս. զԿողա. զՊասրա. և զԲաբիլոն. զՏիսբոն. և գետս ունի զԵփրա տայ վտակսն. և զԴիկղաթայ. ունի և այլ քաղաքս բազումս՝ և գաւ առս. և լինի 'ի սահմանս այսմիկ ակն Մարդիոն և Ոսկէքար. և է Բասրա ամենայնից վաճառօք, և եկք նաւուց 'ի Հնդկաց և յամ կողմանց յարևելից։

Անապատն Արաբիա յերրի կա-
լով Միջագետաց ընդ հիւսիսոյ.
յելից կալով Ապառաժ Արաբիոյ
և 'ի մտից Խուժաստանի։ և ունի
Արաբիա ազգս ինն. բայց լեառն,
գետ և ոչ մի։

Երջանիկն Արաբիա. յերրի կա-
լով Ապառաժ և Անապատն
Արաբիոյ. մտանէ ընդ մէջ խոր
շից Կարմիր ծովուն որպէս ցամաք
կղզի. և ունի յինքեան ազգ մի.
և գաւառս տասնևչորս. լերինս
տասն. գետս չորս. աղբիւրս մի. և
կղզիս բազումս. և աշխարհ ամենա
բեր և ամենագիւտ. և է որ յիւրմէ
աշխարհէն է. և է որ 'ի վաճառաց ե-
կելոց. 'ի [illegible]'ենից և 'ի Հնդկաց. գտանի
անդ ոսկի և ակունք պատուականք.
խունկք բազումք. և իւղք անու-
շունք. փայտք անփուտք. և անտի
էր Տիկինն Սաբայ. և բնակիչք
աշխարհին ոմանք քաջասկք, և ո-
մանք

մանք սպիտականք. Թխագոյնք քան զմեզ. և խուզք անոյշք 'ի նմա և ծաղիկք տասնևվեց. զՀալէ. Գափու. Մաղապ. Խախակ. Քաեդի. Ախունա. Խալօր. Բուխտակ. Լարդոս. Բալասան. Բան. Յասմիկ. Լարդան. Վարդ. Մանուշակ. Մարզգուշ:

Մարք որք կոչին Բուստիքայ կողմք՝ յերի կալով Հայոց. և առ երի Կասպից ծովուն: ունի աշխարհս զայսոսիկ. զԱտրպատական. զԱնէ. զԳիլան. զՄուկան. զԳիլումն. զԱհմատան. զԳամբվար. զՍպարատան. զԱմլ. Բզ Բոշօշ. զԱմօ՜ան. ունի և լերինս և գետս. և զծովակն որ կոչի Բապօտան. ունի և քաղաքս բազումս. յորոց մինն գանձակ շահաստան:

Արօ՜աստան՝ որք կոչին Աորբէստան. այսինքն Մուծղ. յելից

կալով Միջագետաց՝ առ երի Հայոց։ ունի լերինս և գետս. և քաղաք զՆինուէ։

Ելիմացիք են. որք կոչին Թուս տիխորաստան. յելից կալով Պէկճաղայ. և 'ի մտից Պարսից. և ունին Ելիմացիք աշխարհս փոքունս զայսոսիկ. զԽուժաստան. զՄաժ. զՄասպան. զՄիհրան. զԹրտակ. զԹաշտար. զՊարմական. զՆրամնաստան. զԿարկաւատ. զՆոտարտ. զՇիրական. զՄարծին. զՍրհէն. ունի և քաղաքս հինգս. և գետս չորս. յորոց մինն է Գունդի շապուհ. յորում ազնիւ Շաքարն գործեն. ունի և կղզիս երկու հանդէպ խուր 'ի Պարսկային ծոցին։

Պարսք՝ որք կոչին Թուսատինեմ ուող. յելից կալով Խուժաստանի. և առ երի Արաց. ունի յինքեան փոքր

միւքը աշխարհս քսան. զՊարս. զԽօպահան. զՍէշուն. զՀակար. զԳանայիտ. զԿրման. զԿուրան. զՄակուրան. զՍնդ. զՀնդ. ըզՍրան. զՊէտ վաշտ. զՍագաստան. զԽալաստան. զԳեր. զՍեդ. զՄահիկ. զՍաուն. զԿոճէհրաստան. զՊալհ. զԼըռուհայ. ունի և գետս և քաղաքս բազումս. յորոց մինն է Սեշիր պարհսան քաղաք. յորում աղնիւ Մարգարիտն ելանէ. և Գոհարք մարգարտին՝ այս է. գրակ վեցդանգեան. արժէ քառասունհազար Դուքայ. հինգ հարիւր. միջայիս երեք դանկա. չորս Պարմուշքա. Պարմուշիտ. Հաւթադրամ. Հաշտադրամ. Պահադրամ:

Երկք. որք կոչին Բուստի Խորասան. յերրիկալով Մարաց. և Պարսից, մինչև ցՀնդիկս. և յերրի Սրկանի ծովուն. և աշխարհք են Խորաց

այսա

այսոքիկ. Կոմշ. Վրկան. Ապրշահր. Սրում. Արոճաստ. Հրեւկատե շան. Տասխմանակ. Իժնիւ. Վաղ կան. Պովկան. Անապլհ. Հրում. ղԱմբիւրոս. Տախձեր. Պողին. Աւազակ. Վարջան. Սանսան. Ք ակստան. Բահղ. որք են Պար թեւք. Պովմատ. Էարիմանակ. Չ ի րի. Բարիկան. Պովբոն։ եւ ունի արիք. լերինս եւ գետս եւ կղզիս բա զումս. լինի հրամուշկ. թէպէտ եւ ոչ ազնիւ. եւ կղզի մի է հանդէպ Արեւաց 'ի հնդկաց ծովուն. յո րում Թզուկք, լինին երէք թզեան հասակաւ. որք եւ պատերազմին ընդ խորթոց հաւուց վն̄ ձարակե լոյ նոցա զանդաստանս Թզկաց։

Սկիւթիա՝ որք են Ապախտարք. այսինքն Թուրք. որք սկսանին Էթիլ գետոյ մինչեւ ցԻմաւօն լեառն. եւ անդր ձգի մինչեւ ցՉ՛ենաս եւ Իմաւօն է լեառն բարձր եւ եր կայն

կայն քան զծմ լերինս. և ունի Եգիթիա ազգս քառասունեչորս։ Սօգիք. Թուխարիք. Հեպթաղք. և այլք Խուժադուժք անուանք։ և ունի Եգիթիա լերինս. և գետս բազումս և հզօրս. և դաշտս անապատս. և ջերմ երկիր և անջուր. և է 'ի նմա հրագոյն դաշտ. և են Սօգիք հարուստք և արուեստաւորք. վաճառականք, որք բնակեալք են ի մէջ Թուրքաստանի և Արեաց աշխարհին։

Հնդկաստան յելից կալով Արեաց աշխարհին. և առ երի Եգիւթացւոցն. և է Հնդիկք բաժանեալ յերկուս աշխարհս. զորս բաժանէ Կանգէս գետ. որ է Փիսոն. և արևմտեան կողմն ունի ազգս յիսուն և հինգ. իսկ արևելեանն եօթանասուն և երկու. ոմանք Մարդակերք են. և ոմանք Սայրենակերք. ոմանք Ագևորք. և այլք Կարճահասակք,

տակք, Հափակողբիթք․ լայներեսք․
Ոպխտակք ։ և ոմանք Մերկք
իմաստակք․ որք գործս անիրաւու-
թե ոչ գործեն․ և զմօրմինս կեն-
դանեաց ոչ ուտեն․ ունին Հըն-
դիկք լերինս, և գետս, և կղզիս
քաղաքս․ լինի 'ի Հնդիկս երէ
Համօրանման սրեղջեր․ որ սպանա-
նէ զԱռիւծ․ և Հրէշ էրէ․ և այլ
գազան նման Առիւծու՝ բայց կըն-
ճիթն նուրբ է և երկայն․ և Ինձ
ուղտք՝ և Կորեանք․ և Կապիկք․ և
Աքաղաղք փետրամօրուսք․ և
Փիղք․ և Վագերք․ և Վիշապք․
մեծ Մրջմունք․ և Մրջմնառիւծք․
և Մկունք․ Իէշկ մշկոյ․ և Կո-
կորդիլ գազան․ և Միեղջերու․
որ է մեծ քան զամ գազանս․ և
խլերայ ողլինն ձանք․ և զՓիղն լե-
զուռոյն Սպանանէ․ և Պասկու Ճ-
ճաւ․ և Մուշկ էրէ․ և Նչ եղջե-
րաւոր։ լինի անդ Ոսկի․ Արծաթ․
Պղինձ․ Անագ․ Մարգարիտ․ և

ակն

ակն ամենագօհար · լինի և պղն-
ձին · և անգրունէձ · և մմ Բոզա-
ձառք : Հալունէս · Փաղանգամուշկ ·
Քաֆուր · Ճ անդան · Նայլբու-
ակ · Հըրբուճակ · Պաղերբուճակ ·
Պուլբուճակ · Կասխմոն · Պուզա-
ղակ · Շ ահաւոր · Մարդարիշար ·
և քաղզումք գեղք բժշկականք · և
գուհարք հալունէից չորս, Ինգրէ :
Սանդր · Բոտարազ · Վեռուաւոր ·
Օսակոսկէն · լիտրն արժէ եօթն
դահեկան · Օսամփխմարխայ · Նմանն
է Օսանր · լիտրն արժէ չորս դա
հեկան : Բոզակ · չէկ է և թե
թև · և արժէ լիտրն չորս դահե
կան :

Տապուրբանխա է մեծ կղզի · քան
զմմ կղզի · հազարևհարիւր
մղոն երկայն է · հինգհարիւրևտասն
՚ի լայնն, յեւլից կա՚ղով · և ունի այլ
կղզիս շուրջ զիւրեաւ մանունս ·
հազար երեքհարիւր եօթանասուն

և եր

ևերկու. ունի և լերինս՝ և գետս՝ և
ազգս տասնևերկու. լինի 'ի նմա
Ոսկի և Արծաթ և Ակունք պատու-
ականք, և Մուլիճայք. փիղք և Ս[illegible]
գերք. և արք աշխարհին վարսիւք
կնոջ պաճեն զգլուխս իւրեանց.
աստ ասեն զանկումն աստուածայնի:

Չենաստան յԷւլից կողով սկիւ-
Թիոյ մինչև յանծանօթ երկիր.
և է Չենաստան ընդարձակ դաշտ
տարածեալ և են՝ 'ի նմա ազգք քան
եւթն. յորոց մինն մարդակերք:
Նաև ունի Չենք լերինս՝ և գետս
բազումս. լինի 'ի Չենաց աշխար
հին Պարիչենիկ. և հոշտբուակ. և
բուլի չենիկ. և կասխմոն. և սրիկոն.
ունի և հրէշ՝ և մուշկ. և սիրամարգ
շատ. քրքում անբաւ. ապրիշում
շատ և ազնիւ. մն որոյ և բնակիչքն
արուեստաւորք՝ կերպասագործք.
հարուստք՝ ընչեղք. որոց արքայն
կոչի Չենբակուր. որ նստի 'ի քա

զպքէն սխուռխոյ առ անծանօթ երկրաւ։

Մենեացուոցն առ երբ կալով Ղ՛ենաց մինչև ցանծանօթ երկիր․ յորում բնակեալք են ազգք եօթն։ ունի լերինս՝ և գետս բազումս․ բայց անտի յանծանօթ երկիրն՝ որ ինչ պատմի անհաւատալի է։ գազանք անծանօթք մարդակերպք կիսանձնեայք․ երդկիմիք՝ վեց ձեռնիք՝ փոկոտունք՝ վիշապատունք՝ կիսահաւք՝ կիսանդամք՝ անգլուխք։

Ր․ Հայկազարբենեան տմ որեւելերն՝ և պարս ծարենի խօսից։

Ր․ Հա կամիմ ղչափ աշխարհիս համառօտել մղոնախաղաց ոտնաչափութիւն ուղղեկաբար․ առ պարզաձեմ գրութիւն։

Դ․ գոռնայ մղոն երկուհարիւր՝ ի կարնոյ քաղաք։

Անտի մղոն հարիւրևքսան 'ի փոս աշխարհն Հայոց և Յունաց։

Անտի մղոն իննսուն 'ի Կոմոնիոյ բերդն։

Անտի մղոն հարիւր 'ի Նիկեսար։

Անտի մղոն ութսուն յԱմասիայ։

Անտի մղոն հարիւրևերեսուն 'ի Գանգրայ։

Անտի մղոն ութսուն յԱնկիւրիայ։

Անտի մղոն երեքհարիւր քսան 'ի Կոստանդինուպօլիս։

Անտի մղոն վեց հազար 'ի Հռոմ։ 'ի Վերոնայ մղոն հարիւրևեօթանասուն 'ի Խլաթ։

Անտի մղոն ութսուն 'ի Բրիժիմար։

Անտի մղոն հարիւրևութսուն 'ի յԱուհայ։

Անտի մղոն քառասուն յԵփրատ գետ։

Անտի

Ընտի մղոն հարիւրեւյիսուն յԱմասիայ։

Ընտի մղոն հարիւր ՚ի Դամասկոս։

Ընտի մղոն իննսուն ՚ի Թաբօր լեառն։

Ընտի մղոն հարիւր ՚ի քաղաքն յԻջեմ։

՚ի Դուռնայ մղոն վաթսուն ՚ի Բերդկունան։

Ընտի մղոն հարիւրեւվաթսուն ՚ի Պարտաւ։

Ընտի մղոն իննսուն ՚ի Ծովն Կասպից։

՚ի Դուռնայ մղոն եօթանասուն ՚ի Նախչուան։

Ընտի մղոն հարիւրեւքսան ՚ի Գանձակ Շահաստան։

Ընտի մղոն երեքհարիւր եւ եօթանասուն ՚ի Տապոն։

Ընտի մղոն եօթանասուն ՚ի Յակողոն։

Ընտի մղոն հարիւրեւքառասուն ՚ի Պասրայ։

Աստի մղոն քսան ՚ի ծովէն Պարսկային։

Դարձեալ ՚ի Գանձակայ մղոն հարիւր ՚ի Նինուէ։

Աստի մղոն հարիւրեւյիսուն Յուռհայ։

՚ի Դոռնայ մղոն յիսուն ՚ի Կողբ։

Աստի մղոն հարիւրեւհինգ ՚ի Կոտ գեղ։

Աստի մղոն հարիւրեւքառասուն ՚ի Տպխիս։

Աստի մղոն եօթանասուն ՚ի Ջունարկերտ։

Աստի մղոն հարիւր ՚ի Պարտայ։

Դարձեալ է յԱնէմ մղոն հինգ հարիւր յԱղէքսանդրիայ։

Աստի մղոն հազար ՚ի Պենտապօլիս։

Աստի մղոն երեքհարիւր ՚ի Տրապօլիս։

Աստի մղոն հազարեւերեսուն յԱփրիկայ։

Աստի մղոն իննհարիւր ՚ի Սեպտէ։

Աստի

Ընդ ի մղոն հազար յԱլկկիանոս ծովն անծանօթ։

## Չորս Գետքն Են։

Փիսոն 'ի Հնդկաց և յԵթեօպաց՝ Գանգէս կոչի. իսկ Յոյնք Հնդկաց գետ ասեն, եղանէ յԵմաւօն լեռնէ՝ և զմեծ երկիրն Աւելատայ շրջապատէ. այսինքն զփոքր Եթեօպիայ և զմեծ. և զկողմանս Եղեմացւոց. և յանցանելն ընդ մեծն Եթեօպիոյ՝ իջանէ ընդ հարաւ յարեւմուտս 'ի ներքոյ Գանդիրայ՝ յԱլկկիանոս ծովն։

Գեհոն յԵթեօպիոյ փոքունէ իջանէ 'ի Տոբացիսն. և ընդ Նոպէ միտացիսն՝ և Յօքոմետիս. և ոռոգանէ զԵթեօպիայ. և յԵգիպտացւոց ծովն մխանէ՝ ըստ Երեմիայի։ զի՞ կայ քո և երկրին Եգիպտացւոց ըմպել զջուր 'ի Գեհոն գետոյ 'ի պղտորելոյ։

Տիգրիս 'ի Կորդուաց լերանց ելանէ. և գնայ ընդ կողմանս Ասորեստանեայց. քանզի՝ ձևէ զկողմանս արևելից. ընկղմի յերկիր՝ և ելանէ 'ի Կորդիս. և Հայք 'ի միջի մնայ:

Եփրատ նոյնպէս ելանէ 'ի դրախտէն. մտանէ ընդ երկրաւ. և ելանէ 'ի Հայք, 'ի Բագրևանդայ և 'ի Կարնոյ լերանց. մօտ 'ի յարծն քաղաք:

Գետք. եւ գնացք նոցա Մեծ եւ անուանք: [illegible]:

Աբանայ և Փարփար՝ 'ի Դամասկոս ելանեն, և անցանեն ընդ Դաժան քաղաք՝ և անկանին 'ի ծովն Արաբացւոց:

Յորդանան երկու ակունք են, իջանեն 'ի Սանիրայ և 'ի Հերմոն լերանց. և միաւորեալ անկանին 'ի ծովն Արաբացւոց:

[illegible]

Տօ

Տօնաւիս՝ 'ի Պաղպաքայ ելանէ, և անցանի ընդ Տիւրոս և ընդ Սիդոն. և անկանի 'ի ծովն Արաբացւոց մերձ Յիանիկուրոն:

Տիգրիս՝ ելանէ 'ի Կօրդուաց լերանց և անցանի ընդ Մօսլ՝ և 'ի Թրակխայ. և Հերձակոտոր առնէ զաշխարհն Մեսոպոտամեաց՝ և անկանի 'ի ծովն Հնդկաց՝ անդ քան զԱլինիկօրոն:

Արածանի 'ի Հայոց ելանէ 'ի Միլլէրկրացն. և միաւորի ընդ Եփրատայ:

Եփրատ՝ 'ի կարնոյ ելանէ՝ և անցանէ ընդ Խաղտոաճ. բանայ զԵկեղեաց՝ գայ 'ի Սամուսատ. իջանէ 'ի Ղուրեպխան. և անցանէ ընդ Կաւայ. և գնայ 'ի Բաբիլօն. միաւորի ընդ Տիգրիսի. բաժանի 'ի Բասրայ. և անկանի 'ի ծով: Բասրայ

Գեհոն ի դրախտէն ելանէ՝ և անցանէ ընդ սահմանաւն Հնդկաց՝ և անցանի 'ի Սլուան. և անկա

 նի

նի 'ի Մողոնիայ. իջանէ յԱրգելպ
տոս. և անցանի 'ի լոյս՝ որ Թարգ-
մանի արևակաբուղխ. և մտանէ 'ի
ծովն Հարաւոյ։

Աքսիոս՝ և Փիսօն՝ 'ի դրախտէն
ելանեն. և կոչեն նմա Հնդիկէս
գետ. և Եթէօպացիք՝ Գանգէս
գետ. և Զօտին ծովակ հատանէ.
ընդ Ախփիննատէս քաղաք անցա
նի՝ և ընդ Սիբիննատէս անցանի՝ և
անկանի 'ի ծովն Աղտոսիկայ։

Թևեամիս գետ՝ 'ի Բաղոնայ ելա
նէ. և ընդ մըսր՝ և ընդ Բաբիլօն
անցանի. և ձգի 'ի Գանդգիրոն
'ի ծովն Հարաւոյ։

Արտակածլիս գետ 'ի Սարմարի
տէս քաղաքէ ելանէ. նա ոչ ունի
կերպարանս գետոյ՝ այլ ծովու նմա
նակ է. զի տասն վտաւան է խո
րութի նորա՝ և եօթն վտաւան լայ
նութի նորա՝ և ընդ Բիւրիտոն ան
ցանի մերձ յԵթէօպիայ՝ և անկանի
'ի ծովն Հարաւոյ։

Տուռէմ՝ և Հեղինիկոս արքայ՝
'ի պարսից 'ի Բակտրիոնայ եղանեն.
և անցանեն ընդ Ամուրիայն՝ և ան
կանին 'ի ծովն Կասբից:

Գանդէս և Խշլիմոս գետք. որոց
խորութիւն մինչև յանդունդս է՝ և
Բաղ ծառացեալ մինչև յերկինս.
և լայնութի նորա երեսուն մղոն.
անցանի ընդ Ո'ենաս քաղաք. եր
թայ 'ի Սապուապիոն 'ի Սապու՝ և
Յակեսպոն. անցանի 'ի խորին
Հնդիկս՝ մերձ 'ի խոթէբասսոն՝ 'ի
Համազունան՝ որ թարգմանի կա
նանց աշխարհ՝ մօտ յանծանօթ եր
կիրն. և անկանին 'ի Հեռամիտոն
ծովն:

Ակոն՝ և Հինէս՝ և Բերմիս
տէս՝ տղքա երեքեանս 'ի մի 'ի Հիւ
սիսային լերանց եղանեն. և Օպաս՝
'ի մօրեաց 'ի վայր իջանեն՝ և ընդ
միմեանս խառնեալ ընդ աշխարհն
Ադոնանից՝ անցանեն մերձ 'ի Լի
կէթ՝ և անկանեն 'ի ծովն Ապրապա
տիկոս:

Տարտարիկոս՝ և Մորկատոս՝ Պատ
կերոս՝ և Օքոս։ Սոքա չորեքեանս
յարևմտից իջանեն՝ ՚ի Պերիմոս լեռա
նէ․ որ կոչի այրեցեալ գօտի արե
գականն՝ և անցանեն ընդ Լիկոն
և ընդ Սպանիայ․ մերձ ՚ի Տրիխո
րոն՝ և անկանին ՚ի ծովն երեկոյին։
Նրմասխ՝ ՚ի Տրասինոու եղանէ․ Սէ
ծամօրն՝ ՚ի դուռնայ եղանէ․ Կուր
գետ յակուռն եղանէ․ Ջօրօխ
գետ՝ ՚ի Սենխաց եղանէ․ Հուրաս
տան գետ՝ Գեղարքունաց եղանէ․
Գլինէ գոյն գետ՝ յՆխուայ եղանէ։
Սոքա ամենեքեան ընթանան և յե
րասխ խառնին ՚ի Նախչուան՝ և ՚ի
Սօրանդ ՚ի Շարուանդ՝ ՚ի Թաւու
րէշ․ ՚ի Պարատխխտուս․ ՚ի Սա
գաստան․ յԱպլաստան․ ՚ի Տուանս․
՚ի Մատուրան․ ՚ի Սամուրան․
՚ի Գիլմաստան․ ՚ի Գարական․
՚ի Փայտակարան․ և անկանին՝
՚ի ծովն երեկորին՝ արևմտից երե
կոյին։

Բազ

Ռոպղիկէս՝ և Ռլիո՝ 'ի Սեբաստ տիոյ եղանեն՝ և ընդ Պամրաց աշխարհն անցանեն՝ և երթան մերձ 'ի Նիկոմիդայ.քաղաք յարևմուտս կոյս. և ոլորի ընդ հիւսիսային կողմանն. և անկանի 'ի ծովն Պոնտոս:

Օխաառուիկոն գետ՝ յԱկոնիոն գաւառէ եղանէ՝ և ընդ Տրապօլիս երթայ 'ի Լիդիայ՝ մերձ 'ի Հելլէնս. և անկանի 'ի ծովն Բուղան:

Կաւլոս՝ և Լուկապրիա՝ գետն՝ 'ի Սոնտայ եղանեն՝ և ընդ Թրակէս անցանեն. մերձ 'ի Սառունիայ. և անկանին 'ի ծովն Ափեսացւոց:

Դանուբիկ՝ որ ընդ հոսէ եղանէ. և Տօնաւիս Մակեդոնացւոց՝ և գան յանդիման արևելից մինչև յաշխարհն Բուլղրաց՝ և առ Պօվօրն. և Աստուալիան. և Աստագաւալիծն. և անցանի յաշխարհն Գեթաց՝ և մտանէ 'ի ծովն Բասղաց:

Տիբե

Տիբերիոս գետ՝ ելանէ 'ի Կապուտ լերանց Հիւսիսոյ՝ և անցանէ ընդ մէջ Հռոմայ՝ և անկանի յԻտաղիայ. և մտանէ 'ի ծովն արևմտից:

Սկամանդրոս գետ՝ 'ի Փռանկաց ելանէ. և ծակամուտ լինի մասն մերձ 'ի Տապրիկ. և 'ի Սրիկանիք. և մտանէ 'ի ծովն երեկորի արևմտից:

Տանայիս՝ և Պօնտոս՝ և Հեղինապօնտոս յանծանօթ երկրէն ելանեն. և ընդ անմարդ անապատ անցանեն ընդ Բարանձաւս. և ընդ Բներդուկս. ընդ Խուխունս. և ընդ Բարաքիթս 'ի վայր վայթէն. և անկանին 'ի ծովն Համատարած. որ է ակն ծովուց. և պատէ զչորեք ծագեան աշխարհս մեր. Ընդ մեր միահամուռն. են գետք քառասուն և երկու՝ մեծամեծք. որք ելանեն 'ի ծովէ՝ և չորս 'ի դրախտէն ելանեն՝ շրջելն ընդ աշխարհս մեր. և դարձեալ մտանեն անդրէն առ

ծնօղն

ծնօղն և մայրն իւրեանց համատա
րած ծովն ։

Սքանչելագործ արարչին ամե
փառք ։

## Նշանաւոր Քաղաքացն Հնդկաց և Պարսից ։

Գանխան քաղաք՝ ուր թաւուրց ճա
նապարհ ընդ ցամաք պիտոյէ
ընթանալ․ Գանխանու գաւառքն
Հնդիկք են․ բայց՚ի Խաղնոյթեան
խօսի․ զի՚ի վաղնջուց հաւանեցու
ցեալ է պարսիկն և առեալ․ այլ երկ
րին բնակիչքն Հնդիկք են ։

Տիգնաւոյ քաղաքն է մեծ՝ և
ենքն՚ի Խզնոյ խօսի՝ և երկրին բնա
կօղքն Հնդիկք են․ կան և ազգ մի
պարսիկք՝ վէց աւուրքան զԽաղ
նիայ՚ի վայր է ։

Պոյստ քաղաք է մեծ՝ մեծա
գանձ և մեծահարկ․ և ունի զթէմ
ընդարձակ․ և ճանապարհ չորից
աւուրց է՚ի Տիգնաւէ՚ի Բոստ՝ և

այս

այս երկրիս բնակիչքն Հնդիկք են և 'ի Սպանի խօսին:

Պուրշյուր մեծաշահ քաղաք՝ և Թեմ ընդարձակ. ելանէ յիւրմէ շատ Լեղակ. և Հինա տղէկ. 'ի Սպանիոյ 'ի Պուրշյուր տասնև հինգ աւուր Ճանապարհ է:

Բռապուլէ՝ է քաղաք մեծ և մեծաշահ և մեծահարկ. ելանէ յիւրմէ Հելլիճ և Բռապուլի. և այլ օգտակար դեղք. քառասուն փարսախ է 'ի Պուրշյուրէ մինչև 'ի Տիգնաւէ:

Լահուր քաղաք է մեծ՝ և մեծագանձ աշխարհ՝ և երկիր ընդարձակ. գեղեր ունի չորսհարիւրհազար: Ահմուտ սուլտանն է գլութեանքն հարկատու արարեր՝ և հաւանեցուցեր. են այլք վեցհազիւր. է մեծաշնորհ քաղաք. և որինչ յամ երկիր պատուական և հարկաւոր իրք լինին՝ ամենն 'ի քաղաքին գտանի. զի անդ բերեալ ծախեն

խէն վաճառականքն ․ և նմ վաճա ռականքն անտի քաղէն զնմ ինչ զի իւր ճանապարհին է քաղաքն և թագաւոր է մեծազօր ։

Խշմիր քաղաք մեծ է ․ և գաւառս ունի հարուստ՝ և մեծաշահս ․ 'ի Լահօրէն քառասուն օրն երթան 'ի Խշմիր ․ մուշկնի իփալի ասէն ցած մուշ.ք է ․ նա անդ շատ գտանի ․ երանէ Սնփուլ ․ և Խարափուլ ․ և այլ որ ինչ պիտոյ է մարդոյ՝ դեղեր մարդկան համար ․ քաղաքն լեռն է և մորի և կապննի ։

Պանկլար՝ քաղաք է մեծ՝ և բնակիչ.ք քաղաքին հնդիկ.ք հարուստք՝ և մեծաշահ.ք ․ և մայրին ինքեան մօտ է ․ և մայրուոյն փայտն ամէնն ծխանելի է ․ և բնակիչ.ք երկրին գտանեն ղաղէկ ծխանելին 'ի ցէխան թաղած ։ իւրեանց թագաւորն ութն հազար փիղս ունի ։ մեծ թագաւոր է և հարուստ՝ և նմ պատուականն իր գտանի 'ի յիւր քաղաքն ։

'ի Խշմի

'ի Խշմիրայէ երեսուն աւուր ճանապարհ է մինչև 'ի Պանկլար. երբ մարդ այլ ճանփով 'ի Նահրուալայ կամի գնալ. քսանևհինգ օրն երթայ 'ի Սուլթան քաղաք։

Նահրուալայ և Սուլթան՝ քաղաքք են մեծամեծք և մեծաշահք. ունին ընդարձակ գաւառս՝ և գեօղս երեքհազարս. և 'ի խաղնի խօսին՝ և բնակիչք երկրին հնդիկք են։

Սելուլ քաղաք է մեծ՝ և մեծագանձ. քառասուն աւուր ճանապարհ է 'ի Տեպուլայ 'ի Սնդիկ. քաղաք է Տեպուլ՝ և մայրեքն դժո՞ար՝ և ճանապարհքն՝ և Կապաննի՝ և լերինք. և իվ՞ր փոքր Ո՛ելուլ գետոյն է շինեալ Սելուլ քաղաք. բայց 'ի Նահրուալայ թեմն խօսի։

Սումնաթ՝ քաղաք է հնդիկ՝ 'ի ծով եզերին հնդկաց՝ և է բազմագանձ քաղաք և մեծաշահ. հնդ

կաց հաճիւքն 'ի հօն գան յուխտ. եւ
ցեանց երիցանց և ալոկերոյն Բահ
րամայ կոչեն. ամէն քաղաքն նք̃են:
'ի Սօմնաթայ շատ գողեր եղանեն
նաւուլ. և եվր̃ ծովու շատ ծեծ
առնեն. և 'ի Նահրոճալայ խօսին:
Պորաստ քաղաքէ փոքր և ծով
եզեր. և մօտ է 'ի Նահրոճալայ:
Բամպաթ քաղաք է 'ի ծովե
զեր. և մերձ է 'ի պորաստ քաղաք:
Պուրճ քաղաք է ծովեզեր՝ և
Նահրոճալայ խօսին. և մերձ է 'ի
Բամպաթ. և երկու աւուր ճա
նապարհ հեռի են 'ի միմեանց:
'ի Պուրճ քաղաքն յամէն չորս
տարի Ս̃ծ մի պաշտեն. և 'ի յաւար
տել չորս ամին, փոխեն. նք̃ բարբան
ջեն թէ ջրհեղեղնաւ մեզ չէ եկել:
Սայոլ մեծ քաղաք է՝ և ծովե
զեր է՝ և մեծ աշահ. շատ շաքար և
շատ լեղակ եղանէ յիւրմէ. և շատ
պատոճական իրք գտանին անդ:
'ի Պուրճ քաղաքէ երթայ մարդ

’ի Գողմուտրայ . և անտի երթայ ճանապարհորդն ’ի Պլոտրայ:

Պլոտրայ քաղաք է ծովեզերի . մեծ , և մեծաշահ՝ և բազմագանձ . այս քաղաքնիս Լահրուճալայ խօսին . հարիւրհազար գեօղ ունի այս քաղաքս . և ամէնն շուրջ ծովեզերումն շինած . այս քաղաքքս և իւրն վաճառականն նաւերն ընդ ծմ երկարութեն ծովու վաճառում ընթանան . Այս քաղաքնիս և այս գեղերն երկու հարիւրհազար շաքմի են . և հնդիկ լեզուաւ են . և ամէնն շաքմի խօսին :

Մնեպարն քաղաք է մեծ . մեծագանձ՝ և մեծաշահ , և առաջին քաղաք: ’ի Մնեպարէ երթայ ճանապարհորդն ’ի Տարաւի՝ որ է մեծ քաղաք . աստի երթայ ’ի Սուֆրայ . ’ի Սուփրայէ երթայ ’ի Թանայ . անտի ’ի Փունաւէ . և ’ի Փունաւոյ ’ի Սանդապուր՝ ուր շատ պղպեղն լինի՝

նի՝ և այլ պիտանի համեմունք. և ամէն Քաղաքնիս հետ նրաց են :

’ի Սանդապուրէն երթայ ձանապարհորդն ’ի Պանքուր. քաղաք. և անտի ’ի Պանկլուր. և անտի ’ի Յեպն պնիթոն. և անտի ’ի Ջ լեայ. և անտի ’ի Փանդրիանէ. և անտի ’ի Շ ենկլ. ’ի Շ ենկլի շատ Քրիստո նեայք կան՝ և շատ եկեղեցիք. և ամէնն Մելէպան գաւառի խօ սին. Չոլիանդ անուն է թեմին. ’ի յայս թեմս է որ առաքեալն Թովմա վկայեալ. թեմին առաջին քաղաք

Պլինձ՝ մեծ և մեծաշահ. ’ի Պլինձու երթայ ձանապարհորդն ’ի Պնիպոթին ’ի տասն օրն. անտի ’ի Խուտոյն քաղաք օր մի. անտի ’ի Նախէպոթին օր մի :

Նախէպոթին քաղաք է մեծ. շատ եկեղեցիս և շատ Քրիստո նեայս ունի ընդ ինքեամբ. և ամ քաղաքնիս ծովեզերք են :

’ի Նախէպոթոյն երթայ երկու

օրն 'ի Ռահպաթին. անտի երթայ
'ի մջ Առաքելոյ գերեզմանն. և
ասեն անուն քաղաքին Սալապ.
ծովեզեր է քաղաքն. և մնացեալ է
յինքն սակաւ մի քրիստոնեայ: 'ի
Սալպայէ երթայ մարդ 'ի Զուծր.
Այս քաղաք է մեծ՝ և մեծագանձ
և մեծաշահ. 'ի Սհլապ քաղաք ուր
մջ առաքելոյն գերեզմանն է Թու
մայի. աղբիւրքն ամէնն տղրուկ
եռացուցանեն. բայց միայն յայն
աղբերէն. որ մերձ է 'ի գերեզմանն
Թումայի. Այն աղբեր ջուրն յիս
տակէ և բարեհամ. և մջ է 'ի տղըր
կէ. այս ամ քաղաքս Զոլխան կոչի:

Սելան կղզի՝ հնդիկ անուամբ է.
և Սառնտիպ՝ տաճիկ անուամբ. 'ի յայս կղզիս ասեն հնդիկք՝
թէ երբ եհան Ած զադամ 'ի
դրախտէն. նա աստ բնակեցոյց.
պատուական գօհար ելանէ յայն
կղզոյն. և կարմիր Յակունդ բա
զում.

զուռ· և այն որոյ անուն հնդկերէն Կատուխ· իսկ տաճկերէն Անիլ լիհօռ: և այլ այն ելանէ· զոր պարսկերէն անուն Չաշմիգուրդոյ· և այլ այն ելանէ որոյ անուանն է Սրկէ· իւր գոյնն կապուտ լինի· և անուանեն Հնդիկք՝ Նիլաէ· և այլ այն ելանէ դեղին· Պոյտրոյ անուն իւրն· և կարմիր Յակունդ ելանէ· որ քան զա՟մ յակունս և յակունդս հարկաւոր է և մեծագին· և այլ պատուական իր՝ որ Թագաւորաց անգ. է:

Ոսկէ գետոյն գաւառն Աեմինզար անուն իւրն· զի բաղում ոսկի ելանէ յիւրմէն՝ քանի աշխատիլ ոք կարէ· և Ոսկէգետոնին են անուանքս այս:

Առաջին քաղաք և կղզին՝ Դամրին· աստի ելանէ շատ Որդն· փայտ Պկամ· և այլ պատուականք իրք· աստի երթայ մարդ՝ ի Պարշուր· այն քաղաք է և կղզի մեծաշահ· պա

տուակն Բափուրն անուն եղանէ. ՚ի Յամբրու մօտ կղզի կայ՝ զանուն Բրուտ ասեն. Ջնէր Թեթեւագլին անուն եղանէ՝ և անդ կաղմի։

Բրուդայի քաղաք է մեծ. և մերձ՚ի նա կղզի մի է Սամաւի ասեն. մեծադիր, և մեծաշահ. և իւրներքոյ այլ կղզի կայ՝ որ կոչի Պուրէ. և զամ պատուական իր՝ զորինչ ուզէ մարդն գտանէ ՚ի կղզոջն։ և իւրներքոյ, Նփանէս կղզի. ՚ի յայն կղզոյն եղանէ բազում Բափուր. և՚ի ներքոյ Պլայոյ է թագաւորն Ոսկէ գետանին. ՚ի Պլայոյ կղզին նստի Օապխձաց թագաւորն. երբ իւր հայրն մեռանի կամ մայրն. փոխան ծնողացն՚ի չափս նոցին կուռս շինէ Ոսկի. սոցա ազգքն կռապաշտք են. և չեն Հնդիկք. սոքա Օապէձ կոչին. և միս մեռելոտի զօր գտանեն, ուտեն. և զխուրեանց մեռեալս, և զայլ սահմանաց մարդ, զորս կալնուլ կարեն. որս համարին։

Նոյ յորժամն է այլ ազգի կուռնին,
և յաղթեն. զորոյ կոտորեալսն զոր
խուրճ է՝ և զոր թշնամեացն՝ զամենն
ուտեն. բայց փախստականին և ձանա
պարհորդի ոչ մեղանչեն. զի խուրճ
ապուրն ՚ի փախստականաց լինի։

Սամբի կղզի է. և իւր ներքոյ
այլ կղզի կայ՝ Բաղաքփինչի ասեն.
մերձ ՚ի սա կղզի մի այլ. յայս կղզիս
ելանէ կլայեկ շատ. և ամ պատուա
կան իր հօն գտանի. հանց որ թա
գաւորաց վայելէ. և մերձ այս կող
զիս է Յալա. և Բալա. և Կակուլէ։

Նայս է Սակէդետնի քաղաքն,
և կղզիքն, և գաւառքն. և ազգքն
որք բնակեալ են Օ ապէձ լեզու են.

Չին և Մաչին երեք հազար և ութ
հարիւր քաղաքք են՝ և բազմաբա
րեք գաւառք. ամենն կռապաշտք են.
և երկիրն ցամաք է. բայց չեն հաւա
նիլ ոչոր ազգի. զի իւր թագաւորն
բազում և գազանաբարոյ հեծեալս
ունի. և սիրեն զքրիստոնեայսն. և

լաւ

լաւ ընդունելին՝ յԱղէքսանդր Թա-
գաւորէն 'ի վեր. զի 'ի նմանէ շատ
աղէկ են գտեալ և ազատութի. և
զՀոռոմս խիստ սիրեն:

Նու այն տերեն զոր Հնդիկք ու-
տեն. զխեր անունն Թմբուլ ասեն.
ճուրեանց նուղլ և ապուր այն է. և
առողջութի տայ. և մեծրիկ է և
կարմիր՝ և անունն Ջուձր ասեն:
և Սոզան ծառոյն ասեն. որ խուր
տերեն Հինգ կանգուն է. ասեն
բնակիչքն, Թէ նր տերևովն ծած-
կեցաւ Ադամ, յորժամ 'ի դրախ-
տէն ելաւ: Հնդիկք երիցանցն
բահրամնայ կոչեն. և կուոցն դև:

Ամլ քաղաք է 'ի Թուրքաս-
տան. ամուր լեառն. և շատ քրիս-
տոնեայք կան 'ի յայն գաւառն.
Սունդրի ասեն քաղաք. ելանէ յիւր
մէ Խունկ և Սապը. Սկունդրի
այս քաղաքք են Հնդկաց և Պար-
սից: Նու ՅՇի ՎՐի արարչէն ամ
արարածոց փառք յաւիտց յւտնս:

# ԳԻՐՔ
# ԱՌԱՍՊԵԼԱ
# ՐԱՆՈՒԹԵԱՆՑ.
## Որ ասի
# ԱՂՈՒԵՍԱԳԻՐՔ.

Արարեալ ասէս խրատու եւ
շինու շահեան.

Թագաւոր մի կազմեաց սե- ա
ղան դեսպանացն. եւ առաքեաց
մսագործացն զկաշին ե-
դին յաղոց իմէջ շուկային: Եւ
իմէջ գիշերին ժողովեցան շունք
քաղաքին յուշտել զկաշին: Եւ ասէ

միումն 'ի նոցանէ՝ որ մեծն էր և ի-
մաստուն. ասէ, եկէք նախ զջուրն
լակեսցուք՝ և ապա կերիցուք զկա
շին. և սկսան լակել՝ և պատառե
ցան. և ոչ ժամանեցին յուտել զկա
շին: Նոյնպէս գայ մահն խվերայ
մեր. և հեղձուցանէ զմեզ. զի ոչ
կարեմք հասանիլ այն կենաց:

Է Թագաւոր մի բարի և բարեմիտ ձա
շարարեալ յեզր գետոյն. և շուն
մի սոված եկն առ Թագաւորն: և
նա ետ հաց մի ծը: Նա առեալ շանն
գնայր ընդ եզր գետոյն. ետես 'ի
ջուրն զիւր շուքն իբրև զայլ շուն.
և զհացն 'ի բերանն նորա: Նա շունն
ագահեալ մոռացաւ զհացն որ 'ի
բերանն էր. վազեաց 'ի գետն զի առ
ցէ զհացն 'ի միւս շանէն. և ոչ էգիտ՝
զի շուքն էր: Նա զայն հացն՝ զոր ու
նէր՝ գետն տարաւ. և շունն ելեալ
երթայր սովամահ. Ցուցանէ թէ
Թագաւորն Քս̃ է. և սովեալ շունն
ադ-

ազգ մարդկան է. և ո՛ր հացն իւր
շնորհն, և պատուէրանն, և իւր
ո՛ր մարմինն։ Եւ սատանայ կերպա-
րանէ առաջօք մեր առաջի զնէր
աշխարհի, և զամ մեղս. զագահու-
թն, զարծաթասիրութն։ Եւ մեք ջա-
նամք մեծ աշխատութբ զհետ փա-
ռաց և մեծութե. և զհետ ստոց՝ և
անցաւորաց ջանամք։ Թէ և առ-
նումք, մահն հանէ 'ի մէնջ. և մեք
լինիմք ողորմելիք. զի կորուսանեմք
զայս կեանս և զայն։

Թագաւոր մի յարևմուտս բազմե- Գ
ցաւ յաթոռ։ և եկին բազում
դեսպանք առաջի նր. Եւ ահա շիւղ-
ինչ կայր 'ի մօրուս նր. և սպասա-
որքն նր ասեն. ով թագաւոր, ահա
տեսանեմք ոսկի բազպայ իմն ոսկի
ծղլիս. և նա ոչ իմացաւ զառակն։ Եւ
գնաց առնուլ զշիւղն 'ի մօրուացն. և
նա մահ արար նմա. և սպասաւորն է-
հար զերեսս նր և ասէ. մեք գիտեմք

եթէ Տ՛ր հաւատար թագաւորեա
նա նման արքայ կամիս թափել զխս։
Ցուցանէ. թէ այսպ՛ պարտէ յան
դիմանել զթագաւորն՝ և զաւաջ
նորդն՝ և զդատաւորն. թէ ելա
նեն յիրաւանցն. և թիւրեն 'ի կա
մացն Տ՛ն։

Գ Թագաւորի միոյ որդի էհաս 'ի
վերջին աղքատութի. և յոլով
ժամանակս ծառայեաց խնկօք և
ջրադօք կուոց հօր իւրոյ։ Եւ աղա
չէր զնա՝ զի փարթամացուսցէ զնա.
իսկ նա ևս քանզի աղքատանայր։
Եւ նա բարկացեալ յաւուր միում
եհար ուռամբ զգլուխ կուոցն, և
հերձաւ. և բազում գանձս հոսե
ցաւ 'ի գլխոյ կուոցն՝ զոր հայրն իւր պա
հեալ էր։ Ով որդեակ՝ վայ ինձ
ողորմելի մեղաւորիս. քանզի այս
պէս ցուցանէ առակս. թէ որքան
ծառայես մարմնոյ քո հեշտու
թե և հանգստութե. և պարար
տու

տութե՟. և մեղօք. դու ևս քանզի ես աղքատանաս հոգւով. և ողորմելի լինիս։ Ապա թէ տանջես զմարմինդ, չարչարես, և սպանես ամ՟ բարեգործութե՟. ապա կարես փարթամանալ հոգւով. և փրկիլ ՚ի դըժոխոցն։

Թագաւոր մի սաստիկ նեղացաւ ՚ի լուէն. և արուեստիւ կալաւ զնա։ Ասէ լուն. աղաչեմ զքեզ՝ մի՛ սպանաներ զիս. զի փոքր է վնաս իմ՟ զոր արարի քեզ։ Եւ նա ասէ՝ դու ինչ ՚ի քո ուժդ կայր՝ արարեր։ այժմ ՚ի ձեռաց իմոց մեռանիս։ Ցուցանէ. թէ ընաւ ՚ի կեանս քո չար ումեք մարդոյ մի՛ առներ։ Եւ դարձեալ ասէ. թէ պարտէ իշխանաց և դատաւորաց զփոքր չարագործն հոգալ և տանջել. զի երկիցեն մեծամեծ չարագործքն։ Է

Զ Թագաւոր մի մեծ և բարեմիտ.
ունէր խոզ մի սիրուն 'ի տանն
իւրում. և խորհեցաւ մեծարել
զնա՝ և փառաւորել. Կազմեաց նմա
գինդ մի յոսկւոյ հազար դահեկա
նի. և մետաքս ոսկեզօծ՝ սպիտակ
բեհեզ՝ ուստիկ ծանրագին էած
ի վերայ նր̄. և զգինդն էած 'ի քիթն
նր̄. և նա առաւօտու ժամուն շրջէր
ը̄ քաղաքն. և զամենայնն 'ի տիղմն
թաւալէր. և զգինդն ոսկիոր կայր 'ի
քիթ նր̄։ Յուցանէ։ Մ՟ մեղաւորք
մեղս առնեն. և յամժամ թաւա
լին 'ի տիղմն մեղաց. և աղտեղեն
զլուսափայլ պատմուճան սրբոյ ա-
ւազանին. և ա̄մ ընդ աղբ, և չարա-
մեղաց չփեն զգինդն ա̄ծ՝ որ 'ի միտս
և հոգիս նց̄ պատկերին ա̄ծ։

Է Թագաւորն կոստանդիանոս 'ի
բազմաց ժամանակաց ցանկա
ցաւ տեսանել զՃգնաւոր ոմն. որ էր
անապատական՝ և յոյժ անուանի. և

օրհ

օրհնել ՚ի նմանէ. և խրատ առնուլ
և ոչ կարէր երթալ ՚ի բազում զբա
ղանացն: Եւ օր մի յանկարծակի որ
դոյ պատճառաւ գնացեալ յանա
պատն: Եւ սպասաւորք Թագաւո
րին յառաջընթացեալ ազդեցին
ճգնաւորին զգալուստ Թագաւո
րին. և նա ելեալ աւելեաց զխցիկն.
և զաւելածն կուտեաց ի մէջ տանն.
Եւ ինքն մերկացաւ, և կտոր մի վա
լայ ի վերայ Թիկանցն կապեաց՝ և
նստաւ ի վերայ սեմոց դրանն մերկ.
մէկ ոտքն ՚ի ներս և մէկ ոտքն ՚ի
դուրս. և եդ զմէկ ձեռն ի վ՜ր բե
րանոյն՝ և զմիւսն ի վերայ ծածուկ
մարմնոյն: Եւ եկեալ Թագաւորն
ետես, և զարմացաւ. և փութանա
կի յետ դարձաւ. Իշխանացն հար
ցեալ զպատճառն շտապ դառնա
լոյն: Ասաց, Թէ տասն տարի ՚ի մօտն
էի կացեալ այնչափ խրատ չէի կա
րել ուսանել՝ որչափ այսմէկ պահս:
Եւ ասացին զինչ էր խրատն ու
սեալ՝

սեալ՝ զի ոչ դու խօսեցար՝ և ոչ նմա
Եւ ասաց, թէ այն որ զաւելորդսն
կոտել էր. զայս ուսուցանէ, թէ
աշխարհիս ինչքն իբրև զայս աղբս
է։ Եւ այն որ մերկ էր, զվալանն իւր
թիկանցն էր կապեր. զայն ուսուցա
նէ, թէ յաշխարհէս զայս չափ ինքս
պիտի տանիմք՝ քնի շատապրիմք ու
ժողովեմք։ Եւ այն որ իւր չեմոյն
էր նստեալ. զայն ուսոյց՝ թէ մար
դոյս մէկ ոտքն՝ ի յայս կեանքս է՝ և
մէկ ոտն յայն։ Եւ այն որ մէկ ձեռն
իւր բերանոյն էր եդեալ և զմէկ
իւր ծածուկ մարմնոյն՝ զայս կու
նշանակէր. թէ մարդ որ ուզէ աստ
աւ մարդիկք պարզ երես լինիլ և
անդ առ Ած, թող զայս երկու
դուռնս պահէ։

Է Այր մի եղանէր՝ ի դժուար դաշ
մի վէր. ՚ի տօթ ժամանակի.
յոյժ աշխատեցաւ. և սկսաւ բամ
բասել զԱդամ և զԵւայ. թէ
էր

էր անկայք 'ի դրախտէն անհամ
բերութբ ձեռով։ և երևեալ հրեշ
տակին ասաց։ Թէ տանիմ ըզ
քեզ 'ի դրախտն, դու համբերես։
և ասաց, թէ երբ լինի այդ։ Նա յան
կարծակի քունն իվերայն անկաւ։
Նա տարեալ զինքն 'ի դրախտին ու
րախացաւ։ Նա ետես զի մարդիք
զտղայ ծառերն 'ի վայրտային. և
չհամբերեաց, և ասաց թէ այդ
լինչ աներկեւղ մարդիք էք. որ ըզ
չորն և զգօսացածն թողեալ էք՝ և
զտղայ և զմատղաշ ծառերն 'ի վայր
կոտայք. որ զտղայոց մահն նշա
նակէ։ Նա բացեալ զաչսն ետես
զինքն 'ի դարն 'ի վեր՝ և զաղն 'ի շա
լակն ջուալով. և սկսաւ լալ։ Դար
ձեալ ետես զհրեշտակն, և ասաց.
այլ չի խօսիմ. և տարեալ զինքն 'ի
դրախտին. և տեսանէր զմարդիկք
զի զփուշ և զձիւղս ծառոց շալակ
դնէին. և չէին կարել շալկել՝ նա
կու շատցնէին. որ զմեղս նշանա

կէ․ որ չափ շատանայ նա այլ գործէ․ և չհամբերեաց․ և ասաց, ով անմիտք թեթևացուցէք, որ կարէք շալկել։ Եւ տեսեալ զինքն այլ ևս ՚ի դրախտին։ և տեսեալ վէմ մի մեծ․ և երկոտասան լուծք լծեալ ՚ի նմա։ և ամէնմէկ յիւր դիմացն քարշէր․ և վէմն չէր շարժիլ։ Եւ չհամբերեաց՝ և ասաց, ով անմիտք, ամէնքդ ՚ի մէկ դիմաց լծեցէք։ զի խախտել կարիցէք։ Եւ վէմն էր ինքն Ք͞ս, և լուծքն լծեալք, են հաւատք ուղղափառաց երկոտասան ազգաց քրիստոնէից․ իւրաքանչիւր յինքն ձգելով․ և բացեալ զաչսն ետես զինքն ՚ի դարն ՚ի վեր՝ և զաղն ՚ի շալակն։

Թ Կին մի երթայր յԵդեմ բազում զօրօք՝ և բազում ընչիւք։ Եւ ՚ի ճանապարհին հանդիպեալ յեղեր միոյ եկեղեցւոյ․ և այն եկեղեցւոյ դուռն երկու ծառ կայր․ բուսած

մէկ

մէկ՚ի յաջ դիհն. և մէկ՚ի ձախն.
և յանկարծակի յիրեար եկեալ
համբուրեցին զիրեար: Եւ գիտա-
ցեալ զի երէց մի կայր անդ ՚ի պա-
տարագն. և ՚ի միոջ յերուսաղայեցն
համբուրեցին զիրեար: Եւ ասաց
կինն յերիցն. թէ մէկ ջորեբեռն
մալ քեզ՝ հանց պատարագմի ինձ
չինէ. և մէկ այլ օրն չինեաց. և չհամ-
բուրեցին զիրեար ծառքն: Եւ իմա-
ցեալ զպատճառն. ասաց երէցն,
թէ յայնժամու խորհուրդ անկաւ
՚ի սիրտս իմ, թէ զջորին այլ պիտե
տայ՝ թէ ոչ: Աստամամբ երդումն
արար. թէ ջորին այլ քեզ. լուր
հանց ժամ չինէ: Եւ մէկ այլ օրն
չինեաց. և ծառքն համբուրեցին
զիրեար: և Ճշմարիտ եղեալ է և
ոչ է սուտ:

Միայնակեց մի նստեալ իւր վի Ժ
մի միոյ. և կայր յառաջեան աղ-
բիւր մի: Նէկն առ աղբիւրն զօրա-

 կան

կան մի, և նստաւ անդ․ եկեր զհաց,
և ըմպեաց զջուր․ և հինգհարիւր
սպիտակ 'ի տեղն եթող՝ և գնաց։
Եկն մարդ մի այլ խմեաց ջուր՝ և
եգիտ զդրամն, և գնաց։ Եւ զօրա
կանն դարձաւ 'ի խնդիր դրամին և
չգտաւ զդրամն, և մարդ մի այլ ե-
կեալ էր 'ի ջուրն։ Եւ խապտհին
ասաց տուր զիմ դրամն․ և նա ոչ
էր առեալ զդրամն։ եզարկ և սպան
զայն մարդ։ Եւ միայնակեացն
զարմացաւ․ թէ այս ինչ գործէր․
որ գործեցաւ։ և 'ի զարմացմանէն
'ի քուն լեալ։ Եկն հրեշտակ Տ՟ն․
և ասաց․ թէ այն խապահու հայրն
այն մարդոյ հօրն հինգհարիւր սպի
տակ պարտէր․ նա զիւր պարտքն
եգիտ, և գնաց։ Եւ այն մէկայլ մար
դոյ հայրն այն զօրականին հայրն
սպանեալ էր․ նա զիւր արիւն էառ․
և նա զիւր պարտքն, զի Տ՟ի դա
տաստանն ճշմարիտ է աստ և 'ի
հանդերձեալն։

Իշխա

Իշխանի միոյ որդին մեռաւ. և ԺԱ
բերին զխաչն եկղ՟ սպասաւորք
խաչին. և յերեւաւ որդի իշխանին.
զի էին ընտիրք սպասաւորքն այնո
քիկ: Իսկ եղև զի այլումեմն իշխանի
որդի մեռաւ. և բերին զնոյն խաչն
եկղ՟ և ոչ յարեաւ: Իսկ աղաղակէր
հայր մանկանն, և ասէր. թէ խաչս
այն խաչն է. և Ք՟ծ այն Ք՟ծ է. զի
արդ ոչ յարեաւ մեռեալս: Իսկ
հրեշտակն երևեալ ասաց. թէ խաչս
այն է, և Ք՟ծ այն է: բեր զայն աջն,
որ բունէ զայս խաչս:

Ըբան աւետարանին, որ ասէ. ԺԲ
ուր գանձք ձեր են անդ և սիրտք
ձեր եղիցին: Մեռաւ ոմն իշխան,
որ ունէր բազում գանձս ոսկւոյ
և արծաթոյ՝ և յականց. և ոչ ասաց
խոստովանահօրն: Իսկ ՚ի լուծանալն
գտին բալանի մի յանթատակն. և
տարան առ վարդապետն, և բա
ցեալ զսնդուկն տեսին՝ զի սիրտ


արիւն

արիւն աթաթախ կայր ի վ՟ր ընչիցն՝ զի ճշմարտեաւ է ։

ԺԳ Եղբ այր ոմն գնաց առ հայրն. և զամենայն յանցանս իւր խոստովանեցաւ. և տեսեալ յանուրջս հայրն զդատաստան եղեալ. և այրն այն մերկ, և մարմինն ամենայն հրալից սլաքով 'ի լի. և յորժամ խոստովանէր հրեշտակն աքցանով մէկ մէկ քաշէր զսլաքսն. զամէնն քարշեալ մի ևս այլ մնաց. և զարթեաւ հայրն, և պատմեաց. և ասաց, թէ այլ մեղք է մնացեալ որ չես ասացեալ. և ասէր այո՛, որ մի զկոյր մի կատակ արարի. զի ցեխն 'ի ներս ըղորդեցի, և զցամաքն թողի ։

ԺԴ 'Ի պատմութ՟է ժամանակի ասի, թէ 'ի ղալաթայն այր մի աղքատացաւ՝ և զարտ մի ունէր վաճառեաց. և այր ոմն գնեաց զարտն զայն.

զայն. եգիտ երեք կարաս ոսկի. և յըղարկեաց առ տէր արտին: և ասէր. եկ, առ զոսկին. զի վարեցից զարտս. և ասաց ոչ է իմ, այլ քո է: և նա ասէր, ես զարտն եմ գնեալ: և վիճէին ընդ միմեանս զբարուոք մարդն. և ձայն եղև 'ի պալատ Թագաւորին, և Թագաւորին, և պատրիարգն, և իշխանք քաղաքին եկին, և տեսին ամենեքեան. և դատաստան արարեալ ետուն զմէկ կարասն յարքունիս. և զմէկն յեկեղեցին և յաղքատս՝ և զմէկն 'ի պէտս երկոցունցն. և ետուն զնր̃ դուստր ուստեր նր̃՝ և զարտն պռուքս. և սիրով միաբանեցին. և ցանեալ զարտն ցորեան. և 'ի ժամանակի հնձոյն երթեալ տեսին զի մարգարիտ էր պտղաբերեալ. և քաղեցին որցակ մի. և տարեալ 'ի կոստանդինուպօլիս եդին 'ի յարկ Թագաւորին վն̃ յիշելոյ: և գտեալ զայն յայլում ժամանակի.

և խնդիր արարեալ գտին ծեր զմի
պատմեալ զձմ մըրատմերջէ · և
փառս ետուն Լ՛, Յ:

ԺԵ Թագաւոր ոմն մեռաւ · և մնաց
երեք որդի · և պատուական ակն
մի որ դիմաց թագաւորութեան էր ·
Եւ անդարձ արար · թէ վիճակաւ
յովանկանի ակն, զթագաւորութիւն
այն որդին վայել է : Եւ գողացեալ
կրսեր որդին պահեաց : Եւ յորժամ
թաղեցին զթագաւորն՝ ոչ գտին
զակն, և ոչինչ հնարիւք : Եւ ասեն իշ
խանքն, թէ յայս անուն աշխարհ թա
գաւոր մի կայ իմաստուն է՝ նա պիտի
գտանէ զակն : Եւ երեք եղբարքն
գնացին յաշխարհն յայն · և հանդի
պեալ ՚ի ճանապարհին թագաւորի
քղտապանին : Եւ ասաց ըղտպանն ·
թէ չէք տեսեալ զուղտ թագաւո
րին՝ զի կորուսեալ է · Ասացին, թէ
երթ ընդ ճանապարհդ պիտի գտա
նես : և իմացեալ զպատճառս նց :

Եւ

Եւ նք՟ ասացին թէ ուղտն քո կաղ
է։ Եւ մեկ եղբայրն ասաց, թէ միա
կանի է ուղտն։ Եւ միւսն ասաց. մի
դիհի ատամունքն խոռ են։ Եւ զար
մացաւ ըղտպանն, թէ զուղտն չէք
տեսեալ։ Եւ զիարդ զարատն գի
տէք։ Եւ նք՟ ասացին. թէ 'ի ճանա
պարհին կաղ ոտն հետ ոչ էր արա
րեալ։ Եւ 'ի մեկ կողմն էր արածեալ.
և այն դիհն որ ատամունքն խոռ էին
լեալ զխոտն չէր հաւասար կտրեալ.
և հիացաւ ըղտպանն ընդ իմաստու
թին՟ նց՟։ Եւ գտեալ զուղտն գնաց 'ի
քաղաքն, և պատմեաց թագաւորին
զիմաստութին՟ նց՟։ Եւ եկին որդիք
թագաւորին 'ի քաղաքն. և թագաւ
որ քաղաքին ուղարկեաց նց՟ զուլ մի
խորոված, և գինի՝ և խապզի հաց։
Եւ նց՟ տեսեալ՝ մին եղբայրն ասաց
թէ ուլս շունն է ծծել։ Եւ մեկ եղ
բայրն ասաց. թէ թագաւորն ձեր
խապզի որդի է եղեալ։ Եւ միւսն
թէ 'ի գինիս մարդոյ արիւն կայ։ և


եր

երթեալ պատմեցին Թագաւորին․ և նա զարմացաւ յոյժ ։ Իսկ յետոյ հարցեալ․ թէ զիարդ դիտացիք․ և նոքա ասացին թէ շան միան կծկոտ երբ խորովեն ։ և մարդոյ արեան փրփուրն սպիտակ լինի ։ և հացն 'ի խապզէն էր ։ Իսկ Թագաւորն հիացեալ կոչեաց զհովիւն․ և հարց զպատճառն․ և նա ասաց թէ ուլն այն , մեռեալ էր մայրն , սովորեալ ծծէր զքած շուն մի․ և հարցեալ զայգէպանն․ և ասաց․ 'ի կիթ այգւոյն կորեաւ դանակմի՝ անկաւ 'ի խաղողն․ և 'ի կոխելն կորեաց զոտն կոխողին , և արիւնն խառնեցաւ 'ի գինին․ և մայր Թագաւորին ասէ․ թէ քո հօր ժամանակն յամ օր խապաղն հաց կուբերէր․ և անկայ ընդ նմա 'ի պոռնկութի , և դու 'ի նմանէ ծնար ։ Իսկ Թագաւորն բերեալ վաղիւն զերիս եղբարսն․ և նոքա ասացին զխբեանց գանգատն ։ Իսկ ասաց Թա

գաւ

դաւորն թէ աղջիկ մի խօսեցեալ
երիտասարդի միոյ նշանեալ՝ և հար
սանեացն զա՟մ լինել պատրաստեալ
մինչ 'ի պսակն: Իսկ այր ոմն երիտա
սարդ բռնութե՟ խլեաց զաղջիկն՝
և տարեալ պսակեցաւ: և արար
հարսանիս, և մոլին յառագաստն.
և ոչ մերձեցաւ 'ի նա. և ետ տանիլ
առաջնոյ առն իւրոյ ոսկւով և մաք
գարտով՝ և ա՟միւ զարդարեալ: և
ոչինչ էառ 'ի նմանէ: Իսկ ոմն 'ի նո
ցանէ թու՞ի ձեզ լինաէփով. և ասաց
մեծ եղբայրն, թէ առաջինն. զի
ասաց թէ ն՟ր խամաթէր. և ոչ 'ի
հետ գնաց: Իսկ ասաց միջնեկն, թէ
ոչ. այլ յետին էր լինաէփով. զի կա
րողացաւ մինչ 'ի պսակն, և յառա
գաստին ոչ մերձեցաւ 'ի նա: Իսկ
յետին եղբայրն ասաց թէ առաւել
այն է զարմանալի՝ որ զոչինչ էառ
ամենեւին յոսկւոյ կամ յարծաթոյ
կամ յականց: Իսկ ասաց թագաւորն
թէ զակն դու ունիս: և գնա տուր

'ի

՚ի տէրն. իբրև լուեան գնացին խա
ղաղութեամբ ՚ի տունս իւրեանց:

ԺԶ Աղեկսանդր յամ՛ տեղիս ինքն եր
թայր էլ չէր:( )ը մի գնաց ՚ի պօղ
լիոս թագաւորն ՚ի մօտ. և նա եա
ղութ թասովն այախ ետ նմա. նա
խմեաց զգինին, և զայախն ՚ի ծոցն
եդ. ասաց թէ էր արարեր՝ ասաց
թէ իմ թագաւորի սահմանքն
հանց է. և պօղլիոս հնազանդե
ցաւ. և քույր պօղլիոսի իմաստա
սէր էր. ճանաչեաց զԱղեկսանդր՝
և ասաց, թէ արի, փախիր. թէ չէ
յայս պահս կու բռնեն. և նա հե
ծաւ ՚ի ցլադլուխ ձին, և փախեաւ:

ԺԷ Յորժամ մեռանէր Աղեկսանդր.
անդարձ արար թէ զիս յիմ
տունն տարէք, և յիմ ձնիժին յառ
ջևն, հազար մարդ ոսկի սինիով
ակն և մարգարիտ առէք. և հազար
մարդ մերկ և չուլ հագուցէք. և
հա

հազար ձի զադլին և զբաշն կտրե-
ցէք. և քէշ և բէլիկ կապեցէք. և
բռումբ՝ և աղէ զունդք. և հարիւրհա-
զար սրաւոր յառաջ յղարկեցէք.
Նոյնպէս արարեալ տարան: Եւ տե-
սեալ կնոջն և մօրն ոչ արարին
սուգ. իշխանացն հարցեալ թէ ըն-
դէր ոչ արարիք սուգ: Ասաց մայրն,
թէ իմ որդին պատուիրել է՝ թէ
ճար կայր՝ ի մահուն փրկիլ. ես զայս
ամենս ինդեմ յղարկեցի. և ոչ մնեց
մահն, և սուգն պիտի մնէ:

Աղէկսանդր համդիպեցաւ յեզր ՃԸ
աշխարհին. եգիտ իմաստա-
սէրս յաշխարհէս փախուցեալս
մերկ. և կերակուր նոցա էր կաթն
և բրինձ: Եւ ասաց թագաւորն
Աղէքսանդր՝ եկէք ընդ իս, և տամ
ձեզ բազում ինչս. և ասացին իմաս-
տասէրքն. թէ մէկ խնդիր ունիմք.
թէ զայն կարես տալ մեզ հետ քեզ
կուգամք: Ասէ թագաւորն զինչ.
նորա

նոքա ասեն, թէ անմահութիւն կարես
տալ։ Ա՞սաց թագաւորն զայրա
ցեալ՝ ոչ էք իմաստասէրք. ես մարդ
եմ մահկանացու. զիարդ տամ զան
մահութիւն։ Մարդ զոր ունի զայն
կարէ տալ. զոր չունի զի արդ կարէ
տալ։ Եւ ասացին իմաստասէրքն.
թէ յիրաւի գիտես որ մահկանա
ցու ես. և զիարդ զաշխարհս կու
աւերես։ Եւ ասէ թագաւորն ես
չեմ աւերել։ Ա՞ծ ետես որ ա̅մ
մարդ ՚ի ճանապարհէ ելաւ. չար
և վատ չկայր. նա զիս ՚ի ձեռն էառ.
Ա՞ծ՝ և զաշխարհս ինև կու խրատէ.
որ ՚ի ճանապարհ գան. և հաւա
նեալ իմաստասիրացն լուեցին։

ժթ Հանդիպեալ Աղեքսանդր յեզր
տեղի մի հնձելոյն՝ և բերեալ
նուռն մի կոտորեցին, և ելից զթա
սին. և կտրէին զնուռն որթուն.
և կուժն լցաւ գինւով։ Եւ իմա
ցեալ Աղեքսանդր. հարցաւ՝ թէ
ում

ում է այս տեղս · և ասացին Աղէկ-
սանդրի։ Եւ խորհեցաւ չարիս առ-
նել · և բարին այն խափանեցաւ ·
և չորսհինգ նուռն զթափսին այլ
չէր ընուլ · և այլ 'ի նուռնէն կուժն
չէր լցվիլ։ Եւ ասացին թէ մեր թա-
գաւորին սիրտն ծռելէ հետ մեզ։
Աղէկսանդր բազում զօրօք իջեալ
'ի կղզի մի ծովուն ամենեքեան
կրակ վառեցին։ Եւ սկսաւ կղզին
'ի շարժիլ · և իմացեալ 'ի նաւ մը-
տին · զի կրիա էր։ Զի ասեն իմաս-
տասէրքն · թէ յաշխարհս երեք
կենդանի կայ · որ քանի շատ ապրի
մեծանայ՝ մէկ կրիայն · մէկ օձն ·
մէկ ձուկն՝ որ վիշապ լինի։

Աղէկսանդր բազում զօրօք պա- Ե
տահեցաւ 'ի տեղի մի, և եղև
ձիւն մեծ ։ և սկսան զօրքն 'ի սովու
կոտորիլ։ Եւ ասաց թագաւորն · թէ
այժմ զայժմուս զվաղիան պարտէ
հոգալ · յորժամ յասոնց ազատիմք

զայլ վաղւուն հոգամք ։ կատարեցէք
զձիանդ, և կերէք։ Ամանք ասեն թէ
մահուանտն է ասացեալ՝ վասն այնո
րիկ զձիու միան կուտէ մոլմանս
ազգն ։

Իա̄ Այր մի ըմբռնեցին վն̃ գողութե̃.
երկու շաբաթ խիստ չարչարե
ցին ոչ ՚ի խոստ երեկ ։ Եւ յորժամ
զիւր զաւակն կախեցին, և մէկ փայտ
զարկին. և գոչեաց հայրն և ՚ի խոստ
եկն զգողութի̃ն ։ Եւ ասացին, թէ եր
կու շաբաթ զքեզ չարչարեցինք.
և դու ոչ ասացեր. և վն̃ մէկ փայտե
զաւակի քոյ վաղվաղակի ասացեր ։
Եւ նա ասաց՝ թէ իմ մարմինս յիմ
ծնողացն էր, ոչ ցաւէր՝ ոչ յոր
ժամ զիմ որդին ծեծէին ։ Այ մարմին
նորա յիմ յաղեացս էր՝ խարշեցաւ
աղիքս՝ և ասացի ։ Եւ դուք ծնո
ղացն և Ե.Ջ̃ համեմատք են. զի յոր
ժամ ծնօղն զզաւակն ծնանի ։ թէ
դուք չէր. յորժամ մէկ ծնօղ ծնա

նէր, այլ ոչ ծնանէր. և ոչ հոգայր
հեշտութեան, ա՛ ես, աւաղ ես։

Մարդ մի գերեզմանակիր. որ մի Իբ.
զխաւթուն մի թաղեցին շատ ըն
չիւք։ և 'ի գիշերին եբաց զգերեզ
մանն, և մերկացոյց մինչ 'ի ներքին
հանդերձն։ Եւ կինն ափցի յերեսն
էզարկ, և ասաց։ Թէ եօթն տղայս
մայր եմ, և զարեան յերդիքն խփեր
եմ տեսեալ։ Եւ դու չես վախիլ
յԱ՟յ. որ զիս հրապարակ կառնես։
Եւ ասաց՝ թէ աղքատ եմ. և ապրանք
չունիմ։ Եւ ասաց՝ թէ հետ ինձ գե
րեզման մի կայ՝ երեք գանդ կայ՝ առ
և տարեալ ծախէ, և քեզ ապրանք
արա։ տարաւ 'ի ծախել։ Եւ առեալ
սատափն շինեաց ոսկի շիշ՝ և էած
'ի մէկին ականջն, նա 'ի մէկայլ
ականջն 'ի դուրս ելաւ։ Եւ մէկ
ալին էած գնաց մինչև 'ի կէսն։ Եւ
'ի մէկայլն էած ամէնևին ոչ մտաւ։
և զայն այլ խբացընկեց։ Եւ ասաց

ինչ գտին կուզեն․ և մէկին տանհա
րևոր դրամ երեա։ և տաուց զխա
լխաթն։ Թէ այն որ չիշն՛ի մէկալ
դիհՀն ելաւ․ ամենևին բանն յա
կանջն չէ տաՀել․ ՛ի մէկ դիհՀն ՛
ներս է մտել․ ՛ի մէկայլն ՛ի դուր
ելեր։ Եւ մէկայլն ամենևին բան
տեղիք չէ տուեր։ Եւ այս մեկայլ
գտին չկայ․ զինչ բարի բան լսեր
զամէննն պաՀեր է․ և այս գանգ
ամէն ցաւոց դեղ է։

ԻԳ Յաշխարհիս հինգ բան՛ի մարդկ
նէ անգիտելի է։ Մէկ որ մարդ
զմարդոյ խորհուրդն չի գիտել․
ոչ հրեշտակք, և ոչ դևք։ Երկ
որ յաւուրս ՛ի վաղն չգիտեմք թէ
ինչ պիտի լինի։ Երեք որ զինչ
որ սկսնումք չգիտեմք թէ յինչ եր
պիտի աւարտի ՛ի բարի թէ ՛ի չար
Չորս որ մահու օրն անգիտելի է
Հինգ զկատարածի օրն չգիտեմք
Երեք երք որ զմարդն ՛ի չարէն ՛
զա

զատ կուպահէ․ խիղճ մտացն՝ և երե
սեն ջուրն․ և բնական խելքն․ ներբև
զառաջնորդ և ղլաուզ է։

Թագաւոր մի յիւր խազինան հա Իդ
զար ակն ունէր պատուական։ և
մէկն առաւել պատուականէր։ Ու
ունէր միամիտ խազնադար մի․ և
օր մի խազինադարն զայն ակն փո
խեց․ և Թագաւորն եկեալ տեսա
նել զակներն․ և ետես՝ որ մէկ ակն
փոխածէր․ և զխազինադարն բա
զում ժամանակ չարչարեաց․ և՚ի
խոստ ոչ եկաւ․ և չէր ղիմիշ տա
նել որ սպաննէր։ և ոչ զակին Թարկն
տալ կարէր։ և իմաստասէր մի
ասաց՝ ես առնում զակն․ և տարաւ
յանգէտ մորդոյ խմօտ զնդան
ձգեց․ և հարցաւ անդէտն զպատ
ճառն։ և ասաց։ Ու նա ասաց, թէ
քարին համար ինչու զնդան ես
մտել։ և ձանձրացաւ, և ետ զակն
՚ի խօջայ մի։ Աղքատացաւ, ոչ

արուեստ գիտէր, և ոչ կարէր մու-
րալ։ գնաց 'ի խօջայի մի մօտ, և
ասաց. թէ հազար ստակ 'ի փոխ
տուր. նա չէ բերտ. նայեց որ չէբերտ։
Նա գնաց 'ի ղատին. և ասաց թէ
այս անուն խօճայ՝ տասն հազար ըս
տակ պարտի ինձ. ոչ թուխթ ունիմ
և ոչ վկայ։ բեր որ դատեմ. ղրկեց, և
բերեր։ Նա ասաց, թէ երեսին ջրի
գինին զինչ է։ Ասաց ղադին. տասն
հազար ստակ. ասաց թէ երէք տար
պայ զիմ երեսին ջուրն ձգելեմ. և
ասաց ղադին, թէ տուր տասն հա
զար ըստակ։

իե Մարդոյ մի բազրկանի զբեռներն
տարան, և աղքատացաւ. և
դռնէ իդուռն կու մուրայր. և
սովորեցաւ 'ի յայն։ Որ մի 'ի տեղ
մի օթեցաւ. և գօմէջ մի քենով զիւ
րեն ժողոված հացիկն կերաւ, և
ծլաւ զգօմէջն ջլատեց։ Նա ելեալ
վաղվնեն տեսին, և բռնեցին ըղ
մար

մարդիկքն. թէ ուղ արեր է։ Եւ եկեալ աղքատն ասաց, թէ եսեմ արել. եւ ասաց զխուրեն աղքատութե̄ պատճառն. եւ ասաց՝ թէ յորժամ մուրացած հայն 'ի փորն մտաւ այլ 'ի տուն չի պիտէր կենար. եւ հալալ վաստակ առնէր. ով որ ես յիմ տունն չգնացի։

Մարդ մի յնէ̄էմ կերթյր. եւ հ՛րխուր փլօրի մարդոյ մի մօտ ամանաթ եդ եւ գնաց։ Երբ երեկ՝ ասաց տուր զիմ ամանաթն՝ նա ուրացաւ թէ տուեալ եմ. եւ տարաւ յերդումն։ եւ զփլօրին 'ի գաւազանին մէջն էր դրել. եւ երետ զգաւազանն 'ի փլօրուն տէրն. եւ եդ զձեռն իւր 'ի մեծ խաչին, եւ երդուաւ՝ եւ ոչ ինչ նշան եղեւ։ Նա տրտմեցաւ այրն՝ եւ 'ի քուն եղեւ. եւ տեսաւ յերազի. զի ասաց փոքր խաչն 'ի մեծն՝ թէ յէր ոչ պատուհասեցեր. եւ ասաց մեծ խաչն թէ Տ՛րն դատաստանին ծդ

եմ թողէր։ Եւ ասաց փոքր խաչին, Թէ ինչ Տ՟ն դատաստան է, այն մարդն կու թերահաւատի. և զար թեաւ՝ և ուրախացաւ։ Եւ ասաց թէ տրեկ’ի փոքր խաչն երդուի՞ր։ Եւ եկեալ եդ զձեռն իւր՟ փոքր խա չին, և փակեցաւ ’ի ձեռն. և իբրև զհուր վառեցաւ, և կանչեց թէ հանդ Փլորին’ի գաւազանիս մէջն է ։ էառ, և ուրախացաւ։

ԻԵ Թագաւորը մի իւր՟ իւրոյ աշխար հին ’ի ժուռ գայր, և տեսանէր և եկն ’ի քաղաքի մի եղեր։ Եւ ահա տեսան այր և կին, ունէին զհաց, և զկաթն, և զգինի. և թողեալ զանոյշ կաթն, և զգինին, և զհացն. և զաղբն ուտէին. և զգոզն խմէին։ և Թագաւորն ետես իւրեանց ան մտութիւն՝ և բարկացաւ. հրաման եաց թէ սպանէք զդոսա, և սպա նին։ Ցուցանէ։ Թագաւորն Ա՟ծ է. և այնք որք զկաթն, և զգինին

և

և զհացն թողեալ էին. զաղբն ուտէին, և զգողն խմէին: Նոքա են. որք թողուն զսուրբ պսակն. և զս̃բ ամուսնութ̃ին. և երթան պոռնկին, և շնան: Եւ ամենայն որ թողու զիւր ս̃բ ամուսնութ̃ին. և զպատուական անկողինն. և երթայ յայլ կին. որ ոչէ իւրն: Նոքա զերդ զայն տանն այրն և կինն են. որք զաղբն ուտէին. և զգողն խմէին: Եւ թագաւորն Ք̃ս է. որ յաւուր դատաստանին զպոռնիկն և զշնացօղն, ընդ մարդասպանսն, և ընդ արիւնահեղսն տանջէ, թէ ոչ դառնան և ապաշխարեն: Ոպ̃ ասէ Պօղոս. զշուն և զպոռնիկս դատէ Ք̃ս:

Թագաւոր մի զբարձր և զուղորդ զսիւն մի կանգնեաց. և մարգարիտ մի գեղեցիկ և մեծագին իվ̃ սեանն եդ. և ասէ, թէ մարդ որ ընդ այս սեանս 'ի վեր ելանէ և առնու զմարգարիտն. ես տամ նմա զմար ԻԲ

գարիտն։ Եւ ժողովեցան բազում մարդիկ, և ոչ կարէին ելանել ընդ սիւնն՝ ի վեր։ Եւ եկն այր մի և եխած զսրունսն, և զանդամն, և զձեռսն. և զբազուկսն, և պատառեաց՝ և արիւնն հեղաւ. և խածատած տեղին եղև զերդ սանդուխտ. և ձգեալ զձեռսն գրկեաց զսիւնն, և ել. և եառ զմարգարիտն. Թագաւորն գովեաց զայրն, և ետ նմա զմարգարիտն։ Ցուցանէ։ Թագաւորն Ք͞ս է. և այն սիւնն զոր կանգնեաց մարդկան, է պատուիրանն Ա͞յ. զի մարդիկ տկար պահեն զօրէնսն. որպ͞ մարդիկքն այնոքիկ՝ որք ոչ կարէին ելանել ը͞ն սիւնն։ Եւ մարգարիտն այն է, զի Ք͞ս պարգև խոստացաւ մարդկան. որ և բազումք ջանկան գտանել զմարգարիտն զայն, և ոչ կարեն։ Բայց նոքա առնուն զմարգարիտն. որք զիւրեանց մարմինն սպանին վասն արքայութեան Ա͞յ. Մարտիրոսքն, և արդարքն, որք հե-

ղին

զինս զարթեւնս իւրեանց մ՟ Տ՟ն. ոչ այլն այն որ բաղդում նեղութ՟ե ել ընդ սիւնն, եւ է սա զմարգարէտն. եւ զանանց բարին ։

ԻԹ

Թագաւոր մի ունէր գեղեցիկ այգի. եւ յեզերն խոր խանդակ. եւ փայտիւ եւ տախտակով կամուրջ իվ՟ր ձգած. բայց ՚ի գիշերն քարշէին զկամուրջն ։ Նա որ ՚ի գիշերն գայր ՚ի վիհն անկանէր. եւ ով ՚ի ցորեկն գայր յայգին մտանէր ։ Այգին է Արքայութ՟ին, եւ վիհն դժոխք. եւ կամուրջն բարի գործն. եւ ցորեկն այս կեանքս ։ Իսկ գիշերն մահն. ով որ ունի զբարի գործս նա մտանի յարքայութ՟ին. եւ որ ոչ ունի, իջանէ ՚ի դժոխս ։

Լ

Թագաւոր ոմն եւտես տեսիլ. զի իբրեւ զանձրեւ իջանէր աղուէս ։ Նա քարոզ Հրամայեաց կարդալ. եթէ ոք զիմն մեկնեսցէ տեսիլ. հա



զար

զոր դահեկան տաց նմա. և լու՛
եալ այր մի աղքատ: Եւ երթեալ
ասաց. եթէ երկս աւուրս տացես
ինձ ներումն, յայտնեցից: Եւ եր
թեալ շրջէր յանապատի խոկա
լով. և վիշապ մի տեսեալ զայր տա
րակուսեալ՝ ասաց. զինչ ինձ տա
ցես, եթէ զտեսիլ Թագաւորին
քեզ յայտնեցից: Եւ նա ասէ. զոր
ինչ խոստացաւ Թագաւորն, քեզ
կէսն եղիցի: Եւ ասէ, երթ, և ասա.
Թէ ժամանակ է այսուհետև, զի
մարդիկք ենգաւորք եղիցեն. և
խաբեբայք իբրև զաղուէս. և եր
թեալ ասաց. և հաճոյ ասացեալն
թուեցաւ, զի նման այնմ իսկ էին
մարդիկքն. իսկ նա հազար խոստա
ցեալ դահեկանն. և այրն ատեաց
զվիշապն, և ոչ դարձաւ անդրէն:
Եւ զկնի դարձեալ զայլ եւս տե
սիլ. զի իբրև զանձրև իջանէր ոչ
խար. և հրամայեաց կոչել զայրն.
զի նման առաջնոյն մեկնեսցէ:
Եւ

Եւ նր զնոյն խնդրեալ ներումն. և ամաչէր իբրև զապերախտ. և երթեալ առ վիշապն զանձն պարտաւորելով. ասաց՝ մեղայ քեզ. յայտնեա զերկրորդս. և մեկնեաց նմա ոչ յիշելով զյանցումն: Եւ ասաց, երթ, և ասա. թէ ժամանակ գայ. և եկեալ է. զի մարդիկք իբրև զոչխար պարզամիտք եղեն. և եկեալ պատմեաց: Եւ այնմ՝ ևս հաւանեալ ետ նմա հազար ևս դահեկան: և առեալ առն տարաւ վիշապին. ընդ առաջնոյն, և ընդ վերջնոյն հազար դահեկան: Օ կնի այնորիկ դարձեալ այլևս ետես տեսիլ. և ահա իբրև զանձրև իջանէր սուսեր: Եւ հրամայեաց դարձեալ զայրն կոչել՝ զի զայն ևս մեկնեացէ. և առն զնոյն խնդրեալ ժամանակ. և երթեալ առ վիշապն. և նա առ ժամայն մեկնեալ իբրև բարեկամի: Երթ, և ասա թէ ժամանակէ. զի մարդիկք յարեցեն բռնաւ-

որք՝ և սուսերաւորք։ Եւ զայս ու
սեալ առն ասաց. ընդէր այժմ թո
ղից վիշապիս վեցհազար դահե
կանս. և կամ հինգհարիւր այլ
ևս բերից։ Տարից զվիշապս, և սա
տակեցից։ և ջանաց հարկանել զվի
շայն՝ և ոչ յաջողեցաւ նմա. զի
խոյս ետ՚ ի նմանէ վիշապն։ Եւ առն
զզջացեալ խորհէր թէ չարիս գոր
ծեցի. զի թէ այլևս հարկ հասանի
ցէ. ոչ եկից առ սա։ Եւ տեսեալ
վիշապն զայրն ստրջացեալ ասաց
նմա. այր դու մի տրտմիր. զի յանձ
նէ ինչ ոչ արարեր. այլ ՚ի բերմանէ
ժամանակի։ Որ ասելն քո՝ ի կեղ
ծաւորաց ժամանակն է. և զղջ
նալն, և տալն զհազար դահեկանն
՚ի միամտաց ժամանակն։ և կամիլն
սպանանել ՚ի բռնաւորաց ժամա
նակն։ Ոչ այլ ինչ առակս ցուցանէ.
բայց զժամանակին գիտել զմար
դիկք. և զգուշանալ յանձանց.
զի զզանազան բերէ ժամանակս
զմարդ.

զմարդ․ և երբեմն նենգաւորս․ և երբեմն պարզամիտս․ և երբեմն բռնակալս․ և նման այսորիկ այլ բազումս։

Թագաւոր մի կայր՝ և չունէր ժառանգ աթոռոյն իւրոյ․ ոչ դուստր՝ և ոչ որդի․ բայց քրոջ որդի մի միայն ունէր։ Նա կամեցաւ զնա թագաւորեցուցանել․ և ժառանգ առնել աթոռոյն իւրոյ։ Նա թագաւորն զնա յոյժ սիրէր․ զի էր իմաստուն մանուկն այն՝ և կարի աղօթասէր․ և չարացաւ ընդ նմա մեծ նայիպ մի։ Հնարս իմացաւ, թէ ո՟պ չարախօսեսցէ զքրոջ որդին առ թագաւորն․ զի ինքն կալցէ զթագաւորութ՟ին յետ թագաւորին։ Նա յաւուր միում ասէ ընդ քրոջ որդւոյ թագաւորին․ թէ բերան քո հոտեալ է, և դու ոչ գիտես․ երթաս, և նստիս առ թագաւորն․ և գէշ հոտերթայ առ թագաւորն․ և

և նա բարկանայ քեզ. և քուրոջ որ
դին ասէ՝ ապա զինչ առնեմ։ Ասէ
Նայիկան, թէ յորժամ նստիս զե
րեար, յայլ դիհ արա. և նա ասէ այո։
Արթայ Նայիկան առ թագաւորն.
և չարախօսէ՝ և ասէ. թէ քուրոջ
որդիդ քեզ չար կու խորհի։ Եւ
նա ասէ. զինչ գիտես. և Նայիկան
ասէ. թէ յորժամ հետ քեզ նստի,
զերեսն յայլ դիհ պետի դարձնէ.
զի կամի զքո թագաւորութիւն առ
նուլ՝ մինչ դեռ կենդանի ես։ Եւ
թագաւորն ըստ խրատու սովորու
թեան կոչեաց քուրոջ զորդին առ
ինքն, և նա ոչ գնաց վն բերանոյ հօ
տոյն՝ զոր ասաց Նայիկան։ Եւ երբև
ստիպեաց, գնացեալ նստաւ առ
թագաւորն. և զերեսն յայլ դիհ ա
րար։ Եւ թագաւորն երկմիտ եղև՝
և կամէր սպանանել զքուրոջ որ
դին. և յայտնի ոչ կարէր, զի քու
րոջ որդի էր։ Այլ դէր ուղար
կեաց նովաւ առ վերակացու երկա

թի

թլքանին. և գիրն այս էր գրեալ.
եթէ առաջին մարդն՝ որ առ ձեզ
գայ՝ 'ի կրակն ձգեցէք, որ այրի.
և թէ ասէ՝ թէ ես թագաւորին
քրոջ որդի եմ՝ կամ նայիպն. մի
լսէք. 'ի կրակն արկէք՝ որ այրի: Եւ
յուղարկեցին զքրոջ որդին թագաւ
որին յերկաթի քաննն՝ զի արկցեն 'ի
քուրայն որ այրի: Եւ յորժամ
եհաս երեկոյին ժամն. իմէջ լե
րինն անմարդաբնակ տեղի լսեց
զձայն ժամահարի. և ասաց 'ի միտս
իւր՝ թէ Ա̃ծ թագաւորաց թա
գաւոր է. զԱ̃յ հրամանն պարտէ
կատարել յառաջ, ապա զիմ քե
ռուն: Եւ գնացեալ եկաց յաղօթս
և եկաց գիշերն անդ. և աղօթեաց
առ Ա̃ծ: Եւ ելեալ չարախօս նայ
իպն 'ի ձի գնաց յերկաթի քաննին
դուռն. թէ ոչ է ձգած՝ ինքն տայ
ձգել: Նոյնժամ առին զինքն և
արկին 'ի կրակն: Եւ յորժամ լու
ացաւ եկն քուրոջ որդին թագաւո
րին.

րին. և տեսեալ զեղեալ գործմն զարմացաւ 'ի սքանչելիսն Տ̃ն. զի աղօթք են իւր պահապան: Ցուցանէ առակս: Թէ աղօթելք ազատեն մարդ յա̃մ չարէ. որպ̃ երեք մանկունքն ի մէջ հնոցին. և Դանիէլ յառիւծուցն. և Երեմիայ ի մէջ տղմին. և մեծն Գրիգոր 'ի խոր վիրապին ի մէջ թունաւոր յօձիցն: Եւ ինչ աղօթ արար կայ. իւր աղօթքն զինքն արժանի Տ̃ն առնէ. և յա̃մ փորձանաց պահէ զՔ̃ս Տ̃ն մեր ամէն:

ԺԲ Թագաւոր մի անիրաւութ̃ն առնէր. և ունէր զորդի մի բարի. որ ասէր, և խրատէր զհայրն թէ զանիրաւութ̃ն մի առնէր. և նա ոչ լսէր որդւոյ իւրոյ: Եւ որդին ասէր թէ չերկնչիս դու յՏ̃ն զանիրաւ դատաստան առնելով. զի աւետարանն հրամայէ վասն Թագաւորաց. թէ որով դատաստա

նաւ դատէք դատելոցէք. և ա̃ծմ
Ա̃ծաշունչ գիրք զայս ասեն: Եւ
յաւուր միում բարկացաւ, և աք
սորեաց զորդին իւր՝ և զկին որ
դւոյ իւրոյ գնալ յօտար աշխարհ:
Եւ առեալ որդի Թագաւորին ըզ
կինն իւր՝ և գնաց ոչինչ ունելով
զհետ իւր: Եւ երթայր 'ի քաղաք
մի. և ետես զնա ոմն իմաստասէր.
զի գեղեցիկ էր տեսլեամբ. և ասէ
'ի միտս իւր: սա կամ Թագաւոր է,
կամ Թագաւորի որդի: Եւ գնաց
յառաջ՝ և մեծարեաց 'ի տուն իւր.
և ասէ: Ուստի ես, և կամ յո՞
երթաս. և նա զիրաւն ասաց: Եւ
տուեալ նմա դարպաս մի մեծ զի
կացցէ անդ՝ մինչև հայրն խնդիր ա-
րասցէ. և զի ոչինչ ունէր որդի Թա
գաւորին, զի զպէտս տանն գնէր.
զի կարի դատարկէր: Եւ ելեալ
գնաց 'ի մշականոցն զի կալցեն զնա
'ի վարձու՝ և ոչկալան զնա: Եւ նա
գնաց 'ի հանգուցեալ եկեղեցին.

և անդ աղօթեաց մինչև յերեկոյ,
և գնաց դատարկ՚ի տուն իւր։ Եւ
ասէ կնիկն, թէ ուստի դաս. զի այնպ
գիտէր թէ կերակուր ունէր։ Եւ
ասաց որդին թագաւորին. թէ այն
մարդն, որ զիս՚ի վարձու տարաւ.
նա ասաց թէ վաղն եկ բանեց՝ որ եր
կու աւուր վարձն մէկ տարպայ տամ։
Եւ ասաց կինն բարի է։ Եւ գնաց
վաղւն, և ոչ կալան զնա՚ի վարձու.
և նա գնաց յեկեղեցին, այն և աղօ
թեաց մինչև երեկոյ. և գնաց դա
տարկ՚ի տունն։ Եւ համարէր կինն նր
թէ կերակուր ունէր՝ զի երկու օր էր
որ անօթի էր։ Եւ ասաց այրն դար
ձեալ՝ թէ այն մարդն որ զիս՚ի վար
ձու կալաւ. նա ասաց թէ վաղն այլ
եկ բանեց. և առ երեք աւուր վարձն,
և գնա։ Եւ կինն ասաց թէ բարի է.
և գնաց վաղուեան օրն՝ և ոչ կա
լան զնա՚ի վարձու. Եւ նա գնաց
յեկեղեցին, և աղօթեաց. և յոր
ժամ ճաշու եղև եկեալ լուսակերպ
այր

այր մի, որ էր եկեղեցին այն․ և բե
րեալ ետ երեք ակն պատուական
և գեղեցիկ՝ երից աւուրց վարձն,
և ետ 'ի կինն․ Եւ ասաց լուսաւոր
այրն․ Թէ զմէկն ծախէ, և զտան
պէտն տես, ասաց որդի Թագաւո
րին։ Եւ երկուքն պահէ․ զի ա-
մէն ակն երկու հարիւր դահեկան
ածէ, որ է կարմիր․ և արար նոյն
պէս՝ զոր պատուիրեաց լուսակերպ
այրն․ և յորժամ եկն որդի Թա
գաւորին․ ետես, զի կինն երկու
ակն ետ ինքն։ Եւ ասաց որդի Թա
գաւորին․ այս ինչ է։ Եւ նա ասէ,
դու ուղարկեալ էիր զլուսաւոր
այր մի։ Եւ ունէր զերիս ակունս զե
րից աւուրց վարձն։ և զոր պատուի
րեալ էիր դու ինձ զայն արարի,
նոյնպէս եղև։ Յայնժամ գիտաց
որդի Թագաւորին զսքանչելին․ և
ետ փառս Այ։ Ցուցանէ առակս․
Թէ որ Ածակոյս կողմանէ լինի և
համբերէ․ նա Ած ոչ Թողու զնա․

ով զաբրահամ. և զիսահակ. և զյակօբ և զամ̃ ս̃բս. որք համբերեցին վասն անուան Տ̃ն և պատկեցան յԼ.Ծ̃. նոյնպէս և զամ̃ մարդ։

ԼԳ Ագռա՛ւու մի պանիր ունէր 'ի բերանն, և նստէր 'ի բարձրաւանդակ տեղւոջ։ Իսկ աղուէսն փորձ առնոյր 'ի նմանէ հանել զպանիրն։ Նա մատուցեալ մօտ անդր և զակն 'ի նա հարեալ. երանի տայր բնութեան. զի սևաթոյր գունով և գիշերոյ մանուկ. և վայելէ քեզ ծաղկիլ 'ի գունոյդ։ Այլ և զօրութիւդ քո 'ի քեզ. որչափ ոչ այլում բայց և իմաստութիւդ. և ոչինչ ևս արգել ունէր զթագաւորութի̃. զարծուո՛վ զանց արարեալ ամենևին։ Նա թագաւոր հաւուց եթէ ձայն դոյր, և ոչ ամենևին կարօտ գտեալէ իր յիրիդ։ Պրդուեցաւ 'ի գովութեան ագռաւն. և զմեծաձայնութիւն ցուցանել կամեցեալ. եբաց

եբաց զբերանն, և գոչեաց յոյժ
մեծ. և պանիրն 'ի վայր անկեալ
որս լինէր աղուեսուն: Եւ նա առ-
լցեալ կերակրովն. ձայն քո 'ի քեզ
սէ, կարի քաջ ով ագռաւ. բայց
'ի միտս պակաս ես: Օ այս առաս
պելս գիտելով. մի երբէք պատրի-
ցիս 'ի սուտակասպաս գովութե̃ն:

Իոի յառակաց. արծուին և կա- ԼԳ
քաւն խիստ չորկամացան և ար-
ծուին անդադարնեղէր զկաքաւն.
և անհանգիստ պահէր: Պնաց կա-
քաւն և եբեր իւրն բարեխօս որ
չափ Թռչունք կայր առ արծուին.
և նա չէառ յանձն՝ և ոչ հաշտեցաւ
հետ կաքաւուն. կաքաւն նստեալ
կայր. լայր, և հանէր արտասուս պըղ-
տոր: Եկն բզէզն. և ասաց կաքաւն
զիւր գանգատն. և էառ տարաւ
զբզէզն առ արծուին բարեխօս:
Եւ արծուին ոչ լուաւ աղաչանաց
բզէզին. ղպնեցաւ բզէզն. և ոխա-

 ցաւ

ցաւ հետ արծուոյն . քանի արծուո
ին զձուն հանէր . երթեալ բզէզն
եղանէր 'ի բոյն արծուոյն . և գլո
րէր և ձգէր 'ի վայր զձուն . և կոտո
րէր ։ Եւ բազում ժամանակս անոր
դի առնէր զարծուին . Եւ գնա
ցեալ արծուին էած զձուն իւր 'ի
գոգ Թիգաւորին . և իմացեալ բզեզն
եմուտ իմէջ ոտիցն . և էխած զծայր
երանացն . և նա իվեր վազեաց . և
ընկեցեալ բեկաւ ձուն ։ Ցուցանէ ։
Որ թէ հնար իցէ բնաւ մի առնէր
քեզ թշնամի զոք 'ի մարդկանէ .
թէ պէտ և աղքատ և տկար լինի ։

ԼԵ Որսորդ մի կալաւ զկաքաւ մի,
և կամէր զենուլ . և ասէ կա
քաւն մի սպանաներ զիս . զի ես խա
բեցից զբազում կաքաւս , և առից
յականատս քո ։ Եւ ասէ որսորդն . և
այժ ստուգիւ մեռցիս 'ի ձեռաց
իմոց ։ Զի զսիրելիս քո՝ և զազգա
կանս մատնես 'ի մահ ։ Ցուցանէ ։

Թէ

Թուէ մի կազմէր զորոգայթ սիրե
լւոյ. զի ոչ հաճի Ա՟Ծ՟ ի գործս քո.
և դարձեալ քեզ պատրաստէ զնա:

Աղուէս մի քաղցեաւ՝ և եգիտ ԼԴ
ոսկրն. և սկսաւ խածնտալ և ու
տել: Ասաց վա՜յ ինձ. զի ահագին է
գող գայլոյն և աղաղակս ՚ի գլուխս
իմ. և փորս իմ ոչինչ ինչանէ:
Յուցանէ: Փառք և մեծութիւն աշ
խարհիս զերդ երազ է. և միայն զա
ղաղակ ունի, և զզբաղումն. յետոյ
ոչ երևի, զի անցաւոր, և խաբօղ է:

Հարցին ընդ աղուէսն թէ քա ԼԵ
նի ցեղ արուեստ գիտես.
Գնաց կկզեցաւ, և ասէ. հազար
ցեղ արուեստ գիտեմ. երեսուն
ագուոյս առաջի շանն՝ թողթէ քա
նի անձամբս: Այց մեծ արուեստս
այն է. որ ո՛չ ես զշունն տեսնում,
և ոչ նա զիս: Յուցանէ: Թէ ան
թիւքեն, որք ապաշխարեն զմեղս

 և

և Ա.Ծ լինին։ Ապա նա է կատա
րեալ մարդ՝ որ ոչ մեղանչէ։

ԼԲ Ա.յրի կին մի ունէր տղայ մի։ Եւ
սկսաւ տղայն գողանալ միրգ և
բանջար։ Եւ մայրն առեալ ծածա
կէր և ոչ խրատէր զտղայն ՚ի կամս
Ա.Ծ։ Եւ նա ևս աճեցոյց զգողու
թիւն․ երբեր անասունս, և անօթս․
և այր եղեալ՝ եղև աւազակապետ ՚ի
լերինս․ և բազում չարիս առնէր։
Եւ կալեալ տարան զնա ՚ի կախել։ և
ասէ բերէք զմայր իմ զի համբուրե
ցից զնա․ և յորժամ բերին խա
ծեալ է հատ զքիթ մօրն։ Եւ ասէ
թագաւորն․ ո՛ չար, ընդէր հատեր
զքիթ մօր քոյ։ Եւ նա ասէ, զի
ոչ խրատեաց զիս ՚ի տղայութեն ՚ի
կամս Ա.Ծ․ որ չէի յայս վիշտս ան
կեալ․ յիրաւի արարի զայն․ և թա
գաւորն հրամայեաց զնա արձակել՝
և զմայրն կախել։ Ցուցանէ։ Թէ
ամ ծնօղք, որք ոչ խրատեն զոր
դիս

գիտ իւրեանց 'ի կամս Ք.Յ. նա մեղք որդւոցն 'ի գլուխ ծնողացն է յաւուր դատաստանին։

ԾԹ

Աղու̂էսն և խեցգետինն եղեն եղբարք, և արարին ցան. Հնձեցին, և կասեալ կուտեցին։ Ասէ աղու̂էսն ելցուք 'ի բլուրս այս. և ով շուտ իջանէ նա առնու զցորեանն։ Յորժամ ելին, ասէ խեցգետինն. արա ինձ սէր։ Նու յորժամ կամիցիս վազել զարկ զագիդ առաջի իմ. որ ես իմանամ, և գամ զկնի քո։ Նա զարկ աղու̂էսն զագին և վազեաց. և խաչափառն փակաւ աղու̂էսուն։ և յորժամ եհաս աղու̂էսն 'ի շեղջն. և դարձաւ յետս թէ յուր է խեցգետինն։ Նու խեցգետինն 'ի վայր անկաւ ի վ̃ր շեղջին, և ասաց. անուն Տ.Յ. այս ինձ երեք մոդ և կէս. զարմացաւ աղու̂էսն և ասէ. ո՛վ դու չար՝ երբ եկիր դու այսր. Յուցանէ։ Թէ բան և գործ առ-

 նեն

նեն նենգաւոր մարդիկք, որ 'ի կո րուստ լինի իւրեանց անձանց. և տկարք յաղթեն նոցա։ Պարծեալ շատ մե ղաւոր՝ այս տկար մարմնովս ջանայ. իմաստութեամբ և արտասուօք քաւել զմեղս. և տէր լինի երկնից հացին։

խ Առիւծն կալաւ իւր սպասաւոր զաղուէսն, և ետ նշան. թէ յորժամ արիւն տեսանես յաչս իմ. յիմացիր որ իմ որսոյ ժամն այն է. առիւծն և աղուէսն ուրախ լի նէին։ Եւ հպարտացեալ աղուէսն ելաւ յառիւծէն, և գնաց առ գայլն։ Եւ արար իւր սպասաւոր. և ասէ ցգայլն յորժամ լինի յաչս իմ արիւն, և թէ ոչ լինի. երբ հար ցանեմ, դու ասա այնմ։ Եւ ասաց գայլն թանձրագոյն արիւն կայ յաչս քո. և նա ուրախացաւ, և նըս տաւ յանցս եղանց։ Եւ ասէ գայլն դու բախեա ել՟ր իմ. և 'ի գնալն եղանց նա վազեաց յառաջ նոցա ոտ՟

տե

տեսեալ էր յառիւծէն. և եղունքն հարին զգլուխ աղուեսուն և սատակեցաւ ։ Իսկ ասէ գայլն՝ յոտնկաց, այժմ ստուգապէս թանձրացաւ արիւն յաչս քո ։ Յուցանէ ։ Թէ ոչ վայելէ մարդոյ ձգտել աւելի քան զկարն իւր. ոչ 'ի հոգևորն և ոչ 'ի մարմնաւորն ։

Մի յառակաց թէ ապուղէն ա- ԽԱ
րար թագաւորութի վատսուն տա
րի. յորժամ ծերացաւ հանեին զնա
և բերեին զայլ մանկագոյն. և եդին
իւրեանց թագաւոր ։ Իսկ նա եր
թայր լալով 'ի ծովեզերն. և ահա
պատահեցաւ նմա ծառ մի թզենի
լի պտղով. և ելեալ 'ի ծառն բնա
կեցաւ. և ուտէր 'ի պտղոյն. և
գոհանայր զԱծ ։ Եկեալ առ նա
մեծ կրիայ մի ։ սովորեցաւ և գայր
ստոր ծառոյն. և ապուղէն ձգէր
'ի ծառոյն զթուզ. և նա ուտէր.
և գոհանայր զնմանէ ։ Իսկ յետ բա

զում

զուամ ժամանակաց ասէ կրիայն ընդ ապուղէն, արեկ, որ տանիմ ըզ քեզ ՚ի կղզին առ ազգն իմ, որ պատուէն զքեզ. և քո աղէկին աղէկ առնեմ. զի գոհացեալ եմ զքէն, առ ազգն իմ։ Եւ ապուղէն հաւատաց նմա վասն երախտեացն զոր արարեալ էր ընդ նմա։ Իջ ՚ի ծառէն, և նստաւ իվերայ թիկանց կրիային. և սկսաւ գնալ ՚ի ծովն ՚ի ներս։ Եւ իբրև հեռացան ՚ի ցամաքէն. ասէ կրիայն։ Գիտացիր սիրելի եղբայր իմ կապիկ. զի կին իմ հիւանդ է. և տացին բժշկքն. թէ զկապկի սիրտն և զերիկամունսն եփեցէք, ու զջուրն առէք որ խմէ. որ ողջանայ. ըզ քեզ այնոր համար կուտանիմ։ Կապիկն իբրև լուաւ կանչեց իւր ամէն զօրութեամբն՝ և ասէ. հազար վայ զիս, և շատ աւաղ է՝ որ չկայ ՚ի հետս։ Դարձիր եղբայր, դարձիր. որ աքենաէր չլինիմ։ Որ առնում

զսիրտն

զսիրտն իմ և զերիկամունսն իմ. զի
մեր սովորութիւն է որ 'ի ծառն կա
խեմք՝ յորժամ 'ի Ճանապարհ եր
թամք. և շատոց առողջութիւն է
ելեալ Ա.Է: Եւ կրիայն հաւատաց
ապուզնային. դարձաւ և գնաց
'ի ծառի տակն. և ապուզնայն վա
զեց և 'ի ծառն ելաւ: Եւ ասէ
կրիայն՝ փութա՛ և եկ Ճարտար՝ որ
ժամանեմք հիւանդին: Ասէ կա
պիկն. թէ ես այլ հաւատամ քեզ՝
և իջնում 'ի ծառէս. քան զէշն
անմիտ լինիմ. որ զերծաւ 'ի բերա
նոյ առիւծոյն. և անկաւ դար
ձեալ 'ի ձեռն կամաւ՝ և սատակե
ցաւ: Եւ ասէ կրիայն, դատիս յԱ.Ծ
զի սուտ ասացեր. և կապիկն ասէ.
դու դատիս յԱ.Ծ, որ ինձ զստութիւն
ուսուցեր: Եւ ասէ, վրձք է որ ստով
ապրեցայես ոչ կաքաւն, և չխոն. որք
խաբեցին, և ապրեցան: Ցուցանէ:
Թէ բարեմոռացն Ա.ծամոռաց է.
և թէ բարքն առնես մարդոյ. և նա

ջանայ

Ջանայ քեզ չար առնել. դու հե
ռացիր 'ի նմանէ :

իբ Ի գազան մի յանմարդաբնակ տե
ղիս. և են եղջիւրք իւր ոստ
ողոց. և մտանէ 'ի մորենիս և սկա
նի խաղալ եղջերօք ընդ ծայրս ծա
ռոց. և ձուղք բարակք պատա
ռեն և կապեն յեղջիւրս նր, և ոչ
կարէ արձակել՝ սկսանի գոչել. լսեն
որսորդքն, և գան սպանանեն զնա :
Հնուցանէ : Ով է կապիմք 'ի սէր և 'ի
փառս աշխարհի. և հեշտանամք
'ի մեղս, և 'ի պիղծ ցանկութիս.
դիւրաւ գտանէ զմեզ սատանայ՝ և
սպանանէ :

իգ Ի գազան մի 'ի ծովս. որ հուր ու
տէ. գան որսորդք նր և վա
ռեն կրակ յեզր ծովուն. և իւ
րեանքն թաքչին. նա ելանէ 'ի ծո
վէն և փափագանօք լափէ զկայծա
կունսն. և անկեալ թմբրի 'ի զօրու

թէ հրոյն. և որսորդքն յարուցեալ
հարուն զնա ունայն. և այս է, որ
ասեն թէ մորթ նո՛ր 'ի կրակն ձգեն,
և չայրի: Ցուցանէ: Թէ մարդ բնա
կեալ է 'ի ծով մեղաց և հեշտու
թե. և անզեղջ սրտիւ ուտէ զմեղս
ջերմացեալս հրով ցանկութե՛ դիւ
աց: Իսկ թմբրեալ կայ 'ի մեղս մեծա
մեծս. նա որսորդն սատանայ ան
յաղթ գայ. և սպանանէ զհոգիս
մեր:

Ա. գաղան մի, որ ձուն՛ դնէ 'ի խդ
պէտս բժշկութե: Իսկ յորժամ
տեսանէ զորսորդն զի նեղէ զնա.
նա խուր ատամօքն հատանէ զձուն
խուր և ձգէ յորսորդսն. և ինքն փախ
չի: Ցուցանէ: Թէ զորինչ սատա
նայ սիրէ, և որով գայ զհետ քո.
դու զայն կտրէ և հան 'ի քէն. որ
յիւր սերմանցն չգտանի 'ի քեզ.
և դու փախիր 'ի նմանէ բարեգոր
ծութե:

ՃԽԵ Է գազան մի 'ի ծովն • յորժամ
քաղցենայ բանայ զբերանն իւր •
և հոտ անուշ գայ 'ի բերանոյ նո
րա • և գան ձկունքն և մտանեն 'ի
բերան նորա • և նա փակէ զբե
րան իւր • և այն է կերակուր նր̃ ։
Ցուցանէ ։ Թէ այսպէս բացեալ է
սատանայ զբերան իւր իբրև զա
ռիւծ և զվիշապ • և հոտ անուշ մե
ղաց գայ 'ի բերանոյ նր̃ • և քաղց
րանայ • և պարարտանայ 'ի քիմս, և
'ի հոտոտելիս հոգւոց մերոց ։ Եւ
մեք կամաւ երթամք զհետ հաճոյ
ա̃մ մեղաց • 'ի գործել զմեղս մտա
նեմք 'ի բերանն՝ և 'ի փոր նր̃ • և նա
փակէ զբերանն իւր ի վ̃ր մեր • և
մեր յամեալ 'ի մեղս • և անյոյս ե֊
ղեալ յելանելոյն, մնամք անզեղջ ։

ՃԽԶ Էր միակեց մի 'ի սահմանս գեղջ
միոյ • և ազդմամբ չարին ան
կաւ 'ի շնութ̃ն յոլով ժամանակս ։
Եւ տանուտէր մի եբեր շուն մի

գամփռ և սաստիկ ուժեղ. որ զբոլոր գիշերն շուրջ անցանէր 'ի բոլորն, պահէր զգեղն 'ի գազանաց: Եւ ահա գայր միակեցն 'ի գիշերի շնալ 'ի գեղն պոռնկութե՟: Եւ պատահեցաւ նմա շունն այն յեզր գեղջն. դափեցաւ խլերայ միակեցին և էխած զնա. վարեաց զնա մինչև 'ի խուցն իւր. և բազում վիշտս և նեղութիս հասոյց նմա: Եւ նա եմուտ 'ի խուցն իւր փակելով զդուռն. զղջացաւ, և ասէ լալով և հառաչանօք. թէ վայ ինձ: Ո՛վ, այս բա- ոչ
զում ժամանակ է որ ոչ երկեայ, և ոչ զարհուրեցայ 'ի քէն. և սպառնալեաց քոց և 'ի տանջանաց դժոխոցն: Եւ այսօր 'ի դամփռ շանէ միոյ հանց զարհուրեալ երկեայ, և փախուցեալ ոչ կարացի շնալ: Ո՛րդ՝ ողորմեա Տ՟ր, և խլեա զիս 'ի ձեռաց սատանայի: Եւ 'ի ժամն եթող զնա սատանայ. 'ի պոռնկութէն զղջացաւ, և ապաշաւեաց:

Ցուցանէ ։ Ո՛ր մարդիկ ապրե ցան 'ի մեղաց և 'ի դժոխոցն յահէ սպառնալեաց թագաւորաց՝ և իշ խանաց՝ և առաջնորդաց՝ և դա տաւորաց՝ և յամօթոյ մարդկան՝ և 'ի նախատանաց. զի այս 'ի ձեռս է. և կան 'ի յուխտ և յԱ՟յն համա րելոյ և 'ի հանդերձեալն ։

խէ Էր միակեցին, որ արար չնուէն 'ի խուցն իւր. նա ձգէր զկնկուղն իւր և հանկրիձէր. և սկսանէր սաղ մոսել և ծունր դնել. լայր հառա չանօք և ջերմ արտասուօք ։ Հար կանէր զերեսն և զկուրծսն. և ձգո ղէր զմօրուսն, և թքանէր 'ի նա ։ Ու ձանձրացաւ սատանայ յաղօ թիցն. գայ առ նա 'ի գեշեր մի, և ասէ ցնա. գարշելի պիղծ, քանի ան հանգստես զիս՝ և նեղես. գաս, առնես զկամս իմ, չնաս և ուրախ առնես զիս. և դարձեալ զզջանաս յինէն, և առ Ա՟ծ դառնաս, լաս, և

հա

հառաչես, և տրտմեցուցանես զիս։ Եւ ասէ միակեցն. ո՞վ դու նզովեալ շուն. որ մեղօք քո դու զիս 'ի յայս խուցս դարափորձ դաս։ Դու ուռուամբք հարկանես զգլուխ իմ. և յիմարեալ գործեմ զմեղս. իսկ յորժամ զարթնում և խելք իմ 'ի յիս գայ. և ես ուռուամբք զքեզ հարկանեմ. զի Ա̃ծ իմ ողորմած է, և ոչ թողու զիս 'ի ձեռս քո։ Յայնժամ շնորհօքն Ա̃յ հալածեցաւ 'ի նմանէ դևն պոռնկութեան։

Էր միակեաց մի, որ արար շնութի̅ երեք տարի, և հայր վանացն հոգետես էր՝ և ոչ կարէր իմանալ։ Եւ յաւուր միում իմացաւ հայրն զչար գործ նորա. կոչեաց զնա և ասէ. ասա ինձ ուր էիր յայսմ գիշերի. և ընդէր բարկացուցեր զԱ̃ծ։ Եւ անկաւ առ ոտս հօրն և ասէ. մեղայ Ա̃յ։ Այս երեք տարի է որ շնայի. խ.

և ասէ հայրն զինչ գործ առնէիր դու՝ որ Ա՟ծ յինէն ծածկէր զքո չարն։ Եւ նա ասէ, թէ խմասովորութն էր, որ ամէն գիշեր երթայի շընալ․ ես ութ կանոն սաղմոսն, և զապաշխարութն շարականսն լալով ասէի, և հառաչանօք ՚ի գալն․ և յայսմ գիշերի ծուլացոյց զիս սատանայ՝ և անյուսացոյց․ թէ չէ օգուտ։ Ես ընաւ զԱ՟ծ ոչ յիշեցի՝ և ոչ սաղմոսեցի։ Ասէ հայրն, օրհնեալ է Ա՟ծ, և ողորմութն և քաղրութն նորա․ որոց կամի զկորուստ մարդոյ։ Որով հետև Ա՟ծ ոչ յիշեաց զայն շնութն քո։ Նոյնպէս և ես թողում քեզ յայսմ գիշերիս ողորմութբն Ա՟յ։ Եւ նա դարձաւ առ Ա՟ծ՝ և եղև այր կատարեալ ապաշխարութբ և բարեգործութբ։

խթ Կատուն հագաւ փիլոն, և եղև կրօնաւոր․ և ասաց մկանցն թէ այլ չհեղում արիւն զի մտայ ՚ի կարգ

ապաշ

ապաշխարութեն ։ Ասեն մկունքն,
թէ քեզ ոչ հաւատամք կեղծաւոր․
թե զանտոնն կարգն իւր քո տեսա
նեմք ։ Յետ այսորիկ գնաց ՚ի ջրա
ղացն ընկաւ թէ ես գերըն եմ, գայ
ին մկունքն և ասէին․ ով դու չար,
ոչ հաւատամք, թէ դու գերընես․
Յետ այսորիկ կատուն եղև սուտ
մեռեալ և յանցս մկանցն պառկե
ցաւ․ գան մկունքն և ասեն․ ով դու
նենգաւոր․ թէ և պարկ լինի մոր
թիդ քո ոչ հաւատամք․ ոչ թո
ղուս զսովորական չարութին քո ։
Ցուցանէ ։ Որ մարդ չար չթողու
զիւր չար սովորութին ։

Պարծեալ զկատուն լուսակալ ծ
դրին թագաւորին իւր ոսկի
բարձին․ և արարին զպքին․ և
տային նմ ՚ի կերակրոյ թագաւո
րին․ և ասացին, թէ թողէք զսովո
րական բանս ձեր․ և նոքա ասացին
թէ ոսկով ծածկէք զմեզ կամ մար

գարտօք· ո՛չ կարեմք թողուլ զսովո րական բանս մեր։ Ս ի կատուէ՜ լինի բե րանն յորժամ տեսանէ զմուկն դո ղայ՝ և ոչ կարէ թողուլ զքնթըմ թալն։ Ցուցանէ։ Խէ զոր փոր ձես որ չէ բարքն անարատ· այլ նենգաւոր և չար· թէպէտ կեղ ծաւորի, և բարի առնէ մի հաւա տար նմա· զի ոչ կարէ թողուլ զսո վորական բարս իւր։ Ս ի խիստ բա րի մարդ պիտի, որ խոնարհեցուցա նէ զկամս իւր և զսիրտն· զի ասէ Մ ծաբանն· թէ սովորութիւն բե րան լինի, և ամրանայ։

ԾԱ Որսորդ մի կայր յարևմուտս· և ետես զկրիայն յարևելս· և յա րեաւ գնաց առնուլ զնա· և ակա յամիլ՝ ի Ճանապարհին յայլ գործ։ և աշակերտքն նր՟ փութցուցանէին, զի մի փախիցէ որսն։ Նա նա ասէ մի վախէք զի անմիտ է և ոսկրապատ՝ անզօր՝ ոչ կարէ փախչիլ· և յոր ժամ

ժամ երթամք մեր է նա։ Յուցանէ։ Թէ օրսորդն սատանայ է. և կրիայն մեղաւորքն են. և ասէ սատանայ ընդ դևամն իւր։ Մի՝ փութայք, և ջանայք. Թէ երթամք՝ի տուն կախարդաց՝ և զրկողաց՝ արբեցողաց՝ շնացողաց՝ և սպանողաց՝ և այլ մեղաւորաց. զի նոքա զհետ մեր են կամաւ. և առնեն զկամս մեր, վ՞ն նոցա մի նախատիք։ Պ՝նացէք՝ի մբ մարդիկքն, և ընդ նոսա կռուեցարուք. զի որ առնու ըզբերդն և զքաղաքն. այն երկիրնն է։

Երեք ուղտք, և երեք աղուէսք ծբ
եղեն եղբարք. և՝ի ճանապարհին գտին երեք հաց մբ։ Եւ ուղտքն առին զհացն. և յարուցեալ բարձրացուցին զգլուխս իւրեանց՝ աղապակելով ուտէին զհացն։ Եւ աղուէսքն լալով անկեալ առ ոտս նց. և ուղտքն կոխեալ սատակեցին զաղուէսսն։ Յուցանէ։ Թէ մեծա

տունք և իշխանք ծծեն զզօրութի՟ւ ժողովրդեան. և շատք այնք են որք աղքատանան յաւելադատելոյն. թագաւորաց՝ և իշխանաց՝ և առաջնորդաց. Հանց որ նեղին 'ի չքաւորութիւն, և մեռանին:

Գ Կին մի գնայր ընդ դրախտն իւր վ՟ն մրգաց. և տես ցորդին իւր, թէ ով որդեակ իմ անկնկալ իվեր. և պահէ զմանր ձագերն, մինչև գամ ես: Յարեաւ որդին և շարեց 'ի մի չոր՟ան զամէն ձագերն. և կապեաց զծայր չոր՟անին յոտս հաւուն. և ինքն խաղովեղաւ: Նու ահա գայ 'ի վերուստ ուրուրն. վերացոյց զմինն ձագերուն. և գնաց ինհետ մայրն և այլ ձագերն: Ցուցանէ: Թէ. Բ՟ն համբարձաւ յերկինս. և վստահացաւ զժողովուրդն 'ի Թագաւորն, և յիշխանն, և յառաջնորդն. և նոքա զբաղեցան 'ի հող և 'ի մեծութի՟ աշխար

աշխարհի. և չտամնին խնամք հօտին
Ք-ի: Այս սատանայ լցոյց մեղօք
առհասարակ, և իջոյց ՚ի դժոխս:
Մեղաւ թագաւորն, և իշխանն,
և առաջնորդն, և ժողովուրդ. զի
ամենեքեան խոտորեցան, և անպի
տանացան. քանզի ժողովուրդն
կապեալ է ՚ի թագաւորն և յառաջ
նորդն:

Այր հարսն մի հեզ և համբերող. ծդ
և կամեցան փորձել զնա սկես
ուրն և սկեսրայր նր: Ասէ մինն
արի փակեա զդուռն. ասէ մէկ
այլն՝ թէ բաց զդուռն. զի ծուխ է
և նեղ է զմեզ. և դարձեալ ասէ
թէ փակեա և բաց. և նա սկսաւ
փակել և բանալ. յերկարեց և ոչ
բարկացաւ: Ցուցանէ: Ասէ առա
քեալքն, և մարգարէքն, և հայ
րապետքն, համբերութբ և հեզու
թբ քարոզեցին աշխարհի:

ԻԵ Մի աղքատ երթայր 'ի գիւղմի. հիւանդացաւ 'ի ճանապարհին. և աղաչէր զԱ՟ծ պատրաստել նմա դրաստ, որ 'ի չէն տանէին զնա։ Եւ ահա գայ ումն չարաբարոյ հարկանել զնա բրով և ասէ։ Ա՟րեյոտն և շալկե զքուռակս. զի ոչ կարէ գալ 'ի հետ մօր իւրոյ։ Նա յարեաւ և լայր՝ զի ոչ կարէր կանգնիլ։ Եւ այրն չարաբարոյ ոչ դադարէր 'ի հարկանե լոյ զնա։ Եւ նա ասէ, վայ ինձ Ա՟ծ իմ, զի փոխանակ թեթևացուցանելոյ՝ ծանրացուցեր իվերոյ իմ վիշտս։ Ցուցանէ։ Թէ շատք աղաչեն զԱ՟ծ և ակն բարւոյ ունին յԱ՟յ և 'ի մարդկանէ. և գայ տանջանք և վիշտք իվ՟ր նոցա։

ԻԶ Այր մի մեծատուն գնաց խնամ մէխօս որդւոյ իւրոյ ըստ սովո րութե մարդկան։ Գ.այր կոյսն զոր խնդրէր, և նստաւ 'ի մօտն. և ասէ առնն՝ ո՛վ հայր օրհնեալ է գա լուստ

լուսոյ քո։ Ապա թէ գաս որ 'ի Հռոմ երթամք բարւոք առնես. և անտի դառնամք յեմ. և ապա եղանեմք 'ի վիրապն։ Ասէ այրն. վա՛յ որդեակ, ես եկի որ գքեզ տանիմ. իսկ դու զիս հանես 'ի տանէ իմմէ։

Յուցանէ։ Թէ Քս եկն 'ի խնդիր մարդկան. Նա երթայ ամ ոք ընդ որ իւր կամքն է. ո՛չ լսեն կոչմանն Քի։ Ա՛յս է առակս. և վարդապետն յոր ժամ երթայ 'ի քաղաքէ և չգայ ոք 'ի քաղաքն։

Աղուէսն եգիտ ուղտ մի մերձ 'ի ծէ
մահ. և նստաւ առ նա։ Իսկ ասէ ուղտն. Ինչ պէտս նստար աստ ո՛վ դու աղուէսուկ։ Ասէ աղուէսն զի թէ մեռանիս ես կերակրիմ 'ի մնէ քումմէ։ Իսկ ասէ ուղտն ո՛վ գերի աղուէսուկ. չկարես ժուժել զի պարանոցս իմ երկայն է. և հոգիս յուշ ելանէ։ Ասէ աղուէսն. Թէ ես սատակիմ համբերող եմ ազգաւ՝ թէ

քառասուն օրն ապաննջես ես աստ
նախիմ։ Յուցանէ. Թէ պարտ է
համբերել վարդապետին. հեզու
թ̃բ օգտեցուցանել զժողովուրդն.
և քաղցրութ̃բ կոչել զմեղաւորսն.
Ոչ ի չկայ մեծ բարութի̃ւ քան զհամ
բերութի̃ն։ Նուաճեալքն. և մար
գարէքն՝ և հայրապետքն՝ համբե
րութ̃բ և երկայնմտութ̃բ զաշխարհս
լուսաւորեցին՝ և Ն̃ն ետուն։

Քահանայմի գողացաւ զկով այրի
կնոջ միոյ՝ և էած յախոռն.
և կինն իմացեալ, ասէ առ քահա
նայն։ Ով Տէր ժամ է ինձ մահու որ
խոստովանիմ յախոռ քո. և էրէցն
անցոյց զկովն 'ի ներքին տունն. և
անտի յեկեղեցին։ Նոյն կինն ասէ.
ով Տէր, զմահու խոստովանութիւն
պարտ է որ յեկեղեցին ասեն։ Նոյն
էրէցն էհան զկովն 'ի բեմն. և զվա
րագուրն իդէմ քաշեց. իբրև մոտան
յեկեղեցին և նստան։ Յայնժամ
կինն

կենն զվարագոյրն 'ի վեր կալաւ, և ասէ ։ Ով գարշելի, զքեզ կոչ գետեղի․ արդ պատարագօղ ոմ արար, ասա ինձ ։ Ցուցանէ ։ Թէ այսպէս համբերութեամբ և իմաստութբ պարտ է առաջնորդին քննել՝ և ստուգել զամ քահանայս․ և իմանալ զվարս նց ։ Որ չէ արժան պատարագել ծածկաբար յանդիմանել․ և չտալ թոյլ խաչել զորդին Այ անարժան պատարագօք՝ և հաղորդութբ ։

Այր մի մարդասպան փախեաւ․ և գնացեալ անցանէր ը գետն որ կոչի Նեղոս․ և տեսեալ յեզր գետոյն զառիւծ մի․ և փախուցեալ ելաւ 'ի ծառ մի մեծ ։ Իսկ ահա կայր 'ի ծառն ահագին վիշապ մի․ և նա յահէն 'ի վայրանկաւ 'ի ծառէն ։ Իսկ ահաւել 'ի գետէն կոկորդիլոսն և եկուլ զնա ։ Ցուցանէ ։ Թէ չկարէ փախչել մեղաւորն 'ի ձեռացն Այ․ ԾԹ

Ա.Ճ. որ ոչ զղջանայ և ելանէ 'ի մեղացն. նա կամ յայս կենանքս կամ յայնկենանքն առնու զհատուցումն գործոց իւրոց։ Ոչ ասէ յոբ. թէ որ չար է մի յուսացի անպարտ լինել. և առաւել մարդասպանքն և զրկողքն։

Կ Երինջքն խայտային և զեղլինան խրատուէին. եթէ ոչ դադարիք յաշխատելոյ։ Ահա եկն թագաւոր գաւառին, և ժողովեալ զերինջան և սկսան կոտորել. զի ճաշ կազմէին թագաւորին, և զօրացն։ Ահա որ դեակք մեր վնասաւոր պարապորդ հանգչէիք և դուրանայիք։ Ցուցանէ։ Ասէն ամ որքն ընդդատս ձախակողմանցն. թէ ահա որդեակք. այդ կայր ձեզ պահեալ. որ 'ի հուրն այրէիք։ Ո՛ի այն կենանքն բաէիք զմարմինս ձեր հանգստեամբ և մեղօք. և զարդարն նախատէիք. դուք այժմ նախատիք։

Վարազն սրէր զատամունս իւր կա
մեծ աշխատութբ, և եսանիւ:
Եւ աղուէսն ասէ ըէր աշխատիս
զի առ ժամանակս չկայ կռուոյ
բան: Ասէ վարազն կռուիր դու
գարշելի. զի ես հմուտ եմ պատե
րազմի: Եւ արդ կարէ պատրաստել
զէնս իւր: Ցուցանէ: Թէ 'ի յայս
կեանս պարտ է զղջանալ և ապաշ
խարել զմեզս. զի յաւուր դատաս
տանին չկայ ճար ներելոյ կամ ողոր
մելոյ. որպ ցուցանէն մեծատունն
և յիմար կուսանքն:

Արծուին յորժամ ծերանայ կբ
բարձրանայ մինչև 'ի տապ արե
գական, և ջեռմանայ և գայ 'ի վե
րուստ մեծ լուութբ: Եւ իջեալ 'ի
սառն աղբիւր մկրտի. և ելեալ
թաւալի, և թափի 'ի նմանէ հնա
ցեալ փետուրն նր. և նա մանկա
նայ և նորոգի ամենևին: Ցուցանէ:
Թէ ով որ ծերանայ և հնանայ.

անօ

անօրէնութե՟ և չար գործովք· պարտի բարձրանալ հոգւով առ Ք͞ս· և ջերմանալ հրով սիրոյ ն͞ր· և մկրտել զանձն ՚ի ջերմ արտասուս· և լուա́լ հաւատչանօք զշարաւ մեղաց· մեծ յուսով և ողորմութե՟ն Յ͞ի· և թափել յինքենէ զհնացեալ փետուրն մեղաց· և ազատիլ ՚ի դժոխոցն· և հասանել բարեացն Յ͞ի։ Ո͞պ վկայէ մարգարէն դաւիթ· կատարէ ՚ի բարս զցանկութի՟ս քո· և նորոգէ որպէս զարծուո́յ զմանկութի՟ս քո։

կգ Արծուի́ն երթայր ընդ երկինս· և հարին զնա նետիւ· և զարմացաւ թէ ո՞ զայս արար։ Հայեցաւ և ետես ՚ի նետն զթեւն իւր· և ասէ, վայ ինձ զի ահա յինէն եղև պատճառ սպանման իմոյ։ Ցուցանէ։ Ա͞ւէ ՚ի մէնջ է նիւթն որով սպանանէ սատանայ զոգիս մեր· զի նա յորդորէ ՚ի չարիս, և մեք կա

մաւ և յօժարութե̄ երթամք զհետ
կամաց ն̄ր։

Քերմոտ մի էր բաղմօրեայ. և կդ
խրատեցին զնա, թէ երթ՚ի
դուռն քաղաքին. և զառաջին
մարդն որ տեսանես, ասա առ նա.
թէ քոյդ ինձ, և իմն քեզ. և գնաց։
Եւ ահա գայր գողն մի. որ շարաւ
էր անձն ն̄ր՚ի խոցոյն. և նա դողաց
յահէն։ Եւ ասէ ցնա, ով եղբայր
հայեաց յԱ̄Ծ. քոյդ քեզ՝ և իմս
ինձ։ Ցուցանէ։ Թէ սատանայ
սկսանի անյուսել զձեզ՚ի մեղս. և
հեռացուցանել յԱ̄Յ՝ ոչ և ինքն
եղև. և դու յայնժամն ասա զա
ռակս առ նա. թէ քո անհաւատու
թեն քեզ. իսկ ես անպէտ և մե
ղաւոր եմ։ Բայց զԱ̄Ծ ոչ կարեմ
ուրանալ. զի անդադար կոչէ զիս
քաղցրութե̄. թողում զմեղս իմ,
և երթամ առ նա յուսով։

կե Գայլն և աղուէսն եղեն եղբարք, և գնացին որսալ զձուկն։ Ասէ աղուէսն ցգայլն՝ արկ զագիդ քո 'ի գետն զի ըմբռնեսցուք ձկունս. և էր ժամանակն ձմեռնային։ Իբրև էարկ գայլն զագին 'ի ջուրն. պաղեցաւ ջուրն, և կապեաց զագին։ Ասէ աղուէսն. ահա քեռնի մեր զօրութեդ ցունց տուր զի ձկունք բազումք են. քաշէ զագիդ քո, զի ձուկն բազում է ըմբռնեալ։ Իբրև ցունց եւ հատաւ ագին 'ի սառն. և նա կսկծեալ վայէր զանձն, և լայր։ Ասէ, վայ ինձ, զի թափեցայ յագուս. և ձուկն ոչ ըմբռնեցի։ Ցուցանէ։ Թէ այսպէս կապէ սատանայ մեղօք մինչև 'ի մահ. և թափէին յայս կենացս, և յայն։

կզ Ասի յառակաց թէ աղուէսն գըտեալ թուղթ մի գրեալ. և տարաւ առ գայլն, և ասաց։ Այս չափ ժամանակս աշխատեալ եմ.

և

և զմարդիկ բարեխօս եմ ձգեալ. և
'ի պարնէն գիր և հուքմ եմ հա
նեալ. որ յամէն գեղ՝ և յամէն գեհ՝
ուր համդիպիս ոչխար մի քեզ տան:
և յամէն տուն հաւ մի քեզ բաժինս
հանեն: Այլ ո՛չ շուն. և ո՛չ մարդ
քեզ զահմաթ չտան: Եւ այնպէս
խաբեալ գայլուն գնաց զհետ ա
ղուէսուն: Եւ յորժամ գնացին,
ինքն աղուէսն եկաց ի վ̄ր բլրի միոյ.
յեզր գեղջն. և յուղարկեաց զգայլն
'ի գեղն. թէ գնա, առ զքո ողոփայն.
Եւ ես զթուղթս պահեմ, ո՛վ որ
չտայ նա ես ցուցանեմ, որ տան: Եւ
գայլն հաւատացեալ. մինչդեռ
երթայր յեզր գեղջն. յայնժամ
մարդիկք և շներն իմէջ առեալ
կամէին սատակել: իսկ գայլն ձայ
նեաց առ աղուէսն. թէ բեր զպա
րոնի հուքմն որ տեսնուն այս մար
դիկս և աւատան. որ պարոնի հրա
մանաւն եմ եկեալ. իսկ աղուէսն
պատասխանի տուեալ ասէ՝ ով գայլ
'ի

'ի գեղջդ կարդացող չկայ՝ լսող չկայ՝ ինչ կայ որ թուղթ բերեմ: և այնպ̃ խաբեալ սատակեցին զգայլն:

կե Աղուէսն խաբէ զգայլն. և տայ նմա թուխթ տանիլ 'ի տանուտէր գեղջն. և բերէ նմա կերակուր: Իբրև գնաց գայլն 'ի գիւղն. թափեցան շունքն ի վր̃ նր̃ խածանել և վիրաւորել. և փութ փութ արարին: Նա իբրև եկն ողորմելի կենօք. ասէ ցնա աղուէսն. ընդէր ոչ ցուցեր զթուղթն. ցուցի, բայց հազար շուն կայ՝ որ զգիր չգիտէ: Ցուցանէ: Թէ մի վճէր, և մի ընկնիր իմէջ բազում տգիտաց և աներկիւղաց. այլ իմաստութբ̃ փախիր 'ի դեւաց և 'ի նոցին կամարարաց:

կը Աղուէսն եգիտ զպանիր յորոգայթն: Երթայ առ գայլն և ասէ. ո՛վ եղբայր, եկ և առ զպանիրն, և կեր. զի ես 'ի պաք եմ. և

գնաց

գնաց գայլն առնուլ զպանիրն. և անկաւ որոգայթն 'ի վիզ գայլոյն. և պանիրն 'ի դուրս թռեաւ: Նառ աղուեսն, սկսաւ ուտել. ասէ գայլն, թէ եղբայր գէմ այսօր ուրբաթ է. մի ուտէր որ չի բարկանայ քեզ Ա՛ծ: Ասէ աղուեսն. որոգայթդ 'ի պարանոց քո անկաւ՝ և այդ է բարկութին Ա՛յ: Եւ սկսաւ գայլն ցնցտել յայսկոյս և յայն կոյս: Եւ ասէ աղուեսն ցգայլն. ես այլ շատ ցանցեցի երբ ըմբռնեցայ: Եւ ասէ, գայլն վայ ինձ զի նեղիմ չարաչար: Ասէ աղուեսն, ո՛վ եղբայր, դեռ չես վայ՝ մինչև գայ տէր պանրիդ: Ցուցանէ: Ոչ է զգաստ լեր, որ չխաբուիս 'ի սատանայէ. զի կապէ զքեզ սատանայ 'ի մեղս, և 'ի հեշտութիս: Յայնժամ ազատ տաս վայ անձին քոյ՝ յորժամ գայ Ք՛ս 'ի դատել զերկիր:

կթ Ասի յառակաց՝ թէ թագաւոր մի կայր. որ ունէր իւրն սիրելի զօձ մի. որ յամէն օր կարմիր դեկան մի բերէր թագաւորին: Եւ եղեւ որդի մի թագաւորին նոր ծնեալ. իսկ թագաւորն զմանուկն սնուցանէր իվերայ բարձացն. եւ առեալ զօձն արկանէր զպարանոցաւ մանկանն: Եւ այնպէս սովորեալ օձն եւ մանուկն խաղային 'ի միասին. եւ այսպէս ժամանակս ինչ՝ սիրով խաղային առ իրեարս: Իսկ յորժամ մեծացաւ մանուկն կապեալ սուր ընդ մէջս իւր. յաւուր միում 'ի խաղալն իւրում հանեալ մանկանն զսուրն էհար զտուտն օձին. եւ ընկէց յերկիր: Յայնժամ զայրացեալ օձին էհար զնա՝ եւ ինքն փախեաւ. մեռաւ որդի թագաւորին: Իսկ յետ սգոյն եւ մխիթարութեան, առաքեաց թագաւորն որ գտանեն զօձն. եւ աղաչէին զնա գալ 'ի տեղի բնակութեան իւրոյ: Եւ ասէ օձն, ո՛վ բարի թագաւոր. ան

դէպ է

դէպ է ինձ գալ առ քեզ: Ո՛րքանի
որ հայիս դու 'ի գերեզմանս որդւոյ
քոյ. և քանի որ հայիմ ես 'ի տուտնս
իմ, ո՛չ սրբի մախանքն 'ի սրտից մե-
րոց: ապայ այս բարի է, որ հեռա-
ցայ 'ի քէն: Ցուցանէ: Սուր նա-
խանձ և մախանք շարժի իվ՛ր քո,
դու փախիր անտի, և ապա սրբի մա-
խանքն այն: Թէ չար ինչ առնես
մարդոյ. փախիր, և հեռացիր յա-
չաց նր. և ապա սրբի սիրտ նր. զի
դառն ախտ է մախանքն. և որ կարի
երկիւղած է Այ. նա կարէ սրբել
զսրտին զոխն և զմախանսն:

Այր մի անմիտ և յիմար. ունէր Հ
դեկան մի: Առ զդեկանն, և
գնաց 'ի քաղաքն որ գնէ զէշ. շրջե-
ցաւ 'ի քաղաքն և ոչ եգիտ էշ միոյ
դահեկանի: Եւ մտեալ 'ի շուկայն
տեսեալ մեծագոյն ձմերուկ մի. և
ասէ հիացմամբ. զինչ է այս, և իմա-
ցան թէ յիմար է այրն. ասեն թէ

այս հնդիկ իշու ձու է․ որ համէ
հնդկցիս էշ մեծագլին․ և նա խնդա
լով ետ զդահեկանն և էառ զձմե
րուկն։ Եւ ապնտեաց ծախօղն թէ մի
Մի պատրաստ տար՝ որ չբեկի և
ելեալ փախչի․ և 'ի գնալն դիպաւ
ոտքն 'ի քարն։ Եւ զերծաւ ձմե
րուկն 'ի ձեռանէ նր̄․ գլորեցաւ
'ի թփերն 'ի ներս․ և վազեաց նա
պատառակ մի 'ի դուրս՝ և փախչէր․
'ի հետ վազէր՝ և ձայն էր նապաստա
կին՝ և ասէր։ Այ էշ հնդկաց՝ վայ
ինձ մի Փախչիր՝ քուր քուր ողորմիր,
և դարձիր առ տէրս։ Ցուցանէ․
Թէ այսպէս յիմարեցան քահա
նայք և ժողովուրդն․ և թափե
ցան 'ի մտաց․ որ զհետամտայք սուտ
և խաբօղ կենաց աշխարհիս․ որ
նման հողմոյ փախչի 'ի մէնջ՝ և նման
երազոյ պակասի։ Եւ ջանամք ըմբռ
նել զհեշտութի̄ և զմեղս աշխար
հիս։ Եւ լինիմք ողորմելիք։

Օձն

Օձն սնտուկնոս եղև հողագործ
մարդոյ միոյ։ Ու եկեալ ի գետ
մինչ առեալ ի ծոցն զօձն անցանէր
ընդ գետն. և օձն այլ ոչ կամեցաւ
ելանել ի ծոցոյ նորա։ Ու գնացին առ
բազումս, և արարին դատաստան
ի մէջ նոցա։ Ու եկին առ աղուէսն՝
ասեն, արա մեզ դատաստան. իմա
ցաւ աղուէսն զպատճառն, ասաց.
միականն ոչ կարեմ դատաստան առ
նել. ել ի ծոցոյն, և երես ընդ երես
զրուցեցէք ինձ զբանն ձեր։ Իբրև
ելեալ եկն։ Ասէ աղուէսն հողագոր
ծին՝ թէ հար զնա խթանաւդ՝ որ
կայ ի ձեռս քո. Էհար և սատա
կեաց զօձն. և սկսաւ գալարիլ,
Ու կեալ աղուէսն ըղորդեաց զնա
թաթովն և ասէ, թէ սնտուկնոս ես։
Հանցեղ ըղորդկեցիր։ Յուցանէ։
Թէ պատրաստ կացէք ի նենգաւ
որ մարդոյ. և մի հաշիւ միաւորու
թի առնես ընդ նոսա։ Դարձեալ
զայս ցուցանէ, թէ բարուք է. որ

զչար և զնենգաւոր մարդն ըղոր
դէ դատաւորն։

հբ Այն մի այրի ունէր կով մի. և իւր
խորթն ունէր էշ մի. և զկերա
կուր կովոյն գողանայր խորթն և
իշոյն տայր։ Իսկ կինն աղաչէր զՏ՟ր,
զի մեռցի էշն։ և կովն մեռաւ։ Այր
կինն, և ասէր. վա՜յ ինձ, զի հա՛կա
ռակ եղև աղօթից իմոց. միթէ Տ՟ր
ոչ կարաց ընտրել զէշն և զկովն 'ի
միմեանց։ Ցուցանէ։ Մի աղօթել
ընկերի քում չար հասանիլ. զի և
քեզ պատահի չար։ Դարձեալ
ցուցանէ թէ աղօթեա առ Տ՟ր. զի
ընդ հակառակս կատարէ Տ՟ր, երբ
ո՛չ լինի աղօթքն 'ի կամսն Տ՟ն. ք՟զի
նա գիտէ զօգուտն անձանց մերոց։

հգ Ուլուծն եռեա՛ զի ահա գայլն
փախստական ա՟մ կենդանիքն
ահիւ մեծաւ։ Հարց թէ յումմէ
գայք հանց փախստական. և նորա
ասեն

տեն Թէ 'ի մարդոյ. զի նա հալածէ զմեզ։ Եւ ահա եկն եհաս մարդ մի։ և ասէ առիւծն սպառնալեօք, Թէ դու ես մարդն. որ նեղես զամենայն կենդանիսն. և նա ասէ, այո ես եմ մարդն։ Եւ ասէ առիւծն ընդ մարդն. Թէ դու ես մարդն, եկ որ կռուինք։ զի ես քեզ միայն։ Ասէ մարդն չունիմ աստ զինչ կռուո՛յ. ապա Թէ գաս որ կապեմ զքեզ որ չփախչիս՝ զի զառիւծն պարծենկոտ եմ լսել։ գնամ և առնում զինչ կռուո՛յ, և գամ առ քեզ։ Եւ հաւանեցաւ առիւծն որ կապ է զնա. և կապեաց մարդն զառիւծն 'ի ծառ մի. և սկսաւ կաղնի մահակով հարկանել զնա։ Եւ ասէ առիւծն, Թէ մարդ ես. Թողես մարդ. ապա սերտ և անխնայ հար զԹիկունս իմ։ զի այս խելացս այսպէս վայելէ։ Ցուցանէ։ Թէ զօրաւոր մարդիկ խաբեն 'ի տկարաց, և տանջեն. և ինքեանք նախա

տեն

տէն զանձինս իւրեանց։ Նոյնպէս և յաւուրն դատաստանի դաք անզեղջ մեղաւորացն. արդարացուցանեն զարդար դատաստանն Ա՟յ. յորժամ ՚ի հուրն առաքէ զնոսա։ Ու ասեն, թէ այս վայելէ մեզ. զի ընդէր ո՛չ լսեցաք նմա. և ոչ արարաք զհրամանս և զկամս նր՟։

հդ Առիւծն հիւանդացաւ, երէքն գայլն ՚ի տես. աղուէսն յամեաց։ Նա արջն չարախօսեաց զնմանէ։ Ու յորժամ եկն աղուէսն, ասացին ըզ չարախօսութիւն արջոյն բարեկամք նորա։ Ու ասէ առիւծն, ո՛չ բարի գաս գարշելի. ընդէր յամեցար։ Ասէ աղուէսն, մի բարկանար թագաւոր բարի. զի աւհա երդնում ՚ի գլուխ քո. զի աշխատութ՟բ շրջեցայ յա՟մ բժշկապետսն. և ուսայ հիւանդութ՟ե քում դեղ։ Ու ասէ առիւծն բարի եկիր, իմաստուն կենդանի. զինչ է դեղն. և նա ասէ,

այն

պխտանի, և դիւրին ։ Հրամայեցին բժշկապետքն՝ թէ հանէք զմորթ արջուն տաքտաք, և արկէք ի վերայ առիւծոյն. և նա փութով քաշէ զցաւն 'ի նմանէ ։ Եւ հրամայեաց առիւծն, և կալեալ զարջն՝ սկսան քարշել զմորթ նոր. և նա վայէր, և փութս մեծամեծս արձակէր ։ Եւ աղուէսն՝ ասէ. այդ յերեսդ քո՝ և 'ի նոր, որ առ թագաւորն զմարդ չարախօսէ ։ և հանին զմորթն՝ և սատակեցաւ արջն ։ Ցուցանէ ։ Թէ չէ պարտ որ մարդ 'ի թագաւորաց տուն և 'ի դատաւորաց մօտանէ, նա զայլոց չարախօսէ. կամ մատնէ ։ Այլ մարդ զիւր հոգն հոգայ. և զիւր մեղքն տեսնու առաջև իւր ։

Ասի յառակաց. թէ ուղտ մի, ու հե
գայլ մի, և աղուէս մի գնացին 'ի մէկ ճանապարհ. գտին բլիթ մի հաց. որ անկեալէր 'ի ճանապար

հոր

Հորդացաւ. և ասեն ընդ միմեանս զինչ
արասցուք զայս զի չէ բաւական
մեզ ամենեցուն. ասէ աղուէսն սա
մեկի կերակուր է. և որ աւագն է
՚ի մէնջ՝ և աւուրքն հին. նա կերի
ցէ զսա. և հաւանեցան երեքեանն
բանին: Հարցին ցգայլն, ասա ըզ
թիւ ամացքոց. և նա ասէ, ես այն
գայլն եմ, որ յաւուրս ջրհեղեղին
նոյ ՚ի տապանին էառ զիս: Եւ ասէ
աղուէսն, օրհնեալ է Ած, իմ թո
ռին ընկերես. ես այն աղուէսն եմ որ
ստեղծ զիս Ած, և տարաւ առ ադամ,
որ անուանեաց զիս աղուէս: Եւ
տարաւ ուղտն զբերանն, և էառ
զբլիթն. և վերացոյց յօդս: Սկսաւ
ծամել. և ասէ, երբ դուք զայդ կու
ասէք՝ այս սրունքս զոր ես ունիմ չէ
յերեկէն ելած տղայի: Եւ յառաջ
անուն եդին ըղտաուն բադոս: և գայ
լուն մարկոս: և աղուէսուն թէոդո
րոս: և կամեցաւ գայլն ձգտիլ զի
առցէ զհացն յղտէն. նա զգլուխն
էառ

էաւ՚ի ծնդնամէջն՝ և սկսաւ գայլն
կղկնծկտալ. իսկ աղուէսն շուրջ ան
ցանէր, և ասէր բանիւ բազմաւ։
Բարձր է բագոս, կծկտայ մար
կոս. շուրջ անցանէ թէոդորոս։
Յուցանէ։ Թէ չէ պարտ աղքա
տին ընդ մեծ տանն ձկտիլ՝ և ՚ի
կռիւ մտանել. զի ոչ կարէ ՚ի գլուխ
ելանել։ Ոպ և ասեն առակաբանքն։
Խեցգետինն հետ օձին ձկտեցաւ՝
և կտրեցաւ. և թէ գրաստ որ գանձ
էր բարձեալ՝ ՚ի տղմի ոչ անկանի.
բայց օրն վերջին լինի արդար իրաւ
ունքն։

Սապիկն, որ է ապուղայն. սովորու հզ
թի ունի. որ զինչ տեսանէ ՚ի
մարդն զայն առնէ. եթէ զի
ձկնորսն ձգեաց զուռկանսն իւր
ձկանց. և ինքն եւս ձգեաց՝ ըմբռնե
ցաւ ՚ի նմա։ Նու ասէ լալով՝ յիրաւի
ըմբռնեցայ ՚ի հանց տեղի որ չէի
հմուտ։ Յուցանէ։ Թէ ով մարդ

մի

մի՛ ձեռնարկանէր՝ և մի՛ ցանկար
գործոյ որ չես հմուտ: Ո՛չ է քեզ
դէպ թէ մարմնաւոր և թէ հոգևոր
աստիճան. զի կորուստ լինի քեզ՝
և ո՛չ շահ:

ծէ Արագիլն մեծ բանութե գայ յա
մուսնութն հրամանաւն Տ՟ն
որ ասէ. քանզի սիրէ, որ ո՛ք մնայ.
և տատրակն ոչ նստի յոստն կանաչ՝
եթէ մեռանի ընկեր նր: Ցուցա
նէ օրինակս: Թէ ով մարդիկ սի
րեցէք զսրբութն և զողջախոհու
թն: Բայց վասն որդեծնութե
մտէք յամուսնութն, և մի՛ վ՟ն աղտե
ղութե:

հը Ագռաւն ժողովեաց զձագս իւր՝
և խրատէր զնոսա՝ և ասէր. ով
որդեակք, մի՛ լրբիք. պատրաստք
եղերուք ՚ի մարդկանէ՝ յորժամ
խոնարհին առնուլ ինչ: Ասեն ձա
գերն նմ. ով մայր մեր՝ զինչ արաս

ցուք. Թէ առաջադոյն լինի մարդն առեալ զքարն 'ի ձեռն իւր. և ասէ մայրն այժմ գիտեմ որ ապրելոցէք։ Ցուցանէ։ Թէ պարտէ պատրաստել 'ի հին որոգայթիցն սատանայի. 'ի նր̃ պատրանացն, և 'ի նենգութեց նր̃։

Արադիղն՝ և Յայելին՝ և տղոցն ըզ ՀԹ
ծերացեալ հայրն իւրեանց զարմանեն՝ սնուցանեն՝ և ծառայեն. մինչև մանկանայ՝ կամ մեռանի։ Ցուցանէ օրինակս այս։ Թէ պարտէ մեծարել և զարմանել ըզ ծնօղս. և հնազանդիլ։ ոպ̃ և Ա̃ծ հրամայեաց։ Պատուեա զհայր քո և զմայր. որ զծնօղս անարգէ զԱ̃ծ անարգէ. և զինչ որ 'ի հետ ծնողաց առնեն հետ Ա̃յ են արարեալ։

Աղուէսն քաղցեաւ և ետես 'ի Ձ
հոր մի բուդ քար. կարծեց թէ պանիր է. անկաւ 'ի ներքս, և սկսաւ

ուտել. և ասէ, վա՛յ ինձ, զի ոչ համ
ունի և ոչ հոտ։ Յուցանէ։ Թէ
ով մարդ մի անկանիր 'ի բուռն մե
ղաց։ զի անշահ իրք է մեղքն, և
անօգուտ. զի յետոյ շատ ապա
շաւես։

ձա Սղոմէեան 'ի գետն անկաւ՝ և լի
նէր գետատար. խոստացաւ
Ս.Ծ մարզան մի խունկ. զի հանցէ
զնա 'ի գետէն. և զերծեալ 'ի գե
տէն՝ և սկսաւ 'ի ժխտել. և մոռացաւ
զուխտն զոր ետ Ս.Ծ։ Խաղայր, և
լայտայր յեզր գետոյն, և ասէր.
Թէ Ս.Ծ ինչ կարիս ունի 'ի ծուխ
խնկին որ յօդս ցնդի։ Նու ահա շար
ժեցաւ դարավին գետոյն. և սկսաւ
գնալ ի վր նր. և նա բաղով գոչեաց,
և ասէ. ո՛վ Ս.Ծ ոչ խնայցար զի ես 'ի
խնդիր եղայ մարզանին որ զքո խուն
կըն բերեմ, զոր ուխտեցի քեզ։ Յու
ցանէ։ Թէ ոչ է պարտ մոռանալ
զուխտն՝ զոր ուխտեաց ոք Ս.Ծ 'ի

նե

նեղութե՛ իւրում. նա և զհանդերձ ձեռալ նեղութե՛ն մի մոռանար։

Րղոճէս մի քաղցեալ, եգիտ ձբ
զատուն և զպար. ցանկացաւ ՚ի
ձմեռնային աւուրն՝ սկսաւ ուտել
զնա։ Եւ ասէ վայ ինձ, զի ահագին
գլգլունս և աղաղակս ՚ի գլուխս և
յատամունս իմ. և ՚ի փորս ընաւ
ինչ ոչ իջանէ։ Ցուցանէ։ Եթէ
փառք և մեծութիւն աշխարհիս
զերդ երազ է. և միայն ղաղաղակն
ունին, և զբաղումն. և յետոյ ոչ
երևի ուրէք. զի սուտ է և անցաւոր
և խաբօղ։

Րղոճեան եգիտ զրէհ մի. և կար ձգ
ծեաց թէ այս է պատմուճանն
ադամայ՝ զոր կորոյս. զի գրեալ է
լուսաւորէր. և զգեցաւ զնա ձմեռ-
նային ժամն. նա պատռեցաւ, և տուն
ջէր զնա՝ և մնէր. և հանեալ կանգ-
նեցաց զնա. և սկսաւ ջուր արկանել ՚ի

նման. զի կարծեաց թէ ջրոյ աման է սա. և ամենևին ո՛չ լցուցանէր: Որ և բարկացեալ արկ զնա 'ի խորս ծովուն, և ասէ. երթ 'ի կորուստ, զի կարի անպիտան իր ես: Ոչ եղեր զգեստ ամառան. և ոչ ձմերայնոյ. և ո՛չ աման ջրոյ. ապա կարծեմ թէ փորես դու որովայնամոլ և արբեցող մարդոյ՝ որ անկուշտ լինի: Ցուցանէ: Թէ այսպէս անօգուտ է փառք աշխարհիս. զի ոչ է ասա պիտանացու՝ և ոչ անդ: աստ մահն խաբէ. և անդ նոր արարածք լինելոց է:

ձդ Էշ մի էառ զաւանակն իւր. և գնաց արածել 'ի մարգ մի ցանկալի յանմարդաբնակ տեղի. և ահա գայ էշ մի որձ. և հոտոտեցաւ 'ի յետոյ 'ի յամօթ նր: Եւ նա կից էհար զօրութբն. և էհար զխամծեկ նր, և ջախջախեաց. նայ փախեաւ որձ էշն՝ և գնաց անտի. և ասէ քուռակն

ռակն լալով. վայ ինձ մայրիմ, զի
տառապանք են սատ միայն. և բա
զում երկիւղ կայ 'ի գաղանաց.
Վայ ինձ, ընդ-էր հարեր, և վիրաւո
րեցեր զփառաւորագոյն էշն, որ եկն
առ մեզ. Վաճ մայրն, ով որդեակ իմ.
մի երկնչիր զի չէ յամելոց. քանզի
յայնտեղին հոտոտաց, և զայն հոտն
էառ. որ թէ մինչ 'ի ներքին հըն
դեկքն երթայ՝ և կամ՝ 'ի խորասան.
փուշթայ դառնալ առ մեզ. Ցուցա
նէ. Թէ որ չնայ՝ և զրկէ. կամ գո
ղանայ. կամ զայլ մեղս գործէ. ո՛չ
կարէ դիւրաւ զերծանիլ 'ի մեղաց.
Զի ցանկութիւն և հոտ մեղացն կա
պէ զնա, և քարշէ ոպ̃ շուն տառամբ.
զի օձ է մեղքն՝ 'ի ծակն շուտ մտա
նէ. և ո՛չ կարէ ոք յետս քարշել զնա.
զի խորխն ընդ դէմ է.

Նաշմի անկաւ 'ի գետն, և 'ի խեղ ձե
դելն թրքեց. և գայր թրեքն
իվեր ջրոյն. յառաջեաց քան զէշն.

Եւ ասէ էշն. այ չար՝ ի յորովայնէս
գեւ ելեր. ասա ինձ թէ զլողդ ուր
ուսար. որքան զիս յառաջ քայլես:
Ցուցանէ: Թէ կարի անպատշաճ
է. յորժամ տղայք խրատ տան ծե-
րոց. և տղեայք գիտնականաց:

ճզ Օ էշն մեծարեցին, և կոչեցին՝ ի
Հարսանիս որդւոյ Թագաւո-
րին. և նա ասէ ոչ փողահար եմ,
և ոչ խաղացող. այլ գիտեմ որ
կամ փայտ պիտենայ կրել կամ ջուր՝
զի իմ բանն այնէ: Ցուցանէ: Յոր-
ժամ կոչեն զքեզ՝ ի բան, կամ՝ ի
գործ. որ քեզ անդէպ է՝ և ան-
նման. և՝ ի վեր քան զկարողութի
քո. գիտասցիր որ քեզ տնազ լինին
արարեալ:

ճէ Իշուն աւետիս ետուն, թէ ցնծայ
և ուրախ լեր. և տուր մեզ օ-
ժիտ, զի թոռն եղաւ քեզ: Եւ նա
ասէ՝ թէ վայ ինձ, բարեկամ իմ. զի
թէ

Թէ հարիւր թուման յայտնի լինձ յե
րանեաց իմոց․ զծանրութիւն բեռանց
իմոց ոչ թեթեւացուցանէ ՚ի թի
կանց իմոց։ Ցուցանէ։ Զի է ամ̃
ոք ընդ անձին պարտի համարս տալ․
և զբեռն մեղաց իւրոց ինքն բառ
նալ։ Պարձեալ ցուցանէ, մի վստա
հանար յորդիս քո՝ և մի յորդիս որ
դւոց քոց․ զի ոչ քաւեն զմեղս քո։
այլ դու ջանա, քանի որ կարես․ և
ապաշխարեա արտասուօք։

Ճանապարհորդ մի հանգեաւ ճը
յաղբեր մի և գնաց․ և անդ մո
ռացաւ հարիւր դեկան․ և նոյն ժա
մայն գայ ոմն անցանել զճանապար
հաւն․ էառ զդանձն, և գնաց ՚ի
լեառն։ Ապա նա յիշեաց զդանձն, և
փութով դարձաւ․ և ահա այլ ոմն
դայր զճանապարհաւն․ կալաւ զնա,
և եկն ՚ի տեղին․ և ասէ՝ տուր ըզ
դանձն զոր աստ թողի․ զի այլ ոք
ոչ է եկեալ ընդ այս։ Ապա նա երդ

նոյր դատան և ասէր՝ թէ ես չեմ տե
սեալ։ Եւ նա տարաւ զնա 'ի դա
տաւորն արքունի՝ չարչարեալ սպա
նէին զնա 'ի նոյն խորհուրդ։

ձթ Այր վաճառական մի, 'ի քաղաք
մի հանգեաւ, և յարեաւ շրջէր
'ի քաղաքն. եկն 'ի վաճառանոցն.
և էհաս նմա պէտք մարմնոյ արտա
քին։ Եւ էր ջրտուն մի մերձ 'ի վա
ճառսն. և նա եմուտ 'ի նմա վճա
րեաց զիւր պետսն. և գողն դայր
ծածկաբար զհետ նր̃ վմ̃ գանձին,
զոր ունէր կապեալ 'ի մէջսն։ Փու
թով 'ի հետ մտաւ՝ և էհատ զգլուխ
վաճառականին. էառ զգանձն,
և գնաց. զի շատ էր աղմուկն և ոչ
իմացաւ ոք։ Այն ժամայն մնագոր
ծըն եմուտ 'ի ջրտունն 'ի վճարել
զպէտս մարմնոյն. և զայն տեսեալ
վա՛յ գոչեաց, ընդ անմեղութե̃ իւ
րոյ. և լուեալ մարդիկքն կուտեցին
իվ̃ր̃ նր̃. տեսին զնա, զի խուկայր. և
Թաւա

Թաւալէր յարիւնն, զի նոր էր զե-
նեալ: Տեսանէին զդանակն արիւ-
նաթաթախ. և զձեռս մսագործին:
սպանաւ և նա. զի ամենեցուն միտք
վկայէր թէ նա էսպան: Այս եր
կուս առակս մի խորհրդ. և մի միտք
ունին՝ և շատք խաբին. և այլ ընդ-
այլոյ համարին զնա: Բայց այս է կա
տարեալ միտքն. զի շատ արդար
մարդիկք դատին և մեռանին անի-
րաւ և ընդվայր. և դատաւորն
գիտէ ՚ի միտս իւր՝ և այլք թէ ու-
ղիղ դատեցաք՝ զոր Ած սիրէ. և չէ
զարմացումն: Ո ի ոչ է հրեշտակ
դատաւորն. և ոչ մարգարէ, որ
զխորհն և զծածուկն գիտենայ.
Ապա շատ պարտի քննել դատաւո
րին զբանն և զճշմասն. և համբե
րել բազում աւուրս. զի սակաւ սա
կաւ յայտնի ճշմարտութին: Նա և
միանգնի դատաստան չէ պարտ առ-
նել. զի շատ վնաս լինի անտի. նա
և կաշառօք չէ պարտ թիւրել զի


րաւ

րաւունս. զի անթողլի մեղք է առաջի Տ͞Ն:

ղ Լուսինն խաւարի՝ և Թափեալ պակասի լոյսն իր. և գայ ՚ի դէպ արեգականն. և առնու ՚ի նմանէ կրկին զլոյսն իւր: Ցուցանէ: Նմա նօրինակս. Թէ ով մարդ մեղաւոր. խաւարեցաւ լոյս ս͞բ աւազանին որ կար ՚ի հոգի քո. և պակասեցաւ ՚ի քէն շնորհքն. ՚ի ձրի մի՛ երկմտիր Թերահաւատութե՟. այլ յուսայ ՚ի Տ͞ր հաստատուն հաւատով. և դիմէ առ նա զղջմամբ և արտասուօք. և նա ծագէ ՚ի հոգի քո ՚ի լուսոյ իւրոյ. և սրբէ զանօրէնութիւնս քո ողորմութե͞ն իւրով:

ղա Ձմեռն չորանայ տերև ծառոց. և բոյսք անզարդին. իսկ գարնայնոյն ժամանակն կրկին զարդարին՝ և պայծառանան: Ցուցանէ: Բարի և լուսաւոր օրինակս. ով

ով մարդ․ եթէ ձմեռն մեղաց եկն
ի վ՜ր քո՝ և պաղեցոյց զքեզ․ ջար
հողմն հիւսիսական մեղացն սառա
նայի, և գոյն տերևացն թափեցաւ
՚ի քէն գեղեցկութի քո․ և մի ան
յուսիր ով ողորմելի․ այլ երթ սրտի
մտօք առ հոգևոր գարունն Ք՜ս,
որ կոչէ զքեզ քաղցրութ՜բ․ և նա
լուանայ շնորհօքն իւրովք զյան
ցանս քո․ և նորոգէ զքեզ առաջին
պայծառութիւն քո։

Խոզն, և բզէզն, և կամ այլ կենդա ՂԲ
նիք՝ որք աղբակերք են և հոտ
գարշութե՜ կեանք թուի նց՜։ Այ
ինձ․ զի ցուցանէ օրինակս․ թէ
ամ՜ մեղաւոր անզեղջ զաղբ և զշա
րաւ մեղացն ուտէ՝ և պարարտա
նայ․ և այն քաղցր է՚ի քիմս նոցա։

Յանմարդաբնակ լեռն մի կայր ՂԳ
մրջիւն մի մեծագոյն քան զոչ
խար մի․ և գայ առիւծն խառնա

կն ընդ նմա. և ծնանի նշ͞ զաւակ. որ է կէս անձինն առնն. և կէսն մրջմնարիւծ. և յորժամ ծնանի. դիմէ առ մայրն զի կերիցէ հունդ. և ոչ կարէ ուտել՝ զի հայրն մսակեր է. և դիմէ առ հայրն զի կերիցէ միս՝ և ոչ կարէ ուտել՝ զի մայրն հնդակեր է. այսպէս երթայ և գայ առ հայրն և մայրն. և 'ի սովոյն սատակի: Ո՛յ ողորմելի անձն իմ, որդեակ իմ. քանզի այսպէս ցուցանէ առակս. զդասս անզեղջ մեղաւորացն. զի ծննդեամբ ոք աւազանին են Ա͞յ արարչութ͞են. և ծնանի սատանայ մեղօք և անօրէնութ͞բ: Դիմեն առ Ա͞ծ զի հաւատան՝ որ կայ Ա͞ծ. և գիտեն զի դատաւ տան կայ. և ո՛չ կարեն ուտել զկերակուրն Ա͞յ զօրութ͞ն և զապաշխարութ͞ն զգործս բարեաց. զի մեղօք կապեալք են 'ի սատանայէ. և ո՛չ կարեն ուրանալ զԱ͞ծ. զի ընտանորեալ գիտէ. որ Ա͞ծ կայ՝ և

յարութեն, այսպէս են կապեալք
յԱծ հաւատով. և են կապեալ 'ի
սատանայ չար գործօք. ոչ կարեն
առնուլ բաժին 'ի սատանայէ. և
ոչ աստուծոյ: Այսպ երթան առ
Ած հաւատով. և առ սատանայ
մեղօք, և հեշտասիրութե. և կան
երկմիտ և ան հաստատ. և գայ
մահն յարկարծակի՝ և հանէ զնոսա
յաշխարհէս բաժին դժոխոց:

Այր մի հողագործ շինեաց ակա ՂԴ
նաթս բազումս. և էարկ 'ի վերա
տակն իւր վս թռչնոց: Օ ի գայլն
կռունկք և սագք քաղէին զբակ
լայն՝ և զխսեռն նր: առաւօտուն
գնաց տեսանել զակնատմն: Ետես
զի անկեալք էին բազումք 'ի սագից
և 'ի կռունկաց յորոգայթսն. և սկսաւ
մահակօք սպանանել զնս: Արա
գիլ մի գտաւ յակնատմն. ասէ լա
լով աղաչելն առ հողագործն. մի
Աճ մի սպանաներ զիս. զի ոչ եմ
ես

ես կռունկն եւ ո՛չ սագ։ ոչ զսերմն ուտեմ եւ ոչ զբակլայ. այլ բարեկամ եմ քեզ. եւ քաղեմ զա՟մ ժիժմունս յանդաստանաց քոց. Ասէ հողագործն. որովհետեւ գտայ զքեզ ընդ թշնամիս իմ. ը՟ դոսա մեռցիս. եւ սպան զնա։ Ցուցանէ։ Թէ որ բարեկամ լինի եւ օգնական. եւ միաւորեալ ընդ չարագործսն. ընդ նոսա տանջելոց է 'ի հուրն անշէջ. ոպ՟ եւ գրեալ է թէ զգողն եւ զգողակիցն. զբոզն եւ զկաւատն, եւ զկախարդն միապէս տանջէ Ա՟ծ 'ի դժոխսն։

ղէ Այր մի եհատ զեղջու հորթուն դրացւոյ իւրոյ գաղտաբար. եւ յորժամ եղեւ եզն գնաց առ թագաւորն, եւ ասէ. թէ իմ է եզն 'ի տղայութէ. եւ եկեալ մնուցիչ եզինն մառան խրատունք։ Նա ասէ՝ հորթուն լեզուն հատածէր՝ զոր կտրուսի. բայցեն զբերան եզին, տեսին զնշանն. եւ էառ զեզն. եւ 'ի միւս

օրն

օրն լծեաց և ոսկաւ վարել. և խըր
տան եղինքն. և նա անկաւ առաջի
խոփոյն և ցցուեցաւ 'ի փոր նր̄, ան
ցաւ թափ ընդ թափ. և եղն էառ
զնա. և եկն 'ի դուռն Տն̄ հերոյ.
ընդ առաջ ելին բազումք և ասէ ինն.
գայ սիրամն և բերէ զհարկսն:
Ցուցանէ: Թէ շատ արդար իրաւ
ունք առնէ Ա՚ Ճ. յառաջքան զդա
տաստանն: որ իմանան մարդիկք
թէ կայ հատուցումն ամ̃ գործոց:

Այր մի աղքատ խորովէր միս աս ՂԳ
կաւ յանապատին հուրում. և
արծուի մի յանկարծակի եկն իվե
րուստ՝ էառ զմիսն և վերացաւ:
Իսկ աղքատն խնաբերոյ էր՝ անկաւ
իվերայ մորենոյն ձայնեաց ասելով.
թէ մանուկ ես և ունիս կարողու
թի՛ դունեսա և կեր: Ի՞ւ ասեն մար
դիկք՝ թէ տարաւ արծուէն զմիսն
'ի բոյնն՝ և եդ առաջի ձագուց իւ
րոց, և ինքն գնաց. և կայր կայծ մի
փա

փակած 'ի միսն․ այրեաց զբոյնն և
զձագեր արծուոյն։ Ցուցանէ։
Շատ արդար խրատունք առնէ
Ած․ զի որ զրկէ զմարդն յանմե
ղուց․ նա զմեղքն հետ զրկանացն
'ի յինքն առնու՝ ոպ՟ ասէ սողոմոն․
Այն է որ այրէ զնա 'ի հուրն ան
շէջ․ ըստ այնմ թէ առնէ Տր խրա
ունս ամ՟ զրկելոց։

ղէ

Ժողովեցան թռչունքն և ընտրե
ցին զխրամարգն վասն գեղեց
կութե՟ իւրոյ․ և արարին իւրեանց
թագաւոր։ Պայ աղաւնին, և ասէ․
ով բարի թագաւոր՝ եթէ նեղեն
մեզ արծուիքն՝ և դու զինչ առնես
մեզ զօգնութի՟։ Ցուցանէ։ Թէ
թագաւորին, ոչ միայն գեղեցկու
թի՟ պիտոյ է․ այլ քաջութի և բազ
մահնար իմաստութի յամ՟ կողմանց։

ղը

Այր մեծատուն մի․ և ունէր ժա
ռանգ տան իւրոյ զքեռ որդին

իւր. հիւանդացաւ, և կոչեաց զԺա
ռանգն զի խրատեսցէ զնա. և նա ե_
կեալ նստաւ՝ էած զգլուխն 'ի ծոց
իւր։ Եւ ասէ մեծատունն. ով որ
դեակ, ջանա 'ի բարի. և մի հեշտա
նար 'ի սուտ կեանքս յայս՝ զի ան
ցաւորէ. անմոռաց յիշեա զօրն ա_
հագին և զԺամ մահուն։ դատաս
տանն մի՛ մոռանար. խոնարհ և անո
խակալ լեր. և զմեղս քո մի պահեր
առ քեզ։ Ձանձրացաւ յասելն. ասէ
ցնա, Թէ որդեակ լսեցեր զոր ասա
ցի քեզ. և կամ 'ի միտ առեր. և ասէ
ցքեռւխն՝ Թէ զինչ հրամայեցեր։
Ապա դու լսէ՝ ո՞չ պատմեմ քեզ
գործ մի զարմանալի. զի ահա 'ի
փորսիմ կան երակք տասնևերկու,
և ամէնն 'ի պորտս գայ և երԹայ.
և իջեալ միաբանին 'ի ծածուկ մար
մնոյ։ Եւ ասէ քեռւխն. Թէ վա՜յ քեզ
Ժառանգ անպիտան՝ և հայրենակո
րոյս. զի ես քեզ զօրէնս Այ քա
րոզեմ. և դու զերակս պորտոյդ

'ի Թիւ արկանես. յայսմհետէ ելցես դու 'ի ժառանգութէ իմմէ։ Յուցանէ։ Թէ այսպէս անմտացաք տմ մարդիկք. եւ խբաց Թողաք զխրատն Քի. եւ զպատուհնալիան դժոխոց. եւ Թաղեցաք զմիտս մեր. որ է գլուխ մեղաց՝ 'ի ծոցս մեղաւորաց՝ աղքատութե Թաղեմք զերակս 'ի պորտոյս մերոյ զշնութի. զարբեցութի. եւ զայլ մեղաց տեսակս։ Ուր զայն խորհիմք անդադար՝ Թէ ոչ զրկեմք. կամ ոչ արբենամք՝ եւ այլ մեղք գործեմք. այս են երակք պորտոյս. այս հանէ զմեզ յՔի ժառանգութենէն՝ եւ ողորմելի առնէ։

ՂԹ Այր մի հաւատաւոր կայր 'ի քաղաք մի. հպարտանայր 'ի միտս իւր 'ի դիւլին զօրութէ. ելեալ 'ի հրապարակս քաղաքին ձայնէր եւ ասէր։ Լսեցէք ազգք եւ ազինք տմ զի Քս մինչեւ յերկինս անարատ եւ

նը,

նը, և ես յերկրի. և այլ.քդ. խոստո
րեցայ.ք յԱ.Ծ։ Աւ անկաւ 'ի շնու
թիւն, ի բերև յղացաւ աղջիկն, եւ
'ի բարձրագոյն տեղ մի. գոչեաց
ասելով։ Թէ լսեցէք ազգ մարդ
կան. զի Ա.Ծ միայն մնաց անմեղ և
անարատ. զի ես 'ի պատին վաղեցի,
նայ պատատուեցաւ ստորոտս մինչև
'ի ստինս։ Յուցանէ։ Թէ որ հը
պարտանայ. նայ դեն այսպիսի գոր
ծէ. Թէ տեսանես որ մարդ հպար
տանայ իւերայ ընկերին, և խօսի
հպարտութբ. և զանձն իւր նը հա
մարի. յայն դու ասա զառակս զայս։

Ա. Հա երկու սնդխկնոսք երթային Ճ
'ի վաճառ. մինն իմացաւ որ չա
րակնութբ հայէր 'ի նա. վն սա
կաւ դանձուն զոր ունէր. և հասին
նք 'ի վայրաբնակ տեղի մի և նա երկն
չէր։ Բերև 'ի քուն եղեն յարեաւ
գաղտ յընկերէն. եղ զփայտ 'ի տե
ղին իւր՝ ուր պառկեալէր. և դդումն

'ի տեղւոջ գլխոյն. և ծածկեաց կար-
պետով. և ինքն զատ նստաւ. ի մէջ
գիշերի յարեաւ ընկերն՝ և եհա
մեծ վէմմի. և եհար ի վ̃ր գդման. գի-
տէր թէ գլուխն էր. և գդումն կո-
տրեցաւ ձայթմամբ: Եւ ձայնեաց
ընկերն՝ և ասէ. թէ ահա մնդիկ
նոս զհաւատքո 'ի գդումն փորձե-
ցի. և ինքն փախեաւ 'ի նմանէ:
Ցուցանէ: թէ յա̃մ ժամ Ա̃ծ օգ-
նական է: բայց պատրաստ կենալն
աղէկ է. զի Ա̃ծ զիմաստութի̃ն ետ 'ի
սիրտ մարդկան: Եւ դարձեալ ցու-
ցանէ զմարդ զոր փորձեալ ես 'ի սա
կաւիրս. 'ի բան և 'ի գործ վնասա
կար և նենգաւոր. դու զանձն քո
մի վստահանայր 'ի նա:

Ձա Եմուտ այր մի առ Թագաւորն՝ և
ետ հարիւր դահեկան. և գնեաց
զա̃մ խեղս՝ որք էին 'ի նր̃ գաւառ-
ին. զի նմա տացեն զհարկն. և իբրև
եղ 'ի Թագաւորէն. ետես զայր
մի

մի ճաղատ՝ մի ականի՝ և քթատ՝ խուլ՝ և քարձ՝ ձեռնատ՝ ձուանկ՝ և մի ոտն կտրած ։ Դարձաւ առ Թագաւորն՝ և ասէ ․ ո՛վ բարի Թագաւոր․ զամենայն գաւառիս խեղս աստ գտի ։ Հրամայեաց Թագաւորն բերել զնա․ իբրև եբեր զնա զարմացաւ․ ասէ փառք Այ ։ Ցուցանէ․ Թէ որ ունի նեղութիւն ՚ի հոգին, որ է մեղքն․ նա գնեալ է զնա սատանայ՝ և իւրն հարկաւոր արարեալ խաբէութբ ։ Իսկ որ բազում մեղս ունի յանձն իւր․ զոխակալութի․ զհայհոյութի․ զշնութի․ զրկանք, և զարբեցութի․ և զայլ մեղս․ այս ինքն, բազում խեղութի ՚ի հոգին․ և ոչ դիմէ առ Այ, և ոչ զղջանայ․ նա հաստատուն ծառայ է սատանայի․ և սաստիկ ախրելի քան զմեղաւորս ։

Առիւծն, գայլն, և աղուէսն ՃԲ
եղեն եղբարք․ եկեալ ՚ի յորս

գտէն երիս ոչխարս։ Նու ՚ի ժամ
ճաշուն ասէ առիւծն ընդ գայլն.
թէ բաժանեա ոչխարդ ի մ՟ջ մեր.
կամէր փորձել զգայլն։ Նու ասէ
գայլն. խոյդ քեզ՝ և մաքիս ինձ՝
և գառնս աղուէսուն. և առիւծն
էզարկ թաթովն զկառափն գայ
լուն. որ երկու աչքն կոկովեցաւ.
նայ նստաւ ի մ՟ջ ն՟ր։ Նու ասէ աղուէ
սուն թէ բաժանեա զոչխարսդ ի մ՟ջ
մեր. ասէ աղուէսն. ով բարի թա
գաւոր և յաղթող. զայս Ն՟ծ է
բաժնեալ. խոյդ քեզ ճաշ. և մա
քիդ հրամէնք. և գառնդ ընթ
րիս։ Ա՟սէ առիւծն. ով գերի ա
ղուէսուկ. ով ուսոյց քեզ զարդար
դատաստանդ՝ զոր արարեր. ասէ
աղուէսն՝ թէ գայլուն աչուէն ու
սոյց ինձ, որ որտաքս կոկովեցաւ։
Ցուցանէ։ Թէ բանզուլ չարա
գործք խրատին, և թողուն ըզ
չարն. յորժամ թագաւորք և իշ
խանք կախեն և խրատեն զգողսն.
և

և զպանողսն։ Այնպէս շատ մեղաւորք զղջանան և երթան ապաշխարութբ. յորժամ լսեն մեծատունք պապակին 'ի հուրն. և յիմար կուսանքն լացին անշահ. և 'ի հուրն անշէջ տապեցան։

Գ.այլն էգիտ զէշ մի գէր. կամեցաւ ուտել զնա։ Ասէ էշն ընդ գայլն՝ աղաչեմ զքեզ վն Այ. հան զայս խոցս 'ի յիմ սրտէս՝ և ապա կեր զիս. զի Ած ետ 'ի ձեռս քո զիս։ Քանզի բևեռ չար հասաւ 'ի յոտս իմ. և տանջէ զիս՝ անցեալ գայլն յետև իշուն՝ զի հանցէ զբևեռն. և յէշն ամ զօրութբն կից է հար՝ և էզարկ զբերան գայլուն. և կոտրեաց զկզակն։ և ինքն փախեաւ։ Գ.այլն նստեալ լայր՝ և արտասուէր. թէ արժանի եմ ես այս չարիս՝ որ եկն իմ անձինս վր. զի ես մնացորդ էի. զիս բայտար ո՛վ արար։ Ցուցանէ։ Թ.է շատք կան, և ապաշաւեն որք Ճգ

ձեռն արկեն 'ի գործ. և յարուեստ
ինչ՝ զոր չեն ուսեալ. և չէ իւրեանցն
յարմար:

ձդ Աղուէսն էառ կաքաւ մի՝ և կամէր ուտել զնա. ասէ կաքաւն, օրհնեալ է Ա՟ծ՝ որ կոչեաց զիս իւր արքայութիւն. և զերծոյց զիս 'ի յայս չար ժամանակէս: Արդ դու աղուէս գոհացիր զԱ՟Ծ՝ և ապա կեր զիս. քեզ վարձք է. և աղուէսն կկզեցաւ՝ բացեալ զբերանն հայեցաւ յերկինս՝ և ասէ: Փառանամ զքեզ Ա՟Ծ, որ պատրաստեցեր մեզ զանազան բարութիւն. կաքաւն զերծաւ 'ի բերանոյն, և թռեաւ. և ասէ կաքաւն՝ առաջ ուտել պիտի և ապա գոհանալ զԱ՟Ծ: Ցուցանէ: Թէ զխոստացեալ իրքն մի համարիր քեզ. զի շատք ասեն՝ և ոչ առնեն. մարդոյ շնորհակալ մի լինիր. մինչև առնուս զիրսն. և թէ ջուր տան դու 'ի ժամն ի գոգդ առ:

Աղուէ

Աղուեսն զչիտն՚ի բերանն էառ՝ և ՃԵ
կամէր ուտել զնա. ասէ չիտն
ընդ աղուեսուն շատ աւաղ թէ ու-
տես զիս. զի ժամ է ինձ որ ածէի
մարգարիտ մի քան ՚ի ջաղամու ձու՝
որ է ահագին։ Եւ թէ թողուս զիս
ես ածեմ զմարգարիտն, և լինի քեզ.
և ապա կեր զիս. երդնում, որ գամ
՚ի կամս քո։ Իբրև եթող զնա թը-
ռեաւ, և նստաւ ՚ի բարձրագոյն
ճիւղ մի։ Ասէ աղուեսն. արա զոր
ասացեր, և եկ ՚ի կամս իմ։ Ասէ
չիտն ընդ աղուեսն. ապա քեզ
նման անմիտ լինիմ թէ այլ գամ ՚ի
կամս քո։ Եւ դու ընդէ՞ր հաւատա-
ցեր. թէ ես կարի սակաւ մարմնովս
այնչափ մեծ մարգարիտ կարէի բերել
քեզ։ Ապա լաւ տամ քեզ խրատ՝ որ
շատ օգուտ լինի քեզ։ Անդէպ բա-
նից մի հաւատար։ Ընդ խախուտ որ-
մով մի ննջէր. ՚ի շնացող ծերէ. և
՚ի հպարտ աղքատէ. և ՚ի ստախօս
թագաւորէ, և յառաջնորդէ ի-

բաց փախիր։ Ասէ աղուէսն. ահա
որ դատելոց է զքեզ Ա՛ծ՝ զի ստեցեր
ինձ։ Ասէ չիտն. սուտ կայ որ վարձք
է ասել. 'ի մեղաց և 'ի մահուանէ
և յորոգայթէ ապրիլ. կամ զմարդ
փրկել. շատ վարձք տայ նմա Ա՛ծ։
Ասէ աղուէսն՝ թէ ընդէր է գրեալ
մարգարէն դաւիթ. թէ կորու
սանէ Տ՛ր զայնոսիկ՝ որք խօսին
սուտ։ Ասէ չիտն. թէ ժամանակն
գիտէ՝ և պատճառն. քանզի յոր
ժամ սուտ խօսիս 'ի մեղաց և վշտաց
փրկիս. և փրկես զմարդն. նա Ա՛ծ
ուրախանայ. և թէ սուտ խօսիս,
և զմարդ գայթագղեցուցանես նա
մեծ չար է։ Ապա դաւիթ խաղաց
'ի յափսաթեր և չորեթափեցաւ. և
կարծիս ես թէ մաղաս կաթեցայ՝
կամ դիւահար, և փրկեցաւ 'ի մա
հուանէ։

ՃԶ Երէց մի ասորի, իմաստուն և բա
րի՝ և այր մի հայ կռուէին ընդ
իրերաց

իրեւարս վ՜ն հաշուոյ ինչ։ Ասէ այրն,
Թէ այն քարն ՚ի քո երեսդ. և ՚ի
քո երեսունևերկու ատամունսդ.
և երէցն զարմացաւ՝ գնաց շուտ մի
՚ի տունն՝ ասէ ընդ իրիցկինն իւր.
Թէ աւաղ՝ վ՜ն Ա՜յ առ զմտմն և տես
Թէ քանի են ատամունքս իմ։ Եւ
կինն Թուեաց՝ և ասէ. երեսունև
երկու են ստուգապէս։ Եւ նա գայ
առ այն մարդն՝ և ասէ. ուստի գի
տացեր զԹիւ ատամանց իմոց. կամ
ով ասաց քեզ։ և նա ասէ, տէր, յիմ
ատամանցս գիտեմ զքոյդ՝ ասացի։
Առակս այս յորժամ կամենաս մար
դոյ կարեկից լինիլ. Թէ յիմն մար
մնոյս գիտեմ և զձերդ։ Որդեակ
իմ զի հասարակաց է պատերազմ,
սատանայի նախանձն միապէս կո
րուսանէ զմեզ՝ և տանի ՚ի դժոխս.
և առնէ որդի գեհենին։

Առիւծն հիւանդացաւ՝ և ուղար ՃԷ
կեաց բժշկաց խնդիր. Թերևս
արաս

արտացէն դեղ ցաւոյն։ Նա եկեալ
բժշկապետացն. և ասէն ընդ ա-
ռիւծն. Թէ քո ցաւոյդ այլ դեղ
չկայ քանոր զիշուն ականջսն կըտ
րէն, և զսիրտն հանեն, և տան որ
ուտես, և առողջանաս։ Ասէ առիւծն
ընդ աղուէսն. եթէ կարես էշ մի
գտանել՝ և բերել։ Նա ասէ աղուէ-
սն. խիստ շուտով կատարեմ ըզ
հրամանս քո։ Վասնզի ունիմ ինձ
եղբայր՝ էշ մի. և է խիստ սաստիկ
գէր. և է յայս անուն հովիտս, և
արածի։ Նա գնաց աղուէսն առ
էշն, և ասէ. ո՛ բարի և հեզ էշ.
այժմ գիտացիր, զի մեծ փառաց
կամիմ հասուցանել զքեզ։ Վասն
զի առիւծն որ է թագաւոր գա-
զանաց հիւանդացեալ է՝ և մօտ 'ի
մահ է. և ուզէ որ տեսանէ ըզ
քեզ. և զթագաւորութին՝ ի քեզ
տայ։ Նա հաւատաց էշն խաբողա-
կան բանիցն. և եկն առ առիւծն.
և 'ի համբուրել զառիւծն. ա-
ռիւծն

ռիւծն զբերան էբաց՝ և կամէր
խեղդել զէշն. և իշուն փլթեալ
փախեաւ։ Եւ հասեալ աղուէսն
իշուն՝ և ասէ. ո՜ անմիտ՝ ընդէ՞ր փա
խեար։ և ասէ՝ եթէ ՚ի համբուրելն
կոկծեցոյց զիս։ և ասէ աղուէսն.
եթէ այն ՚ի սաստիկ սիրոյն էր։
Դարձիր, և մի փախչիր և եկն էշն
առ առիւծն՝ և աղուէսն կալեալ
զփողք իշուն. հանեալ զսիրտ իշուն
և զականջն կտրեալ կերաւ։ Եւ ասէ
թէ դեղ է՝ նայ լաւ է ինձ, քան ա
ռիւծուն։ Եւ գնաց աղուէսն առ
բժշկապետսն, և առ առիւծն՝ և
ասէ. եթէ եկէք զարմացէք, և հիաց
մին իրք տեսէք, զի այն էշն ոչ ականջ
ունէր և ոչ սիրտ։ Եւ եկեալ տեսին,
և ասէ աղուէսն ցբժիշկն. եթէ ըն̅
էր զարմանայք եթէ սիրտ և ականջ
չունի. թէ դա սիրտ և ականջ էր ու
նեցել. զի երբ յառաջն առ առիւծն
եկն և զմռնչոյն լսելէր. նայ կրկնա
կի չէր դառնալ։ Եւ արդարացու

ցին զբանն աղօթեսուն։ Այլ մեզ՝
զի ականջ ունիմք՝ և ո՛չ լսեմք զպատա-
նալիս դժոխոյն. և սիրտ ունիմք,
և ոչ իմանամք զխաբէութիւն սատա-
նայի։ Ո՛վ մարդ՝ որ զմեղսն թողու.
և այլո՛ւր ի յայն մեղքն դառնայ. նա
մեռանի ՚ի ձեռն սատանայի՝ որպէս մե-
ռաւ էշն ՚ի ձեռն առիւծուն. ա-
ռիւծն և աղուէսն են սատանայ.
և էշն անդարձ մեղաւորն, որ ոչ
դառնայ ՚ի մեղաց։

ձը Եկեալ բժշկապետ մի ՚ի քաղաք
մի. ձայնէր, և ասէր ընդ մար-
դիկք թէ խիստ բժիշկ եմ. և ամ
ցաւոց դեղ ունիմ. և զհիւանդն ողջ
առնեմ։ Եւ այր մի կամէր ծաղր առ-
նել զհաքիմն. և առեալ իշու ագի
մի. և պահեաց զնա ընդ հանդեր
ձովն. և ասէ ընդ հաքիմն. ով ի-
մաստուն բժիշկ. գայլն խածեալ է
զիմ իշուկն. կարես զիմ իշուն դեղ
առնել՝ որ ողջանայ։ Եւ ասէ հա-
քիմն

քիմն խնտաքաջ. գնա բեր դեկան
մի՝ որ տամ սև մհամի և սպիտակ որ
ողջանայ. և այրն զիշու ագին եցոյց՝
և ասէ. այսօր կարես դեղ առնել.
և նա ասէ՝ ո՞վ այր այդոր Ի՞ծ կարէ
դեղ առնել՝ որ սատեղծ ինչ է. ես զի
արդ կարեմ իշուն ագին. որ է նշան
իշուն. զէշ առնել: Այս մեզ՝ զի
նշան է մնացեալ ՚ի մեզ քրիստո-
նէութեն ոչ այն իշուն ագին. ա-
նուամբ միայն եմք քրիստոնեայք՝
և ոչ գործովք: Ասէ հաւատք ա-
ռանց գործոց մեռեալ են. և հաւ-
ատ առանց գործոց դատարկ է:
մարմին առանց հոգւոյ մեռեալ է
նոյնպ̃ և հաւատ առանց գործոց:

Այր ոմն գնաց ՚ի հողվարքն. և ՁԹ
երեք գանգ էառ մարդոյ. եդ
՚ի սկուտեղն և գնայր ը̃ փողոցն ՚ի
ներքս. և ձայնէր, և ասէր. ով գնէ
գանգ: Ու ծաղր առնէին զնա.
և ասէին թէ խև է. և տեսեալ զնա

վաճառականի մի, և ասէ․ բեր ըզ
գանձդ տեսանեմ։ Եւ առեալ վա
ճառականին․ և հանեալ զմախաթն
և հատոյց 'ի յականջն՝ և ոչ եմուտ՝
և ընկեց զնա։ և ածեալ ընդ ա-
կանջ երկրորդին․ և միւս ականջն
թափանցիկ անցաւ։ և յերրորդին
ածեալ՝ և ամենևին ոչ ելանէր յա
կանջէն մախաթն։ Եւ զերրորդ
գանձն խիստ սիրեաց վաճառա
կանն․ և զերկուսն արհամարհեաց․
Եւ ետ բազում ոսկիս՝ և գնեաց զմէկ
գանձն զայն, որ մախաթն կալաւ,
և ոչ ելանէր․ և բազում բժշկու
թի առնէր գանձն 'ի հիւանդս և
յախտաժէտս։ Եւ մեկնեաց վա
ճառականն՝ և ասէ․ եթէ այս որ
մախաթս ըմտաւ․ նայ այս նոքա են
որք ամենևին Այ̃ բանքն յիւրեանց
ականջն և լսելիս չէ մտեալ՝ և ոչ բա
րիս գործեալ։ Այն որ ՚Ին̃ աստ․
որ անկաւ ապառաժին, և 'ի չգոյէ
հիւթոյ չորացաւ․ և այն որ ընդ

մի ականջն մտաւ մախաթն. և ընդ-
մէկ այլ դեհն 'ի դուրս ելաւ. Նայ
այս այն մարդիկքն են՝ որ ա̃ծայինն
բանն ընդ մէկ ականջն մտեալ է՝ և
ընդ մէկայլն ելեալ. որ անկաւ և
հեղձաւ՝ և եղև անպտուղ։ Եւ այն
որ մտաւ՝ և ոչ ել. այն մարդիկքն
են, որք ա̃ծայինն բանքն յիւրեանց
լսելիքն են մտեալ՝ և այլ ոչ ելեալ.
այն որ անկաւ յերկիր բարի, և ետ
զպտուղ և գործեաց զարդարու-
թի. երեսուն, վաթսուն, և հա-
րիւր։ Ոի թէպէտ և մեռեալք
են նոքա. ապա կենդանիք են. և
փոխեալ 'ի մահուանէ 'ի կեանս՝ և
'ի խաւարէ 'ի լոյս։

Առիւծն մի 'ի քար այր մի մտաւ. ՃԺ
և առաց ա̃մ կենդանիք 'ի յինքն
'ի տես գան. և զարջն դռնապան
եդ 'ի դուռն քարայրին. գազանք և
էրէք որք մտանէին առ առիւծն որ
ուստ հիւանդացեալ էր նա զամէնն

ուտէր. և այլ ոչ ելանէին. եկն
խոզն. քանզի բնութեմբ 'ի վայր հայե-
ցող է. կանգնեցաւ 'ի դրանն. և
ոչ մտանէր: Աւ ասէ դռնապանն,
մուտ 'ի ներս. և նա ասէ ոչ մտանեմ, քանզի
որ մտեալ է՝ այլ չէ ելեալ. ահա ե-
րևի հետն: Աւ է հար դռնապանն
զխոզն. և խոզն բարկացեալ զբաշն
լարեաց՝ և էզարկ զարջն. և ընդ եր-
կուս կէս արար՝ և մեռաւ. և ամօ-
թալից արար: Ցուցանէ: Աւ է. քար
այրն դժոխքն է. և առիւծն սա-
տանայ է. և արջն խուր զօրքն է: Աւ
մեղաւոր՝ որ անդարձ է մեռեալ.
և 'ի դժոխքն է անկեալ այլ ո՛չ կարէ
ապաշխարել: Աւ խոզն որ դարձաւ և ոչ
մտաւ. Նա այն մեղաւորն է՝ որ
զմեղսն եթող՝ և դարձաւ՝ և ոչ
մտաւ 'ի դժոխքն. որպէս խոզն այն
ոչ մտաւ 'ի քար այրն Ապաշխա-
րեաց մեղաւորն և ելաց. և այլ ոչ
գործեաց մեղս. և ամօթ արար
զսատանայ. որպէս արար խոզն զարջն:
Այլ

Էր ումն հազար խոզ էած 'ի մի տեղի՝ և զպարիսպ էած շուրջ. և ինչօք կորեկ և գարի բերէին, և բաշխէին զխոզսն: Նա իշու՞անքն 'ի բանէն երբ գային. և քուռակնին երթային մօտ 'ի խոզերն՝ թէ ուտեն 'ի կորեկէն. կամ 'ի գարուոյն. և պահապանքն ոչ թողուին. այլ 'ի կառավին հարկանէին: Եւ յորժամ իշու՞անքն գային՝ նա քուռակնին զան կատէին մօրերուն, և ասէին. թէ խոզերուն անխնայ կուտան, թէ կերէք. և մեք սովամահկու լինիմք: Եւ ասեն իշու՞անքն ը քուռակնին. թէ համբերեցէք. այն խոզերն որ կուտեն՝ նա պիտի որ վճարեն զամէն զինչ կերեալեն: Եւ անցին աւուրք ինչ. և ահա եկն թագաւորն՝ նըա տաւ նմերայ պարապլին. և հրամայեաց՝ որ զամէն խոզերն կապեն՝ և ընդմէջ կտրեն: Եւ սկսան կապել և կտրել ընդմէջ: Եւ սկսան խոզքն բողոք հարկանել՝ և ճիչ բառ

նալ. և ծչէին առաւել քան զայլ
կենդանիս. և ասեն քուրդնին ընդ-
իշոյանին. Թէ այն ինչ ձայն է.
և ասեն՝ Թէ կու վճարուէին 'ի խոզե
րոյն զոր կերեւլէն. և տեսեալ քուր
դնոյն զտանջանս խոզիցն՝ դողային։
Ու կանչեցին, և անկին յոտս իշոյն և
ասեն, Թէ վՏ Տ. Ի՞տեսէք. Թէ գարե
հատիկ ծղակմիջերս է կպեալ. կամ
կորեկ հատ 'ի կռնակիս. և ասեն մայ
րերն ընդ քուրդնին. Թէ մի վա
խէք՝ ով կերեալ է նայ այն վճարէ.
դուք մի հոգայք։ Յուցանէ։ Որ
խոզքն մարմնասէր մարդիկքն են,
և փափկասէրք. և անզեղջ և ան
դարձ մեղաւորքն, և իշխանքն։ և
քուրդնին աղքատքն։ Ու այն որ
ծեծէին, և ոչ տային Թոյլ ուտե
լոյ. որ և մեղաւորն հարկանէ զաղ
քատն՝ և ոչ առնէ զողորմութի. և
ընդ անձն ասէ՝ Թէ կեր, և խմէ՝ որ
չհիւանդանաս։ Ու Թագաւորն
Քծէ՝ որ և յաւուր դատաստանին
ասէ

ասէ վասն մեղաւորացն. Թէ կարե
ցէք ընդ մէջ՝ և հանէք 'ի խաւարն
արտաքին. ուր լալ աչացն է, և կըր
ճել ատամանցն։

Ճժր

Է սպիտակ հաւ մի 'ի Թագաւո
րաց տունն։ և յորժամ մարդն
հիւանդանայ. նա բերեն զհաւն
մօտ 'ի հիւանդն։ Եթէ ունիցի հիւ
անդն դարձ որ առողջանայ. նա
հաւն քաղցրութբ հայի 'ի հիւ
անդն, և գիրկ արկանէ, և զհովհա
րու թևովն։ Ապա թէ մահու լինի
հաւն խոժոր հայի, և դարձուցա
նէ զերեսն 'ի հիւանդէն, և փախ
չի. և այն հաւովն կարեն գիտել
մարդիկք զմեռանելն և զապրելն։
Յուցանէ։ Հաւն Ած օրինակ է՝ և
հիւանդն մեղաւորին. արարիչն
Ած հայի 'ի մեղաւորն. որպէս հայի
հաւն 'ի հիւանդն, եթէ կամք ունի
որ դառնայ և զղջանայ. նայ Ած
քաղցրութբ 'ի մեղաւորն հայի.

և գիրկ արկանէ, և համբուրէ․ զի ոչ կամի զմահ մեղաւորին՝ այլ զդառնալն ՚ի չար ճանապարհէն։ Ապա թէ չունենայ կամք մեղաւորն դառնալ ՚ի մեղաց․ նա Տ̃ր դարձուցանէ զերեսն ՚ի մեղաւորէն։ Որպէս ասէ մարգարէն․ դարձուցից զերեսս իմ ՚ի նոցանէ՝ և ցուցից նոցա։

ՃԺԳ Այր ոմն մեծատուն ունէր բազում կաղապար ոսկի և արծաթ․ և տարեալ թաղեաց զնոքն ՚ի գետին։ Եւ ծառայքն տեսին զտեղին ուր թաղեաց․ և ՚ի գիշերի գաղտ հանին, առին և փախեան․ և խմացեալ այրն որ չկայր ոսկին և արծաթն։ Եւ սկսաւ լալ՝ փետել զմօրուսն՝ և վայ տայր անձինն․ և նեղասրտեցաւ՝ և կամէր չուան առնուլ և կախիլ։ Եւ տեսեալ այր մի իմաստուն, ասէ․ ընդէր խեղդիս։ Եւ ասէ ծառայքն իմ զոսկին և զարծաթն

ծաթն իմ դողացան, և փախեան։ Եւ ասէ իմաստունն. որչափ էր ոսկին։ և սալի քար կայր. և ցուցանէր թէ այս չափ էր՝ և այնչափ էր։ Եւ առեալ իմաստունն զքարն և զսալն թաղեաց 'ի տեղւոջն ուր ոսկին էր. և ասէ իմաստունն, ահա ոսկին քո ասա. քանզի անպէտ էր քեզ իբրև զքարս զայս։ Եւ բանիւս այսուիկ իմաստունն մխիթարեաց զայրն. և թափեաց, որ ոչ խեղդեցաւ։ Յուցանէ։ ա̃մ մարդ որ զոսկին և զարծաթն սիրէ. նայ զերդ զայն այրն է որ ոչ հոգւոյն եղև՝ և ոչ մարմնոյն։ Եւ փոխանակ շահոյն կամէր խեղդիլ. և անձնմահ լինիլ. զարծաթսիրութն ասէ արմատ է ա̃մ չարեաց։

Է ծառ մի՝ ի հնդկաց աշխարհն. և ունի պտուղ գեղեցիկ և քաղցր. և է տերևալից. և ունի շուք գեղեցիկ. Եւ է 'ի սահմանս նր̃ իժ օձ բազում. եթէ օձն 'ի մարդկանէ ՃԺԳ

որ 'ի ծառէն տակն գտանէ , չխայ
թէ. ապա թէ 'ի զատ գտանէ 'ի ծա
ռէն խայթէ։ Ցուցանէ։ Նշան
Ր. Ծ, և պտուղն և շուքն պատուի
րանն Ր. Ժ. և օձն սատանայ. եթէ
զոր գտանէ 'ի դուրս 'ի պատուի
րանէն Ր. Ժ. նա խայթէ որպ օձն այն։

ձժե Եւ ահա ժողովեցան 'ի մի տեղ՝
տասն վաճառականք. և գնա
ցին ընդ ճանապարհ մի. և մտին
յերկիր մի օտար՝ և յերկիրն այնէր
սով. և խժ, և օձ. և նեղութի. և
վաճառականքն տարակուսեցան։
Եւ անկաւ յետոյ նցա հրեղէն պա
րիսպ. և ոչ կարէին յետս դառ
նալ. և առեալ նեղ ճանապարհ մի
երթային՝ թերևս գտանիցեն զ-քա
ղաք՝ զի վաճառեսցեն. և գնացին
ամ մի մեծաւ աշխատանօք՝ և ոչ
գտին զշէն. և լալով և ողբալով
կոծէին զանձինս իւրց։ Եւ ահա
բուսաւ նցա թև մի արծուոյ. և նք
քա

ջանացին, և զթև մի այլ չինեցին։
Եւ հանին 'ի նոցանէ կորեան. և
հինգ թուեան, և վերացան. և տե
սին գաւառ մի լուսեղէն. Եւ թա
գաւոր քաղաքին առաքեաց առ նա
զօրականս՝ և ասէ. բարի եկիք՝ ահա
քաղաքս առաջի ձեր. յոր տեղ կա
միք դուք՝ 'ի հոն հանգիք։ Եւ համ
բուրեաց թագաւորն զվաճառա
կանսն. և գովեաց՝ և ասէ. վաշ է
ձեզ՝ որ ընդ նեղ ճանապարհն ե-
կիք։ Եւ մտեալ 'ի քաղաքն գտին
զվաճառականսն՝ զորս 'ի բաղում
ժամանակս ցանկային զի տեսանի
ցեն։ Եւ գտին զգինձս՝ և զդիպակս՝
և զկումաշն՝ զոր կամէին գնել. և
ուրախացան մեծաւ ուրախութբ։
Ցուցանէ։ Ո ի տասն վաճառա
կանք ադամ է և իւր ծնունդքն. և
այն որ օտար երկիր՝ և յիժանոց. և
'ի սով՝ որև արտաքսեցաք յանմահա
կան դրախտէն. և անկաք յայս աշ
խարհս՝ ուր կայ իժ և օձ. որէ սա

տանայ՝ և 'ի նեղութե կամք հոգւով
և մարմնով։ Եւ այն որ թէ և արծունի
բուսաւ, այն հաւատն է. որ Ած
յերկնից յերկիր իջաւ՝ և հաւատա
եալ մարդկան։ Եւ այնոր ջանացին.
և թէ և մի եւս ինքեանք չինեցին. այնք
են. որք ջանացին, և բարի գործեցին.
մէկ թէ և հաւատքն. մէկ բարեգոր
ծութին։ Եւ այն հինգն որք կորեան.
այն նոքա են, որ մեղք գործեցին,
և կորեան 'ի ձեռն սատանայի. որք
են դասք ձախակողմանցն. որք կո
չին յիմարք կուսանք։ Եւ այնք որք
թուեան, նոքա են՝ որք լացին, և
սգացին. զանձինս իւրեանց չար
չարեցին վն արքայութեն, որք են
դասք աջակողմանցն. որք կոչին իմաս
տունք կուսանք։ Եւ այն լուսեղէն
գաւառն երկնից արքայութին է.
քաղաքն անդրանկաց վերինն Եդեմ։
Թագաւորն Ած է՝ և զօրականք
հրեշտակքն. որ և Ած բազում
հրեշտակս տուաքէ՝ յոլժ ամենեւա

նի

նխարդարն· և գովէն զարդարանն, որք զերկրաւոր կեանս արհամարհեցին։ Նոյն համբուրէ Ա՟ծ զարդարանն և ասէ՝ վաշ է ձեզ· որ ընդ նեղ ճանապարհն եկիք· ոչ ինքն ասաց· նեղ է ճանապարհն, և անձուկ է դուռն, որ տանի՛ ի կեանսն յաւիտենից· և սակաւք են, որք գտանեն զնա։ Նեղ ճանապարհ զչարչարանսն ասէ։ և որ նեղութեց համբերէ· և այն որ գտանէ բեհեզս՝ ծիրանիս՝ և զդիպակս՝ և զակունս· որ է բարեգործութ՟ին, պահքն, սէրն, համբերութ՟ին, և այլ բազում։ Նոյն այն, զի գտին զվաճառականսն· զորս՛ի բազում ժամանակս ցանկային տեսանել· որ և արդարքն որչափ էին յայս կեանքս, նա ցանկային զի տեսանիցեն զմարգարէսն, և զառաքեալսն, և զհայրապետսն· և զմարտիրոսն· որև գտին զարդարան՝ զորս ցանկային տեսանել։ Տասն վաճա

ռա

ռականք․ զտասն կուսանան ասէ։
Եւ այն որ հինգն կորեան այն զյի
մար կուսանան ասէ։ Եւ այնոր
հինգն ապրեցան, և Թուեան․ զի
մաստուն կուսանան ասէ՝ որք Թը
ուեան արդարուԹբ։

ձժղ Այր քաղաք մի․ և կայր բազում
ճանապարհ, որ երԹայր 'ի քա
ղաքն յայն։ Բազում մարդիկ գնա
ցին․ և մին մարդն արդիլեցաւ՝ և
զաօլերաց փոկերն կապէր․ և այլ
ոչ հասաւ․ և դուռն քաղաքին փա
կեցաւ՝ և ոչ կարաց մտանել։ Ցու
ցանէ։ Թէ փոքր առաքինուԹի է՝
և Թէ մեծ տանի զմարդն յարքայու
Թին․ ոպ զճանապարհն այն, որ
զմեծ և զփոքրն տանէր 'ի քաղաքն։
Եւ որ ընդ աշխարհիս զբաղանան
զբաղի՝ ի մէջ մեղաց շաղախի․ նա
ոչ կարէ հասանել արդարոցն․ և
մտանել 'ի քաղաքն անդրանկաց․
ոպ այրն այն, որ ընդ սօլերովն եղև
և

և ոչ էհաս ընկերացն. և ո՛չ մնաց
՚ի քաղաքն. ք՟զի փակեցաւ դուռն:
Նոյնպ՟ փակի դուռն ողորմութե՟ն
անողորմից, և անդարձ մեղաւո
րացն յաւուրն դատաստանի. ոպ՟
փակեցաւ յիմար կուսանացն:

Մկներն ասացին ընդ խլուրս. Թէ ՃԺԷ
այդ էր է որ մեք ոչ սլեհ ունիմք
և ոչ եղջիւր. և կատուն զմեզ դիւ
րաւ կալնու: Եւ մկունքն սրեցին
փայտ, և կապեցին ՚ի գլխնին.
որ թէ կատուն գայ նա մեք կռուե
ինք. որ ոչ առնու զմեզ. և ահա
եկն կատուն, և մկունքն փախեան,
և ընդ ծակն ՚ի ներս մտին. և այնք
որք զփայտն եղջիւր էին կապել.
ոչ կարացին մտանել ընդ ծակն.
այլ կատուն կալաւ և էկեր: Ցու
ցանէ: Մուկն որ եղջիւր կա
պեաց, այն մարդիկքն են որք պճ
նին և ծարուրվին. և սպիտակա
ցուցանեն զերեսս. և ապականին

դե

գեղեցիկ. և այն զոր Ա̃ծ է ստեղ ծել ոչ հաւանին. այլ իւրեանքն այլ գեղեցկանան. և որոգայթ են 'ի ձեռն սատանայի. ոպ̃ որոգայթե ցաւ մուկն 'ի ձեռն կատուին:

ճժը Օձն յորժամ ելանէ 'ի ծակէն, և երթայ ընդ որ և կամի. նայ հինգ ծուռ ոտնու՝ հինգ ոտեղծուի ինքն՝ և ապա կարէ գնալ: Եւ յոր ժամ գայ 'ի ծակի դուռն ըղորդի և ապա կարէ մտանել 'ի ծակն՝ յիւր հանգստարանն: Ցուցանէ: Որ մարդն՝ հինգ զգայարանս ունի. աչքն. ականջն. բերանն. ձեռքն. ոտքն. նայ մարդ յորժամ գնայ 'ի մեղս զհինգ զգայարանսն ծռէ, Աչօքն չար հայի. ականջօքն չար լսէ. բերանովն չար խօսի. ձեռօքն անօրէնութի̃ գործէ. ոտօքն 'ի չար ճանապարհ գնայ: Եւ յոր ժամ մարդն գայ եկեղեցւոյ դուռն յաղօթել. նա պարտէ զհինգ ըղ

գայա

գայարանսն ըղորդել. և ՚ի չարէն կտրել. և ապա յեկեղեցին մտանել և աղօթել. որ է մայր մեր: և հանգստարան. և ապա Ա͞յ ընդունելի լինի աղօթքն: Ո͞պ օձն այն, թէ չղորդէ զհինգ ծուսն. նա ոչ կարէ մտանել ՚ի ծակն և ՚ի հանգստարանն. նոյնպէս մարդն թէ ոչ կտրէ զհինգ զգայարանսն ՚ի չար սովորութէն, նա ոչ մտանէ յարքայութ͞ին Ա͞յ: Չէ պարտ մարդոյն այնմիկ որ յեկեղեցի Ա͞յ մտանէ:

ՃԺԹ

Օձն երթայ ՚ի գուբ դաշտ. և ՚ի կանաչ և ՚ի ծաղկանց մէջ. և կանգնի իվ͞ր տուտանն, և իմանայ թէ հոտն յոր դիհաց գայ. և դէմ հողմոյն կանգնի. և հոտն զծաղկանց հատն ը͞ ինքն զարկնէ. և պարարտանայ ՚ի հոտոյն: Եւ ծաղիկ մի կայ՝ յորժամ այն ծաղկին հոտն ընդ ինքն դիպի. նայ լուսատու մարգա

րիտ

րիտ մի՛ ՚ի գլուխն յօրինի · և գիշերն
ընդ որ երթայ օձն այն լոյս է լուրն·
և լուսաւորէ մարգարիտն զօձն ·
և ցերեկն մութն ։ Ցուցանէ ։ Թէ
դաշտ կանաչ եկեղեցի Ք.Ի է · և
ծաղիկն պատուէրանն Ք.Ի է, առա
քելական և մարգարէականն ։ Եւ
այն մեծ ծաղիկն՝ որ գեղեցիկ է, և
զլուսատու մարգարիտ շնորհէ ·
այն աւետարանն Ք.Ի է · և հողմն
Հոգին սբ ։ Եւ թէ ոք իմաստութբ
երթայ յեկեղեցի Ք.Ի և հաւատով
մտիկ դնէ Ք.Ի բանիցն · Նայ Հո
գին սբ անուշահոտութբ արբու
ցանէ զնօզա · Եւ եթէ զաւետա
րանական բանն, հաւատով և սրտի
մտօք առնու՛ ՚ի միտ · Նա լուսատու
մարգարիտ լինի անգին · և զհո
գւոյն խաւարն, որ է մեղքն, հա
լածէ · և զաշխարհիս կեանքն
որ է սուտ լոյս՝ մութն երևեցու
ցանէ ։

Գող մի ձմերուկ մի գողացաւ 'ի պարտիզէն, և կամէր կտրել: Խօսեցաւ ձմերուկն և ասէ. մի կտրէր զիս. զի 'ի միջի իմ խարասցի էշ կայ՝ կաց մինչոր ածեմ և զպա կորէ: Նա հաւատաց այրն՝ և տարեալ 'ի տունն եդ 'ի պատուհանն. և եկաց անդ մինչև պատռեցաւ՝ և պթխեցաւ՝ և ելաւ նեխութիւն որ տաքս. և աղտոտեցաւ 'ի գերութէ: Ցուցանէ: Յորժամ մարդն ընկնի պարտք ասել զինքն թագաւորի որդի եմ, կամ մեծատան. որ չապանանեն, այլ պահեն. մինթէ գան գանձ տան և գնեն: Նա ծառայն կամ մահով խալսի. կամ փախչի, և ազատի: ճի

Եր ծառ մի բարձր յոյժ. և տերևք նորա մեղր կաթեցուցանէին. և այր մի ելեալ 'ի նմա լիզէր զտերևն։ Նա մկունք երկու հատանէին զծառն. և կայր առաջի ծառոյն ճիա

գուբ մի սոսկալի, և ահագին վի
շապ մի 'ի նմա։ Եւ այրն այն ոչ երկն
չէր՝ և ոչ դադարէր 'ի լիզելոյ զմե
ղուն։ Ցուցանէ առակս։ Խւէ ծառն
ժամանակս է. և մեղր 'ի նմա մեղքն
է, և հեշտութիւն. զոր գործեմք
լիզելով։ Եւ երկու մկունքն տիւն է
և գիշերն. որք հատանեն զժամա
նակս մարդոյն։ Եւ գուբն գերեզ
մանն է. և վիշապն մահն է։ Ա՛յ
մեզ՝ զի հեշտացեալեմք յայսցանէ,
որք կան առաջի մեր։

ՃԻԲ Այր մի՝ որ ունէր կին մի բար
կացող՝ և անզգամ, և լեզուա
նի. որ հանապազ անհանգստէր՝
և տանջէր՝ զայրն իւր։ Եւ յա
ւուր միում 'ի միտ էած զբանն
սաղօմօնի թէ լաւ է յանապատի
բնակել քան ընդ կնոջ անզգամի
լեզուանւոյ և բարկացողի։ Եւ
ասէ 'ի կինն. այ կին տուր ինձ պա
քան զի երթայց 'ի լեառն՝ և բերից
տանս

տանս փայտ վառելոյ։ զայս ասաց՝
և երթայր 'ի լեառն զի անդ բնա
կի։ Եւ կինն աղձատեաց և գարշ
մնաց. և այրն լալով գնաց 'ի լեառն։
Եւ իբրև գնաց 'ի շուրջ, եգիտ անդ
'ի լեառն դատարկ ջրհոր մի։ Եւ
ասէ 'ի միտս իւր. երթայց, բերից
զկինն իմ՛ աստ՝ 'ի ջրհորս իջուցից՝
և թողից աստ։ Եւ գնաց առ կինն,
և ասաց. այ կին, ես քեզ բան մի ա-
սեմ, և դու զայն մարդոյ մի ասեր.
և ասէ կինն ինչ։ Եւ նա ասէ, գնա
ցի 'ի լեառն՝ և գտի անդ դատարկ
ջրհոր մի. և իջի անդ, և տեսի կա
նացի զարդ ոսկեղէն և արծաթե
ղէն։ Ապարձան՝ մատանի՝ խալխալայ՝
մզնոց՝ ձրամնկոտ և այլ զարդս կա
նացի։ Եւ ասէ կինն ուրախութբ,
երթամք՝ հանեմք զայն և բերեմք 'ի
տունս՝ որ մարդ չիմանայ՝ և ոչ տե
սանէ։ Եւ ելեալ գնացին այրն և
կինն 'ի բերան հորոյն։ և ասէ, դու
բունէ զպարանն. զի դու ոչ գի

տես զինչ առնես։ Եւ կնոջն ասէ,
թէ ես իջանեմ։ Եւ այրն կալաւ
զպարանն, և իջոյց զկին 'ի հորն․ և
բերեալ մի այլ քար եդ ի վ̄ր հորոյ
բերանին, և գնաց։ Եկաց աւուրս
բազում։ Եւ ասէ՝ երթայց, և տե
սից զկին իմ, թէ զինչ եղև․ և յոր
ժամ եկն 'ի ջրհորն՝ ետես 'ի բե
րան հորոյն զդև մի՝ զի կայր անդ․
Եւ ասէ դևն, ով մարդ՝ Մ̃ծ համար
աստիտար զայլն 'ի յետ՝ որ ես ելա
նեմ․ և քեզ շատ բարութի̃ առ
նեմ։ Ասաց այրն զինչ։ ասէ դևն,
կին մի եկն աստ՝ անկաւ 'ի ջրհորս․
և անարգէր՝ և հայհոյէր զայր մի։
Եւ ես ասացի, թէ քանի քաշանք
տաս․ մէկ պահ դադար տուր․ և
նա եթող զայր իւր՝ և վիճեցաւ
ընդ իս։ Եւ փախուցեալ զիս ազա
տէ․ և ասէ այրն, զինչ խոստանաս
ինձ․ և նա ասէ՝ երթամ, և մտա
նեմ 'ի դուստր թագաւորին, որ
քեզ տան․ Յայնժամ այրն այն եր

դուռն եդ գլխին. և ծերպեաց
զայլն և ել դևն։ Ու ասաց դևն,
յորժամ գաս և առնուս զդուստր
թագաւորին. ես երթամ, մտանեմ
յայլ թագաւորի դուստր. և դու
անդ մի գար թէ չէ յայնմանէ ե-
լեալ 'ի քեզ մտանեմ։ Ու ել դևն,
և գնացեալ եմուտ 'ի դուստր թա
գաւորին. և աղաղկէր, և ասէր 'ի
բերանոյ աղջկանն. թէ զիս այս
ինչ մարդոյ տուք որ ելանեմ։ Ու
յորժամ տարան զայլն զայն, և ել
դևն. և գնացեալ եմուտ յայլ թա
գաւորի դուստր՝ և լլկէր զնա չա
րաչար։ Ու թագաւո՛րն լուաւ՝ թէ
փեսայ թագաւորին բժշկութիւ
առնէ, և զդևս հալածէ. յուղար
կեաց թագաւորին բազում կլայ
էթ և արմաղան. թէ յուղարկէ
զքո փեսայն՝ որ գայ իմ դուստրն
բժշկէ։ Յայնժամ աղաչեաց թա
գաւորն զփեսայն իւր թէ գնա.
և նա ելեալ գնաց։ Ու յորժամ

գնաց առ Թագաւորին դուստրն ։
Ասաց դևն, ես քեզ ո՛չ ասացի
թէ աստ մի գար. և դու ընդէր
եկիր։ Յայնժամ փեսայ Թագաւ
որին ասէ. ես եկի զի քեզ իմաց
արարից. զի այն կինն եղեալ է
'ի հորոյն. և զքեզ կարի խիստ կռու
զէ։ Ասէ թէ ուր է. և նա ասէ
թէ աստ եկեալ է 'ի դուրս դար
պասիս։ Նա ասէ դևն, Ա՜յ սիրուն
համար զնա 'ի դուռն արգիլէ.
մէկ պահ՝ որ ես երթամ, 'ի վեր
փախչիմ. և քեզ շատ բարութի առ
նեմ։ Նա այնպիսի բանիւ բժշկեաց
զդուստր Թագաւորին. և Թա
գաւորն ետ նմա բազում գանձս,
և առեալ գնաց։ Ցուցանէ առակս՝
Մարդ հետ լեզուանի կնոջ՝ անզ
գամի, և բարկացողի ոչ եղանէ
'ի հուն։ Օ̣ի սաղօմօն հրամայէ.
Թէ լաւ է ՝անապատի բնակիլ քան
ընդ կնոջ անզգամի, լեզուանւոյ
և բարկացողի։

Աւր

Այր մի բարի· զատեալ ա՟մ չա- Ճիգ
րեաց· և երթային ճանապար
հորդք և վաճառականք բազումք
յաշխարհէ յաշխարհ· և այս բա
րի այրս ի մէջ նց՟: Եւ գնացին ՚ի տա
ղի մի՝ որ ասէին թէ, երեք աւուր
ճանապարհ.ք այլ ջուր չկայ: Մէկ
ջրհոր կայ· և անտի ընդ այն այլ
երեք աւուր ճանապարհ այլ ջուր
ոչ կայ: Եւ այն ջրհորն ընկեալ
կային երկու դևք: Եւ զինչ մարդ
որ անդ մտանէր այլ ոչ ելանէր· և
գնաց կարաւանն անդ· և ջուր զոր
ունէին հատեալ էր: Յայնժամ
ասաց կարաւ՟անն· ով տանու զիւր
արեան գինն՝ և մտանէ ՚ի ջրհորս,
և ջուր տայ ամենեցուն: Ոչ ով
մտանէր, և ջուր տայր ամենեցուն·
՚ի յետին որ զինքն իվեր քարշէին·
դևն կտրէր զպարանն՝ և զմարդն ՚ի
ջրհորն կորուսանէր: Եւ ասէ բարի
մարդն, թէ ինձ տուք զարեան
գինն, որ մտանեմ ՚ի հորն, և ջուր


տամ

տամ ամենեցուն: Եւ առեալ զա
ջեան զինն, և եմուտ 'ի ջրհորն՝ և
տայր ջուր ամենեցուն հաւասար:
Եւ յորժամ զինքն կատարեցին, դեւն
էհատ զպարանն. և տարեալ ըզ
մարդն 'ի մաղա զայն որ կայր 'ի ջըր
հորն. և եղի դեւն այնէր այլակերպ
և դժնեակ սեւադէմ: Եւ ասէ 'ի
մարդն այն, Թէ հաւանիս ինձ, և
ասէ մարդն այն, փառք Այ որ ըզ
քեզ ստեղծեր է, և յօրիներ զայդ
քո կերպարանդ. զայդ լոյս երեսդ.
զայդ ծովաչերդ. և սկսաւ գովել
զամ տեղիք նր մի ըստ միոջ է: Եւ
էր անդ ժահահոտ գորտ մի. և
ասէ դեւն ընդ այրն, Թէ գորտն
ինչ ազգ է: Եւ էր գորտն այն յոյժ
ապտեղի. և այրն սկսաւ գովել
զնա մի ըստ միոջէ զամ տեղիս գոր
տոյն այնորիկ: Եւ յայնժամ եղ դեւն
և գորտն մեկին յայլ ներքսի մաղա
զայն. և փոխեցան յայլ կերպարան
լուսափայլ. և եկին առ այրն, և
ասեն՝

ասեն՝ հիմի ինչեմք. զի մինն 'ի
կորիծ կերպարանեալ էր, և միւսն
յաղջիկ։ Եւ ասաց այրն այն, ես գի
տէ ի դուք հանց գեղեցիկ էք նա՝
ես այնոր համր զձեզ յառաջ գովե
ցի։ Եւ յայնժամ առեալ զնա դևն
եմուտ 'ի ներսն մաղաղայն. և եցոյց
նմա զմաղաղայն, յոր զմարդիկն
սպանեալ էր. և ասէ 'ի յայրն՝ սոքա
ամենեքեան ինձ ոչ հաւանեցան՝
վասն այնորիկ սպանի։ Եւ դու ինձ
հաւանեցար, առ քեզ որչափ և կա
րես զանձ և մարգարիտ. և ակունս,
ոսկի և արծաթ՝ և զնա խաղութիւն.
զի դևն ունէր մաղաղայն։ Եւ ասէ
այրն թէ չեմ կարեր տանիլ զի հորս
խոր է՝ և ընկերքս իմ գնացին։ Յայն
ժամ առեալ դևն զմաղեայ տոպ
րակ մի, և էլից զնա ոսկւով և ար
ծաթով և ակամբք պատուականօք.
և առեալ զինքն և զտոպրակն զան
ձովն՝ և եդ 'ի հորուն բերանն, և
ասաց գնալ։ Եւ գնացեալ է հաս կա

րուանելին։ Եւ նոքա տեսելին, և զարմացան, թէ որպէս ազատեցաւ 'ի դիւէն։ Ցուցանէ առակս։ Բարի, և խոնարհ մարդոյն Ա՜ծ օգնական է. և դևն ոչ կարէ չար առնել նմա։ Որ ասէ սաղմոսն թէ արդարն յորսողաց փրծանի. և փոխանակ նորա մատնի ամբարիշտն, և ինքեանք անկցին։

ճխդ Իմաստուն ուստադէրէց մի կայր 'ի քաղաք մի. կամեցաւ զորդին իւր քահանայ առնել։ Եւ ժողովեցան բազում քահանայք և եպիսկոպոսք. և յորժամ յօրհնել սկսան զնորընծայն. յայնժամ 'ի տեսիլ տարան զնորընծայն։ Որ էր բարձր սանդուղս մի, և սանդղխին գլուխն էր զարմանալի դարպաս մի. և էր անդ բազմեալ լուսափայլ Թագաւոր մի. և համբոյր առնէր քահանայից։ Եւ բերէին զծեր քահանայն 'ի սանդղխին տակն. և բերէին

զինչ

զինչ կերեալ էր 'ի ժողովրդենէն. և կապեցին 'ի մի տեղ. և բարձին ծեր քահանային, թէ առ և եղ 'ի վեր՝ և համար տուր թագաւորին. Իսկ նա ոչ կարէր՝ զի բեռն ծանր էր և սանդուղքն բարձր. և հրեշտակք հրեղէն մախաթով մխէին զնա յետևանց. և նա ոչ կարէր. Յայնժամ մինն 'ի լուսաւոր արանցն ասէ՝ թողէք զծերդ, զի զոր ինչ առեալ է որդւոյն է կերցուցեր. Իսկ յայնժամ բերին զնորընծայն, և բարձին զբեռն նր̅ իվր̅ նր̅. և նա ոչ կարէր հանել 'ի վեր. և զհամարն տալ. Իսկ հրեշտակքն կարի խիստ մխէին զնա յետևանց. և խիստ ցաւեցոյց զնորընծայն, և 'ի ցաւուն զարթեաւ, և փախեաւ. և ոչ եղև քահանայ. Յայնժամ ասաց եպիսկոպոսն. թէ քեզ զինչ պատահեցաւ՝ որ չ լինիս քահանայ. Ասաց նորընծայն՝ թէ այն որ ինձ պատահեցաւ՝ թէ քեզ էր պատահեալ.

հեալ. յառաջ դուն պիտի փախ չէիր յեպիսկոպոսութենէ։ Յուցանէ առակս։ Թէ ով ուտէ այն վճարէ. և զինչ մարդ որ ուտէ և ոչ վճարէ, ինքնին տալոց է համարն առաջի Թագաւորին յորժամ գայցէ։

ձիե Էր իմաստուն ճարտարապետ մի. և ուսուցանէր զամ զիմաստութին իւր՝ զոր գիտէր աշակերտին։ Եւ երկու բանս ոչ ուսուցանէր։ վն այն զի կարի իմաստուն էր աշակերտն իւր. և յորժամ ուսանէր այլ ոչ կենար'ի մօտն. զի յոյժ սիրէր իմաստասէրն զաշակերտն վասն խոնարհութեն։ Եւ ասէր նմա որդեակ, կաց առ իս մինչև վերջին աւուրն իմ. և զայն երեք բան խրատն ուսուցանեմ քեզ՝ և գնա խաղաղութեամբ, և այլ ոչինչ պակասի քեզ։ Եւ նա եկաց առ նմա մինչև յօր մահուանն։

անն ։ Եւ յորժամ հիւանդացաւ,
և գիտաց զվախճանն իւր. յայն
ժամ ասաց ցաշակերտն իւր՝ եկ
ասեմ. երեք խրատն ։ Եւ ասէ ցնա
մէկ զքո աղէկ օրդ վատի մի տար.
երկու յետնուց 'ի վեր ճանապարհ
մի գնար. երեք զինչ աչօքդ տես
նուս զայն մարդոյ մի ասեր ։ Մե
ռաւ, և թաղեաց զնա. և ել գնաց
'ի քաղաք մի ։ Եւ ետես անդ գեղե
ցիկ դուռն մի բարձր. և յառաւ
օտն աւերեաց զդուռն, և ջուր
ցանեաց, և գնաց ։ երկու օրն զայն
արար. և երեք օրն աշ կեցան, և
ըմբռնեալ տարան զնա առ դրան
տէրն ։ Եւ ասէ պարոնն ուստի
ես, և նա զիրաւն ասաց. և ետես
պարոնն զողայն, զի կարի գեղե
ցիկ էր, և իմաստուն ։ և ասէ ցնա,
որդեակ՝ մեր թագաւորին որդի
չունի. և դու կամիս՝ և տարայց
զքեզ՝ զի եղիցիս որդէգիր, և ժա
ռանգ աթոռոյն ։ Եւ ասէ, դու

դի

գիտես տէր իմ։ Եւ առեալ զնա առ
Թագաւորն տարաւ, և առ Թագու-
հին. և արարին իւրեանց յորդի.
և եղև որդի Թագաւորին։ Եւ յաւ-
ուր միում ել Թագաւորն յորս է-
րէոց. և ունէր Թագաւորն զմա-
տանի մի, որ յաջողութե՟ն տլիսմ
իվերայ ականն գրեալ էր. և զայն
մոռացեալ Թագաւորն 'ի ներքև
բարձին։ Ասաց յորդէգիրն իւր.
թէ 'ի ներքև բարձին մոռացայ
զմատանին. գնա և բեր զմատանին
յաջողութե՟ն։ Եւ նա ել յերիվար,
և գնաց զմատանին առնուլ. և
ետես զմէկ նայիպն յանկողին Թա-
գաւորին. և նա էառ զմատանին,
և գնաց. և ոչ ումեք յայտնեաց ըզ
բանն։ Յայնժամ խորհուրդ արա-
րին նայիպն և Թագուհին. զի յոր
ժամ դարձցէ Թագաւորն սպանա-
նել տան զորդի Թագաւորին։ Եւ
'ի գալ Թագաւորին գնաց Թա-
գուհին ընդ առաջ. և 'ի զուր մատ-
նեաց

նոցա զանմեղ մանուկն. Թէ յոր
ժամ եկն 'ի գիշերի տանել զմա
տանին, և դատապարտեաց զիս.
ո՞չ կինն պետաբրէի զյօսէփ: և
Թագաւորն յամաչելոյն ոչ սպան
զմանուկն: Այլ ուղարկեաց զնա
այլուր Թագաւորի որ ընդ իշխա
նութբ̃ էր եղեալ իւրն: և գրեաց
առնա գիր այսպէս: Թէ յորժամ
գայ Թղթիս բերողն առ ձեզ. ըզ
գլուխն կտրեցէք, և յիս ուղարկե
ցէք: Իսկ մատնեհուրեցին զԹուղթն
արքունական մատանեաւն. և ե
տուն յորդէ գիր Թագաւորին. և
առեալ գնաց: Իսկ գրեալ կայր իմէջ
Թղթին. եթէ ասէ, որդի եմ Թա
գաւորին, կամ նայիպն, կամ հաւա
սարն իմ, մի լսէք նոցա՝ հատէք ըզ
գլուխն: Իսկ առեալ զԹուղթն
գնաց. և յորժամ յետինքն մօտ ե
ղև 'ի գեւղ մի. յիշեաց զբանն իմաս
տասիրին թէ յետնուց 'ի ճանա
պարհ մի գնար. յայնժամ զտապլ
պաղն

պաղն էզորն՝ և ելայն նայիան զոր
ետես յանկողին թագաւորին. և կն
առաջ և առեալ տարաւ ՚ի տուն
իւր, և ասաց. Հանգիր, կեր, արբ
և ուրախլեր. և տուր թուղթ դ յիս
որ տամն իմ առ թագաւորն. և քեզ
խաբար բերեմ. և նա ետ զթուղթն։
և առեալ գնաց։ Եւ հատին զնորա
գլուխն, յորժամ կարդացին ըզ
թուխթն. և ետուն յայլ ումն մարդ՝
որ ունէր, և բերէր ՚ի գիւղն. և
զայն էառ որդի թագաւորին տա
բեալ ետ ՚ի հայրն։ Եւ տեսեալ զայն
զարմացաւ թագաւորն. և գիտաց
զբանն՝ որ յԱ՛. Տէր յաջողեալ։ Եւ
ասէ որդեակ զինչ գործեալ է քո.
զի քեզ էր որոգայթս պատրաս
տեալ. ՚ի քո որոգայթն նա անկաւ։
Եւ ասաց՝ թէ դաւիթ ասէ. թաք
ուցին ինձ զորոգայթ. և անկան ինք
բեանք ՚ի նոյն։ Ցուցանէ առակս։
Թէ մարդ մարդոյ չար առնէ. և
յորժամ որոգայթէ՝ ձգէ՝ և որսայ.

նա ինքն պիտի անկանի յորոգայթն. և չար մարդն պիտի գայ չարի. ոպ̃ ասէ Դաւիթ. Փորեցին առաջի իմ խորխորատ՝ և անկան ինքեանք ՚ի նոյն: Նաև ասէ, բարի արա, և չար չի մնար: Ոպ̃ ասէ սաղմոսն. Թէ արդարն յորսողաց փրծանի. և փոխանակն ՚ի մատնի ամբարիշտն: Նաև Թէ որք մարդոյ ամօթն ծածկէ. նա Ա՜ծ իւրն պիտի ծածկէ՝ ոպ̃ որ դի Թագաւորին. բազում բարու Թն՜ ուէր արար Ա՜ծ: Նաև Հրամայէ աւետարանն մի դատէք, և ոչ դատիցիք. մի պատժէք, և ոչ պատժիցիք. և այլն:

Էր պատանի մի աղօթարար՝ որ զժամ աղօթս իւր առաձենին կատարէր. և այլ բազում աղօթս առանձին կատարէր, և մատուցանէր Ա՜յ: Նաև սատանայ կամեցաւ զմանուկն զայն ՚ի փորձանս ձգել. և յարոյց զկախարդ մի, որ սաստ ՚ի Ճիգ

պատանին, թէ եկ 'ի տուն իմ. և զոր
ինչ խնդրես յինէն, տաց քեզ։ Եւ
նա գնաց անմեղութ՟ զհետ կախար
դին։ Եւ կախարդն տարեալ զնա 'ի
տուն իւր՝ և փակեաց զդուռն իւր.
և եմոյծ զնա այլ ներքագոյն տուն.
և ասաց ցպատանին՝ դու կացիր
աստ՝ մինչև ես եկից՝ և նա եկաց անդ.
Եւ կախարդն ելեալ գնաց՝ և յու
շացաւ մինչև ցերեկոյ. իսկ պատա
նին աղօթելոյ ոչ դադարէր։ Եւ յոր
ժամ եկն կախարդն, և գիշերին ատեն
խաղաղեալ էր։ և եբեր երկու ձի.
և ասաց՝ 'ի մէկն դու հեծիր. և 'ի
մէկն ես։ Հեծան, և գնացին. և պա
տանին ոչ գիտէր թէ ուր տանէր
զինքն։ Եւ գնացին անհուն դաշտ
մի. և դաշտն լի էր եթէ օպացուովք։
Եւ կայր 'ի մէջ դաշտին սեաւ բլուր
մի, և ի վերայ սեաւ բլրին չարտախ մի՝
'ի սեաւ չարտախին կայր սեաւ թախտ
մի. և ի վերայ սեաւ թախտին կայր
սեաւ թագաւոր մի բազմեալ։ Եւ
գնաց

գնաց կախարդն առ սեաւ թագաւ-
որն. և ասաց՝ այն սեաւ թագաւորն
ցկախարդն. Ո՛չ է իմ չարադա-
մշակ՝ այսօր ինչ ես արարեալ՝ և կամ
ինչ ես վաստակեալ: Եւ ասէ կա-
խարդն. թէ զայս պատանիս բերի
որ երկրպագանէ քեզ: Եւ թա-
գաւորն ասաց ընդ պատանեկն. ո՛վ
պատանի. թէ երկրպագես ինձ,
զքեզ հաղորդակից կարգեմ զօ-
րաց իմոց: Յայնժամ աղօթքն ՚ի
միտն անկաւ՝ զի մօտէր առաւօտն:
Յայնժամ ասաց պատանին, թէ
ես սովորեմ այսմ ժամու երկիր պա-
գանել Ք͞ի՝ որ խաչեցաւ վ͞ն մեր՝
և ազատեաց զհօրս մեր ՚ի դժո-
խոց՝ և ՚ի ձեռաց սատանայի: Եւ ան-
կեալ երկիր եպագ ը͞ն արևելս՝ և օրհ-
նեաց զՔ͞ս: Յայնժամ եղև ձայթ-
մունք, որոտմունք ահագինք. և պա-
տանին յուշաթափեալ անդ. և յոր
ժամ յուշաբերեալ՝ ել իվէր՝ և զոչ
ոք ետես. բայց զինքն իմէջ անհուն

դաշտէն. և հրեշտակն եկեալ եցոյց զճանապարհն՝ և գնաց՚ի շէնն. և պատմեաց զեղեալ գործսն։ Յայնժամ լուեալ թագաւորն. և տարաւ զպատանեկն առ ինքն՝ և ասէ։ Ով բարի պատանեկ, ես յերուսաղէմ պետ գնամ, եկ տանիմ զքեզ ընդ իս՝ որ երկրպագանես Քսի, և սրբ գերեզմանին. և ամ տնօրինական տեղեացն Քսի Այ մերոյ: Եւ գնացեալ թագաւորն՝ էառ զպատանեկն ՚ի հետ. և յորժամ երկիր պագեաց Քսի և սրբ տնօրինականացն. և յորժամ գնացին երկիր պագանել ինքն և թագաւորն. Քսի պատկերն խօսեցաւ, և ասաց. ո՛վ պատանեկ ՚ի միւս անգամ դալըստեան իմոյ քեզ բիւր հազարաց Տր տունեմ. փոխանակ այնորիկ որ առաջի զօրացն դիւաց ինձ երկրպագեցեր անահ. և զիս Ած դաւանեցեր և հաւատացեր։ Յուցանէ առակս. թէ Ած զաղօթասէրն յամ չարեաց փրկէ

փրկէ և յա̃մ փորձանաց դիւաց. և յայնկեանքն փօխարէն հատուցանէ։ Ա̃ծ հրամայէ աւետարանն Ք̃ի. թէ ընդ միոյ երեսուն. և ընդ միոյ վաթսուն. և ընդ միոյ հարիւր. որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ։

Աղուէսն և արծուին եղեն եղբարք. և միաբանութի̃ արարին, և զերդումն և դաշինս եդին. որ զորսն 'ի մի տեղ բերեն և ուտեն. Նա յօրժամ աղուէսն որսայր՝ գնայր արծուին և իմէկ տեղ ուտէին. Նա յօրժամ որսայր արծուին առնոյր զորսն, և երթայր նստէր 'ի բարձր վէմս. և աղուէսն ոչ կարէր ելանել անդ։ Նա գիտաց աղուէսն զնենգութի̃ արծու̃յն. և ասէ՝ ով եղբայր, նենգաւոր և ագահ երևիս, և աւազակ։ Յուցանէ առակս։ Թէ մարդ հետ ընկերոջ ծուռ լինի. նմանէ գողոց և ճիէ

աւազակաց. և յուդային, և մար-
դասպանի:

ճլը Այր մի ցանեալ էր յընկզի ծառն
տակն պարտէզ մի ձմերուկ և 'ի
ժամ պտղոյն եկն ետես ձմերուկն
մեծամեծ. և հայեցաւ 'ի ծառն՝
ետես զընկուզն մանրագոյն: և ա-
սաց: Տր Ա.Ծ, զամ զորինչ ստեղ-
ծեր 'ի կարգի է և նմանաւոր. բայց
այս երկու պտուղս աննդէպ է և
աննման: Նու այրն պառկեալ կայր
'ի ծառին տակն՝ և 'ի վեր հայէր.
և հրամանաւն Ա.Յ ոստեաւ ըն-
կուզմ'ի ծառէն. և կարի խիստ դի-
պաւ 'ի Ճակատն, և պատառեցաւ՝
և եղարիւն: Նու այրն եկեալ աղաղա-
կէր առ Ա.Ծ, և ասէր. Տր Ա.Ծ, զամ
զորինչ ստեղծեր 'ի կարգի է և
նմանաւոր. և ողորմ քոյ ստեղծուա-
ծոյն բան սաէ. նա Ճակատն քան
զխմս պխտի լինէր. և թէ ձմերու-
կը ընկուզն՝ զիս պխտի սպաննէր

Օի

Օ ի այրն ասաց. Թէ ձմերուկն այն
տեր ընկուզի տեղն. և ընկուզն ՚ի
ձմերուկին թուփն : Յուցանէ-
տակս : Թէ ա̃մ մարդ ասէ՝ զա̃մ
զոր արար Ա̃ծ բարի է՝ և ամենևին
նմանաւոր. և մարդն ոչ գիտէ որ
Ա̃յ ստեղծուածոյն բան ասէ՝ և
ոչ հաւանի. և ոչ ասէ, խոստանէ և
գէշ. վայ ինձ վայ :

Այր մի գիւր ժամանակն ՚ի մերս ՃԽԹ
էր. և ազգի ազգի չարչարանք ըն
ցեալ. և բնաւ ոչ հիւանդացաւ :
Նա յաւուր միում գնաց նմջեացն ը̃
հովանեաւ եկեղեցւոյ միոյ՝ և եկն
՚ի զղջումն՝ և ելեալ սկսաւ եկեղե
ցի շինել : Նա յորժամ կատարեաց
զեկեղեցին, հիւանդացաւ դժուա
մահուն. և ասաց այրն Տ̃ր Ա̃ծ, այս
քանի ժամանակեր խեղճ մեղաց էի,
և խեղճ չարեաց՝ և ոչ հիւանդա
ցայ. և յորժամ զեկեղեցի շինե
ցի՝ հիւանդացայ՝ և մեռանիմ. մի

Թէ եկեղեցի շինելն անընդունելի
է։ Եւ՚ի նոյնժամին երեւեցաւ պաշտօ
պան հրեշտակն ասաց։ Թէ մի հա
կառակ լինիր. Ա՟ծ քեզ ողորմե
ցաւ. եւ քո զեկեղեցի շինելն քան
զա՟մ գործ լաւ համարեցաւ։ Յու
ցանէ առակս։ Ով զղջանայ, եւ՚ի
մեղաց դառնայ. Ա՟ծ զմեղսն նր՟
ոչ յիշէ. եւ Ա՟ծ կամի. որ մարդն
բարի գործէ՝ եւ ապա մեռանի. զի
իւրն արժանի լինիցի. զի Ա՟ծ ողոր
մած է։

ՃԼ Եկեղեցին պարծեցաւ՚ի մէջ իւր՝
եւ ասաց Թէ եմ տաճար եւ տուն
Ա՟յ։ Եւ յիս գան քահանայք եւ ժո
ղովուրդք, եւ աղօթեն. եւ մատու
ցանեն զպատարագ՝ եւ հաշտի Ա՟ծ
ընդ աշխարհի՝ եւ մեղաց թողութի
լինի։ Յայնժամ գայ ջաղացն, եւ
ասէ ցեկեղեցին. Թէ զինչ ասես
Ճշմարիտ եւ արդար է. բայց դու
զիմ երախտիքն մի մոռանար. որ
գիշեր

գիշեր և ցերեկ աշխատում, և դա
տիմ, որուտեն քաՀանայք և ժողո
վուրդք՝ և ապա գան առ քեզ աղօ
թեն, և երկեր պագանեն Տ՜ի։
Յուցանէ սաակս։ Թէ կան աշ
խարՀի մարդիկք, որք Հնապազ
դատեն, և աշխատեն ամ մեղու.
թագաւորք, և իշխանք, և քաՀա
նայք, և ժողովուրդք, և ապա
մարդիկք ուտեն զվաստակս, և
ապա երթան յեկեղեցեն, և յիշեն
զԱ՜ծ, և օրՀնեն։

Եզն և ձին խօսեցան ընդ միմեանս. Ձկա
և ասաց ձին ընդ եզն. թէ դու
ով ես։ և կամ զինչ պէտք ես։ Ասա
ձի եմ՝ որ թագաւորք՝ և իշխանք՝
և պարոնայք կազմեն զիս ոսկի զար
դով և բազմին ի վ՜ր իմ։ Եւ ասաց
եզն թէ ամէն աշխարՀի պարծանք
եսեմ՝ որ վաստակեմ, և չարչարիմ.
և խոնջիմ. և ապադու և թագա
ւորդ և ամ ժողովուրդն ուտէք ըզ

վաստակն իմ. եթէ իմ վաստակն ոչ լինի. դու և քո թագաւորն մէկ հետ մեռանիք. և դու երախտամոռաց էր լինիս։ Ցուցանէ առակս։ Թէ մարդ կայ՝ որ աշխատի քան զեզն. և կայ մարդ որ հանապազ ձի հեծնու, աւերածէ աշխարհի. եթէ աշխատաւորն ոչ աշխատի ոչ եզն. նա մեռանի ինքն և հեծնողն։

ճլբ Անասուն մի բեռնակիր բարձեալ ունէր յինքն մէկ հակն մահադեղ. և մէկն սուսեր սպանման. և գնացեալ դէմ էառ ի նեղ տեղաց մի ի ճանապարհին, և ոչ կարէր անցանել։ Եւ յորժամ նեղեաց զինքն՝ ի մէկ դիհէն սուսերն խոցեաց՝ և մէկ դիհէն մահադեղն հեղաւ՝ և սպան զնա։ Ցուցանէ առակս։ Թէ բեռնակիր մարդս. որ պիտի բարձն բառնայ հանապազ ի յողն իւր. և մարդն յիմարեալ է ի ձեռն առ

առա

տանայն. և փոխանակ բարւոյն մեղք բարձեալ ՚ի յողն իւր՝ որպէս ուլ և մահադեղ նմա:

Խլուրդն բնութիւն ունի՝ որ հանապազ զբոյնն ոչ գտանէ՝ և ըզ գետնի հողն խմրտայ՝ և ՚ի մէկտեղ ոչ դադարի: Ասեն թէ ինքն գէշ հոտ ունի, և ինքն իւր հոտոյն տեղեաց ՚ի տեղի փոխի. զի գիտէ թէ հոտն ՚ի տեղեացն է՝ աստ և անդ հողն ՚ի վերայ. և գէշ հոտն յինքն է: Ցուցանէ առակս: Այսէ կան մարդիկք յաշխարհի՝ որ միշտ և հանապազ տեղեաց ՚ի տեղի փոխին՝ զի անհանգիստ են. և գիշահոտ յանհանգստութէն: Դարձեալ ցուցանէ. որ բնութիւն բարի է գործքն չար մարդոյ. նմա անդէպ թուի և տայ զնա մահու չափ՝ և անհանգիստ պահէ իւր զչարն ոչ լսայտ տուակին: ՃԼԳ

ճլդ Կենդանի մի կայ 'ի ծովն խիստ
անոխակալ և անվնաս. և խոտ
արածի՝ և մէկ եղջիւր կայ 'ի ճա
կատն. և ծայրն 'ի վայր է. և խաչան
ման եղջերովն երթայ զծովն խառ
նէ՝ և ջուրն քաղցրանայ. և ըմպէ
ինքն, և զինչ՝ որ անդ կենդանիք
նմա հային, որ երթայ 'ի ծովն և
խառնէ զջուրն՝ զի ինքեանք ըմպես
ցեն: Յուցանէ առակս: Թէ տէր
մարդ չարութին ոչ ունի յ[illegible] ոմ
ոյն կենդանին. և բարի մարդիք
վարդապետք են, և ձգնաւորք. և
ընտրեալք մարդիկք են, որք չունին
զչարութին. և նք կարօղեն. զդառն
քաղցրացուցանել՝ զչարն 'ի բարի
դարձուցանել:

ճլե Շուն բնութին և սահման է. որ 'ի
դժուարին տեղ ընկնի կամ շա
ղախրի. այլ այն տեղոյն չի գնար՝
իմէջ կենդանեաց և անասնոցն քան
զէշն յիմար ոչ կայ. և արասն 'ի
շուն

շուն յիմար ասէ. և մարդ մարդոյ
ասէ. քան զէշ յիմարես։ Ցուցանէ
առակս։ Ո մարդն որ փորձեալ ես
մէկ հետ. նա՛ այն է զոր տեսեալ ես.
և մարդն իմր իւր բանին հարկաւոր
պիտանիկենայ. և զայն բանն որ փոր
ձեալ է մէկ հետ նա այլ անձն ոչ
առնու. և թէ առնունա քան զէշն
յիմար է՝ և այլ ան դէտ է։

Էր այր մի՝ և ունէր կին միանգամ. ձլգ
օրմի լուաւ յիմաստնոց՝ թէ աղէ
կութին արա՝ 'ի ծովն ձգէ՝ և վաստի
մի մնար. և այրն սովորութի և սահ
մանք արար իւրն. որ ամէն օր մէկ
հաց տանէր և ձգէր 'ի ծովն. և
մէկ ծովայնին գայր և առնոյր ըզ
հացն՝ և տանէր թագաւորին. զայս
աւուր միում ասաց ծովայինաց
թագաւորն. թէ զայն մարդն բե
րէք՝ որ զհացն 'ի ծովն արկանէ.
որ ես զիւր աղէկն առնեմ. և
այն ծովայինքն զհացն տանէր թա
գաւո

գաւորին. Եկն յայն տեղին որ ըզ
հացն 'ի ծովն ձգէր: Նոյնժամ
էարկ 'ի ծովն՝ ձայնեաց թէ մի
գնար: Ա՛եր թագաւորն ասաց թէ
յիս բերէք զայն մարդն՝ որ զիւրն
աղէկ առնեմ, և ես այն եմ որ ամէն
օր զհացն թագաւորին տանիմ, որ
ուտէ: Եւ խրատեաց զմարդն,
թէ ինչ որ տայ քեզ՝ մի առնուր.
և ասա, մէկհեղ բեր որ լեզու իմ
'ի բերան քո հասուցանեմ: Եւ ան
ցոյց զքօղ յերեսս մարդոյն. և ա_
ռեալ գնաց առ թագաւորն: Եւ
թագաւորն ասաց՝ ով մարդ՝ ուզէ
զինչ կուզես՝ տամ քեզ. և նա ա_
սաց՝ թէ բեր լեզուս 'ի բերան քո
հասուցանեմ: Եւ իբրև հասոյց
զլեզուն 'ի բերանն յայնժամ ու
սաւ ամ̃ կենդանեաց լեզուս. գա
զանաց, և թռչնոց: Նոյնժամ ել
'ի ծովէն, և գնաց պառկեցաւ 'ի
վիմին տակն: Եւ եկեալ թռչուն մի
նստաւ իվր̃ վիմին. և ասէր, թէ

այս

այս մարդս ոչ գիտէ՝ զինչ կայ թա
ղած 'ի վերին տանն։ Իսկ ասաց նմա
ծովային թագաւորն. թէ բանդ-
մարդոյ մի ասեր. թէ ասես չես ապ
րեր. և զոր լուաւ 'ի թռչնոյն՝ ել և
էհան 'ի վերի տանէն. և տարաւ 'ի
տուն իւր։ Իսկ կինն խոշտանկեաց
զայրն իւր, թէ այս ուստի է. և
նա երկնչէր 'ի մեռանելոյ՝ և ոչ
ասէր։ Իսկ յորժամ կարի ստիպեաց
անզգամ կինն այն զայրն իւր թէ
ասա։ Յայնժամ մատաղ արար
մարդն, և հաղորդեցաւ. զի երբ
ասէր մեռանէր։ Յայն գիշերն խօ
րօզն երեքանգամ ծափ էզարկ՝
խօսեցաւ։ Իսկ շունն հաչեաց, և
ասաց. թէ ուրախութե՟ ծափտաս՝
և խօսիս. վաղն պիտի մեր տէրն
մեռանի. և մեք անտէր մնամք։
"Նա խօսօղն ասաց՝ թէ ես ինչ առ
նեմ թէ մեռանի՝ ես քառասուն
կին ունիմ, և իմ հուքմն պահէ
զամն։ Իսկ շունն ասաց թէ խիստ ան
զգամ

զգամ չար է՝ ասաց խօրօզն՝ թէ այդ-
քանդ հեշտ է․ երբ լուսանայ, թող
երթայ 'ի լեառն և կորէ զքառա-
սուն կաղնի ջաղոտ։ Եւ ասէ ցկինն
իւր՝ թէ ասեմ զպատճառն․ և կինն
յանձն էառ․ և յորժամ զքառա-
սուն կաղնի ջաղոտ մանրեմ ի վր̄. քո՝
ապա գիտենաս զպատճառն․ և յոր-
ժամ կարի զօրութ̄ է հար զկինն
մէկ անգամ․ ասաց կինն թէ ինձ ոչ
պիտի պատճառն այն։ Եւ այրն ա-
սաց՝ խաղաղեաց՝ որ ուսուցանեմ
քեզ․ և կինն երդումն էառ յանձն
թէ այլ ոչ հարցանէ զպատճառն
թէ ուստի է։ Ցուցանէ զառակս։
Թէ շատ մարդ կայ՝ որ զխորհ-
ուրդն կնոջն ասէ․ նա կինն զայր 'ի
գլուխ հանել տայ։ Եւ պարտէ մար-
դոյն որ զա̄մ բարուն առնէ կնոջն․
զի մի մարմին են․ բայց զխորհ-
ուրդն ոչ յայտնէ այսպիսւոյն։

Էր այր մի, և ունէր կարի սիրուն ճլէ
սիրելի մի։ և գնաց այրն այն 'ի
գինարբուսն 'ի մաճլիս. և սիրե
լին անդ ոչ էր։ Եւ իբրև խորին գի
շեր եղև. յիշեաց զսիրելին իւր՝ և
գնաց առ սիրելին 'ի մէճլիսն. և
սիրելին մեծարեաց զնա. և նստոյց
առ ինքն. և անդ քառասուն մարդ
կայր՝ և ամէնն գաւաթ ետուն. և
սիրելին ոչ ետ՝ զի խիստ գինով էր։
և խնայեաց 'ի նա։ Եւ յորժամ ան
կաւ 'ի գինւոյն առեալ զնա 'ի շալ
ակն՝ տարաւ 'ի տուն իւր։ Եւ ասաց,
դու ովես որ տանիս զիս՝ և նա ասաց,
ոչ ճանաչես զիս եղբայր, և յայնժամ
գիտաց՝ որ սիրելին էր։ և ասաց թէ
ամենեքեան ինձ գաւաթ ետուն.
և դու ոչ։ Տայր իւր գլխոյն, և ծե
ծեաց զնա մինչև 'ի տուն. և սիրե
լին ոչ եթող զնա. մինչև պառկե
ցոյց զնա՝ և անկողնով ծածկեաց։
Եւ երբ լուսացաւ. իմացաւ զե
ղեալսն՝ և ամաչէր։ Եւ ասաց կնոջն

զենէք զգոճարակն՝ և բերէք զմեր սիրելին՝ և պատուեմք ։ Յուցանէ առակս ։ Մարդ մէկ հետ՝ կամ երկու՝ կամ երեք. զսիրելոյ ձաւվըն վերցն է. նա յետին խայր պխոն լինի ։ Նու յորժամ գնաց սիրելին՝ թէ 'ի տունն մեծարէ զմիւս սիրելին, անկաւ յոտս նր՝ և ասէ ։ ով եղբայր, մի մեղադրեր ինձ ։ Նու միւս սիրելին ասէ. ով եղբա՛յր, համբերելով լինի՝ որ չարն 'ի բարի դառնայ. և լինի զոճարակն պարարակ ։

ՃԼ Նռնենին ասէր ընդ Ձիթենին՝ թէ ես կարմիր նուռն ունիմ. և աղէկ եմ քան զքեզ ։ և Ձիթենին ասէր ընդ Նռնենին. թէ ես պտղատուեմ՝ և ձէթ շնորհեմ լուսատու մարդկան. Յուցանէ նռնենին զթագաւորն. և Ձիթենին զքահանայն. քանզի թէպէտ և գեղեցիկ է թագաւորն. այլ ո՛չ աժէ 'ի քահանայն, քահանայն աժէ 'ի թագաւորն ։

որն ։ զի քահանայն հալածիչ է խաւարին՝ որ հալածէ զխաւարն 'ի հոգւոց մարդկան ։

Զուկն յորժամ 'ի ջրոյն 'ի դուրս ելանէ՝ նա մեռանի ։ Յուցանէ ։ Թէ մարդն որ 'ի պատուիրանացն Ա.Յ 'ի դուրս ելանէ, նա մեռանի հոգւին . և յետ մահուն հոգւին և մարմնին տանջի ։ ՃԼԹ

Զուկն յորժամ 'ի կեռն գայ և առնու . նա մեռանի իձեռն կարթին ։ Յուցանէ ։ Յորժամ մարդն 'ի մեղքն երթայ և գործէ, նա մեռանի իձեռն սատանայի . ոպ̃ մեռանի ձուկն իձեռն կարթին ։ ՃԽ

'Ի մաստատէր ոմն աղքատ ունէր ծոյլ որդի՝ և 'ի ժամ մահուն կոչեաց զորդին . և ասէ ։ Ով որդեակ . բազում գանձ կայ պահեալ 'ի հարցն իմոց յայգին մեր . իսկ ՃԽԱ

զտեղին ոչ ցուցանեմ ձեզ. այլ
որ աշխատի, և խորագոյն փորէ,
նա գտանէ զգանձն: Նոյն յետ
մահուան հօրն, սկսան որդիքն ջա
նալ մեծաւ աշխատութբ̅. և խորա
գոյն վարէին. և ամէն մէկ իւրն ջա
նայր զի ինքն գտցէ զգանձն: Նոյն
սկսաւ այգին աճել, և զօրանալ.
և ետ բազում պտուղ. և ելից զնս̃
գանձիւ: Ցուցանէ առակս: Թէ
մեծ բարի է աշխատանքն. և շատ
օգուտ է յայս կեանքս, և յայն:
Իսկ յոյլքն, ոչ աստ բարի ապրին.
և ոչ անդ վայելեն, ոպ̃ ասէ գիրն.
յուլից, և ծուլից փակեալ է
դուռն արքայութե:

ձխբ Ասի յառակաց՝ թէ այր մի զգայլն
բռնեալ էր. և զոտներն կապեալ
և ի վերայ իշուն բարձեալ տանէր
՚ի տուն. և մարդիկք ՚ի դէմ դի
պեալ ասեն, թէ այդ ինչ է որ իշոյդ
ես բարձեալ: Ասէ այրն. թէ կու

տա

տանիմ 'ի տուն՝ որ կթէնու. և իմ տղայ-
ոցն բերանն թանայ։ Այնժամ
ասեն այրքն. ո՛վ տխմար, դա զամէն
աշխարհիս կթան է հատուցեալ՝
զայդ կթան կու տանիս ։

Ասի յառակաց՝ թէ գայլ մի ելա- Ձխգ
նէր իւր լերինն. եւ տես 'ի սարոտ
լերինն գեհ մի ոչխարաց, և ասաց
խաղաղութի՛ ընդ ձեզ. Իսկ
ծերագոյն խոյ մի յոչխարացն
առէ ցընկերսն։ եղբարք թէպէտ
խաղաղութիս աւետարանեն՝ ա-
պա դուք ամէն մէկ ձեր ճար արա-
րէք։

Ասի յառակաց՝ թէ այր մի՛ զէշ Ձխդ
իւր կորուսեալ էր. և խիստ
աղէտալի 'ի շուրջ գայր, և խնդր
էր։ Այս տեսեալ գայլուն ասէ՝
այր դու զինչ խնդրես։ Ասէ այրն
ո՛վ գայլ զիմ իշուկս կորուսեալ
եմ. և չեմ գտնուլ։ Ասէ գայլն, ո՛վ

այր զքո էշն ես գտի։ Ասէ այրն՝ բեր զէշն՝ որ տամ զքո գտանելեն։ Ասէ գայլն, ով այրդու՝ զքո էշն 'ի չամուռուն էր անկեր. և ես երեք օր 'ի հեռանս եմ գտանել. և ապա կարացի 'ի դուրս քարշել։ Եւ 'ի վարձին տեղն զէշն կերի։ գիտէի որ աղքատ մարդ էիր. և ինձ վարձ չկարէիր տալ։

Ճխե Ասի յառակաց։ Թէ այրի ոմն ունէր տասն այծս։ և ունէր որդեակ մի. և որդին այն յամէն օր տանէր արածէր զայծերն։ Եւ միայրն յամէն օր շէրեփ մի ջուր լնոյր 'ի կաթն. և 'ի խասփ տայր. և ասէ որդին ցմայրն իւր. Թէ էր առնես զայդ-վնասդ, որ զջուրն 'ի կաթն լնուս. և 'ի խասփ տաս։ Ասէ մայրն՝ որդի մեր կաթնս քիչ է՝ այնոր համար առնեմ թէ քիչ մի աւելի լինի մեր կաթն. որ մեզ ձմեռանս թեացան լինի։ Իսկ յաւուր միում մինչ

մինչ դեռ արածէր մանուկն զայծիսն։ փոքր մի ամպ ծնաւ յերկինքն, եւ եկն անձրեւ. եւ հեղեղ՝ եւ տարեալ զայծիսն ելից 'ի գետն. Իսկ մանուկն եկն յարեւու առ մայրն դատարկութբ. եւ միայն փայտն 'ի ձեռինն։ Ասէ մայրն, որդի ուր են այծքն. եւ զի՞արդ յարեւու եկիր այսօր։ Ասէ որդին, մայրիկ իմ. այն շերեփ ջուրն, զոր 'ի կաթն խառնէիր, եւ 'ի խապ տայիր. նա ժողովեցաւ, եւ հեղեղ դարձաւ. եւ եկեալ զմեր այծերն տարաւ 'ի գետն ելից։ Ցուցանէ առակս թէ Այ՟ դատաստանն արդար է. որ թէպէտ զկատարեալ հատուցումն զրկողացն 'ի հանդերձեալն պահեառնէ, նա զճաշնին 'ի յայս կեանս կու հատուցանէ։ Որ տեսեալ մարդկան հաւատան՝ թէ գոյ հատուցումն 'ի հանդերձեալ դատաստանին՝ եւ առցէ իւրաքանչիւր ըզ ըստ գործոց իւրոց։

ՃԽԶ Մին յառակաց թէ 'ի բաղդատ
քաղաքն՝ հիւս մի ճարտար որ
ունէստիւ. երէք ամ աշխատեալ.
և 'ի յամբրաւն կտէն սեղան մի
յիրեար ձգեալ զանազան յօրի
նուածովք՝ որ ոչ էր տեսեալ ակն
մարդոյ այնպիսի ինչ: Եւ տարեալ
թագաւորին քաղաքին այնորիկ: կար
ծէր թէ քաղաք՝ կամ գիւղ՝ կամ
այլ ինչ պարգև տացէ նմա: Իսկ
նա տեսեալ զարմացաւ. և ուրա
խացեալ ետ նմա հազար սպիտակ՝
և նա առեալ զսպիտակն. և ելեալ
արտաքոյ դրանն նստաւ տրտում:
Եւ կամէր երթալ առ թագաւորն
յուղարկել. և մինչդեռ տրտում
նստեալ էր 'ի դրանն. եկն այր
մի, և ունէր 'ի ձեռին խուրում սա
լայով մի փարդ. և տեսեալ զհիւսն
տրտում: Եւ հարց, թէ այր դու՝
ընդէր ես տրտում, և զինչ պատ
ճառն քո: Նա յայն ժամ ասաց. թէ
երէք տարի է՝ որ 'ի յամբրաւն
կտէն

կոտէն չարչարանօք զանգամն մի չի
նեցի, որ 'ի հազար հիւսէն մէկն
չկարէ չինել այնպէս։ Երբեմն Թա
գաւորին՝ թէ ինձ գիւղ կամ քաղաք
մի տայ. Նա զայս հազար դրամն
ետ. կուզեմ որ յետուղարկեմ։
Եւ այլն որ զալայօղն վարդ ունէր.
ասէ ցհիւսն՝ դու ըղորդ ես. այս
Թագաւորս զփեշաքարի հարկիմն
չգիտէ։ Ես այլ փեշաքար եմ. և
այսչափ տարի է յայս դուռնս կու
գամ, նա ինձ ինքմի չէ տուեալ։ Եւ
ասէ հիւսն ցվարդապետին՝ դու ինչ
արուեստ գիտես. և նա ասէ՝ թէ
զայս սալայս ես կու ղուգեմ։ Իսկ
հիւսանն հանեալ զուրագն 'ի գօ
տւոյն՝ եղիվր միոյ դիհաց մուրու
ացն սալազուգին, սրբեաց մինչև
'ի վայր ոտս մաքրչով։ Եւ նորա
մնեալ առ Թագաւորն այնպէս
խախք դիմօք՝ տարաւ զվարդն։
Ասէ Թագաւորն, ով այր դու, ըն
դէր այդպէս խայտառակ երեսօք

եկեալ էր առ խա: Ու նա ասէ, ով թա
գաւոր՝ այր մի 'ի դրանս տեսի որտ
ում նստեալ: և հարցի՝ թէ վ՞էր
ես տրտում: Նա ասաց՝ թէ երեք
տարի է՝ որ աշխատանօք 'ի յամե
րաւխ կտէն սեղան մի շինեցի, և բե
րի թագաւորին՝ թէ ինձ գիւղ կամ
քաղաք տայ. նա զայս հազար ասլի
տակս էտ. այնոր համար եմ վեր
աւոր. և կուզեմ որ յետ ուղարկեմ:
Ոս ասացի՝ թէ ես այլ փեշքեշար
եմ թագաւորին. և թագաւորն ոչ
ինչ փեշքեշարի հարկեք չգիտէ:
Ու է հարց՝ թէ զինչ փեշքեշ գիտես:
ասացի թէ սալա և քթոց կու զու
գեմ, նա զուրագն քաշեաց 'ի գօտ
ւոյն. զմէկ դեհի մորուս այսպէս
'ի վայր էհատ: Ու առ ժամայն
կոչ եաց զհիւսն, և ասէ: Ո՞րդ
տրե դու արարեր ուրագով զայս
մարդոյ մորուսն. և նա ասէ այո: և
ասէ թագաւորն՝ թէ երդուէր 'ի
գլխուս իմ, որ զմիւս դեհի մուրու՛
ացն

այն այլ ածցես նոյնպէս ուրագոյն
որ ես տեսանեմ։ Նուեդեալ հիւ
սանն զուրագն խլ̄ր մուս դեհի եր
եսացն էած, որբեաց նոյնպէս։
Մակ թագաւորն, թէ նստեալ գրե
ցէք զգլուղն յորում ինքնդ կյ ինքե
անն մուլքն՝ յաղգաց յաղգս։ այնպէս
արարեալ է աւ զգիրն, և դարձաւ
'ի տունն իւր։ Ցուցանէ առակս։
Թէ ոչ աստեղք զարեգականն
գեղեցկութ̄ի փառաւոր ցուցան
են. այսպէս և փանաքի արուեստք
զապականութ̄ի մեծամեծ արու
եստացն յայտնի առնեն զարու
եստս իւրեանց։

Մսի յառակաց՝ թէ այծմի խլերայ Ձխէ
բարձր պատին կայր նստած. և
գայլ մի եկն նստաւ յատակս պա
տին։ Հայեցեալ ընդ նա այծն ասէ՝
սիրտս կուղէ որ իջնում 'ի վայր.
և եղջերովս զայն գայլն փորն
պատառեմ, Յայնժամ ասէ գայլն,
երա

երանի էր իմ աչացս՝ որ տեսանէի՛ թէ այծն գայր եղջերովն, զիմ փորն պատառէր։ Յուցանէ առակս։ Թէ անխմաստ մարդն տեսանէ զինքն, կարծէ յաղթօղ գոռոզ մեծամեծաց՝ յաղթեալ ՚ի ձեռս նց̃ անկանի, յայնժամ երևի տկարութիւն նորա։

Ջխր Ասի յառակաց՝ թէ կին մարդոյն. երեք երեսի ջուր կայ. մէկ կուսութեան քօղն՝ որ յառաջ քան զամուսնանալն ՚ի մօրէն ունի, և ՚ի ժամանակ ամուսնութեան քակի. զի յետ այնորիկ, ոչ ասի աղջիկ որ է կուսան, որ է հատեալ։ Երկու երեսի ջուր կնոջն, որ մինչ դեռ զաւակ չէ ծնեալ. և յորժամ ծնանի զառաջին զաւակն լուծանի կապ ծննդականութեան. և արձակեալ յառաջ բերէ զմանուկն. որ ով յայտնի հրապարակաւ ՚ի լուր ամենեցուն, թէ այս անուն նորա

հարան

հարան զուակ ծնաւ։ Եւ նա այ
նուհետեւ առանց ամօթոյ առեալ
զմանուկն 'ի գիրկ. և ելեալ նստէ
'ի հրապարակս, և բացեալ զախրան,
և զստինսն ջամբէ մանկանն, և ոչ
ամաչէր։ Երէք երեսի ջուր է կնոջն,
քանի է առաջին մարդոյն ի ձեռն
դրակին կապեալ. և յորժամ հան
դիպի, զի ելցէ յառաջին յառնէն.
և լինի առն այլում. յայնժամ երեք
կերպ երեսի ջուրն՝ որ է ամօթն
բարձաւ յայնպիսի կնոջէն։ Եւ
յայնմ հետէ, զի այլ ոչ ունի
երեսի ջուր ոչ ամաչէ յումեքէ.
այլ զորինչ կամի, և կարէ՝ անար
գելաբար գործէ. վ̃ն որոյ 'ի շունն
կայ արգելք, կամ ամօթ՝ և յայն
պիսի կինն ոչ։ Յուցանէ առակս։
Թէ բանականութ̃ե արգելք 'ի մե
ղաց՝ ամօթն և երկիւղն է. ըստ այնմ,
Թէ երկիւղիւ Տ̃ն խորշի ա̃մ ոք։

Ճխթ Ասի յառակաց. Թէ այր մի յամէն
տարի հարիւր մօթ հաց վաս
տակէր, և այնու զաւուն իւր կա
ռավարէր։ Եւ 'ի միում տարւոջ
'ի հարիւրէն քսան պակաս հաց
եղև։ Նա անդադար հոգայր և կո
ծէր զինքն. Թէ այս չափ հացովս
'ի նորին զիա՞րդ կարեմք եղանել։ Իսկ
Ած յանդիմանել կամեցաւ զնա։ Ա_
ռաքեաց զհրեշտակ իւր. և ասաց
նմա։ Թէ արի, երկու մօթ հաց
բարձիր. և տար կնոջ մի այրւոյ
որ ունի դուստր մի միամօր։ Եւ նա
բարձեալ գրաստուն տարաւ առ
այրի կնոջն՝ Թէ զհացս զայս Ած առա
քեաց քեզ։ Եւ ասէ պառաւ կինն
ցդուստր իւր. արի, որդեակ՝ առ
զհացն զոր Տր առաքեաց մեզ։ Իսկ
աղջիկն ասէ ցմայրն՝ Ճաշոյ հաց կե
րեալ եմք. և երկու բլիթ այլ կայ 'ի
սապատն որ երեկունն ուտեմք. և
վաղուեան Տրն և պատրաստօղն
Ած է։ և ասացին մայրն և դուստրն

ցայրն՝

ցայրն՝ որ զհացն էր բերեալ, թէ որ
դի, տար զհացդ քո այլումեմն աղ
քատի՝ որ զաւուրս կերակուրն չու
նի այդ աւելորդէ մեզ։ Եւ այրն զար
մացաւ ընդ մեծահաւատութիւն
կանանցն այնոցիկ։ Ինքն յամօթ
եղեւ՝ որ զութսուն մօթ հացն ու
նէր. հոգայր, եւ ցաւէր, թէ 'ի նորին
զինչ կարեմք ելանել։ Ցուցա
նէ առակս։ Թէ որք բազում ու
նին, եւ միշտ հոգան. թէ զինչ
պիտի ապրիմք. յանդիմանին յայն
ցանէ, որք զաւուր կերակուրն
մուրանալով գտանեն. եւ միշտ
գոհանան զԱՅ, եւ ոչ յուսահա
տին։

Ասի յառակաց՝ թէ աղքատ էրէց ՃԾ
մի գնաց մօտ մսագործն, թէ
ինձ սակաւ մի միս տուր՝ որ իմ տղայ
ոցն տանիմ, որ եփեն եւ ուտեն։
Իսկ մսագործն ընդ կատակս հա
մարեալ, ետ նմա լիտր մի միս. եւ
ասաց

ասաց թէ իմ հօրն պատարագ արա։
Իսկ երիցուն ընդ արդարս համա
րեալ եհարց զնա. թէ քո հօր ան
ուննն ինչ է, և մսագործն ասաց՝ թէ
իմ հօր անուննն մկսար է՝ զոր ոմանք
սատուրն կոչ՟ ասեն։ և երթեալ երի
ցուն 'ի տուն իւր, և տարաւ զմիան
տղայոցն. և գնացեալ շինեաց
զպատարագն. և յիշեաց զմկսարն
յանուանէ 'ի պատարագն։ Իսկ 'ի
յազդմանէն Ա՟յ մսագործի կոչ՟ն
արժանացաւ՝ և ամ՟ տուասատաղն
խանութին պատառեալ բարձրա
ցաւ։ Իսկ խանութապանն զար
հուրեալ գնաց անկաւ յոտս քա
հանային. թէ զով յիշեցեր 'ի պա
տարագն։ և նա ասէ, զմկսար ան
ուննն զոր դու ասացեր. թէ իմ
հօր անուննն մկսար է։ Իսկ նորա
զայս տեսեալ աղաչեաց կրկին պա
տարագել և խնկարկեա զհայրն իւր
յիշել։ Յուցանէ առակս։ Թէ մի
խաբեկք զի զօրութեն Ա՟յ ոչ ար

համարհնի, և ոչ տկարանայ այլ
յամի զօրաւոր և սքանչելագործ
է Ա.Ծ.:

Ասի յառակաց՝ թէ արք երկու ձծա
ընկերացեալք միմեանց. և աղ
քատակերպ ՚ի շուրջ գային ի վր̃
երկրի. և զայն տառացեալ գործ
ուրեանց. և յաւուր միում եկին ՚ի
քաղաք մի. և կամէին մտանել ՚ի
նա: Եւ եկեալ ՚ի մին դուռն տես
ին, զի գլուխ մարդոյ կախեալ կայր
ընդ դուռն ՚ի վայր. և ոչ կամեցան
մտանել: Ասացին թէ գնամք ընդ
միւս դուռն մտանեմք, որ գլուխ չէ
կախած. և այնպէս զամ̃ դրունս
քաղաքին ՚ի շուրջեկեալ ոչ գտին
զդուռն՝ որ ոչ կայր մարդոյ գլուխ
կախած. և նաչարեալ մտին ընդ մին
դուռն ՚ի ներս քաղաքին: Եւ հար
ցեալ ընդ դռնապանն թէ ինչ
պատճառ է, որ ձեր քաղաքիս յամէն
դրունս մարդոյ գլուխ է կախած.

և նոքա ասեն՝ թէ այդ գլխնիդ՝ ա-մէնն օտար և ղարիպ մարդկաց է։ Եւ մինչ դեռ նոքա զպատճառն հարցանէին. եհաս հրաւերակ՝ ի թա-գաւորէն որ.ք զղարիպ մարդիկն կոչէին. զայն երկու մարդն այլ տա-րան թէ թագաւորն կու կոչէ։ Եւ յորժամ գնացին, թագաւորն մեծ-արեաց զն͞ս, և եդ առաջի ն͞ց սեղան ամէնալից. և պատուեաց զն͞ս ան-ուշահամ գինով։ Եւ եղև կարիս միոյն՝ ի նոցանէ՝ և ել արտաքս վասն կարեաց։ Յայնժամ ասէ թագա-որն ցայն որ՝ ի տանն էր մօտ յինքն՝ թէ ափսոս չէ որ.քոպխոն հարկև որ մարդն հետ այն պխոն անբախտ մար-դոյն շրջի, և զ.քո լաւ անունդ վ͞ն դորա վատ անուն առնել։ Յայն ժամ ասէ այրն, ոչ այդպէս է ով բարի թագաւոր, այլ այն ընկերն իմ այնպիսի թագաւորի որդի է՝ որ ձեզ վայելէ նորա հօր փառքն և թագաւորութենն. և վ͞ն Ա͞յ սիրոյն

այն

այն ամենևին Թարկն տուեալ է. և
աղքատի կերպ 'ի շուրջ կու գայ. և
առժամայն եկն 'ի տուն այրն, որ
'ի դուրս էր։ Եւ ժամն կացին, եւ
և միւսն 'ի դուրս 'ի պատճառս կա
րեացն։ Եւ դարձեալ ասէ Թագաւորն
ցայն որ 'ի մտանէր, Թէ կու Թուի
ինձոր հարկևոր մարդոյ որդի ես՝ և
Թագաւորի զարմէ ես. ինչ պատեհ
է՝ որ այդ ձմրի մարդդ հետ քեզ
'ի շուրջ գայ. և գքո հարկևոր
անունդ աներէ։ Իսկ նա ասէ
ցԹագաւորն. գիտես, զի Թէ Թա
գաւորի որդի եմ, և Թէ իշխանի.
և կամ զինչևիցէ մարդոյ. իմ հօր
տունն դորա հօր Թափուր է շէն
կայեր։ և յԵՐ 'ի վայր, մեպերախ
տաւոր դոցա ազգն է։ Իսկ Թագաւ
որն առժամայն ետ նոցա երկո
ցունցն մէկ ձի աւրօքն հեծնելոյ. և
մէկ քօԹալ՝ և մէկ ծառայ. և շատ
արծաԹ, և ոսկի. և ո՛չ սպան զնա,
այլ խաղաղուԹեամբ ուղևորեաց, որք

գնացին զճանապարհն իւրեանց ։
Իսկ իբրև հարցին ցԹագաւորն,
Թէ ընդէ՞ր զայլ ղարիպսն սպանա
նէիր՝ ասէ. վ՞ն զի այլ ղարիպ մարդ-
չգտայ՝ որ միմեանց լաւ էին ասա
ցեալ. վ՞ն այն սպանանէի զնս. և ո՞ք
որ միմեանց լաւ ասացին խլաթեցի.
և հարկաւոր ուղղոյ դրին։ Յուցանէ
առակս. Թէ որք զընկերս իւրեանց
առաջի օտարաց չարաբանեն .
ինքեանք ընդ նմին պարսաւին, և
՚ի պատուո՞յ. և՚ի գլխոյն ևս ելանեն։
Ըստ այնմ, Թէ որ արհամարհէ
զիւրեօք՝ արհամարհի և ինքն ՚ի
նմանէ . և որ զընկերն առաջի
օտարաց բարեբանէ. ինքն գտանէ
զշահն և զօգտութի, և ապա ըն
կերն ։

ՃԾԲ Ասի յառակաց՝ Թէ այր մի խիստ
պարտականէր, և ոչինչ ճարչու-
ներ ազատելոյ՝ և խիստ հոգայր,
ևնեղիւր՝ ՚ի պարտատիրացն. և յաւ-
ուր

ուր միումանէ միոյն 'ի պարտատե
րացն ցնա, եւ քեզ խրատ մի տամ,
որ յամենեցուն պարտուցն ազա
տիս. ապա զիմ պարտքն վճարեա. ասէ
ցնա պարտականն, թէ թող Ա՟Ծ
վկայ լինի. որ զքոյն վճարեմ՝ լուկ
ճարմի արա՝ որ զայլոց պարտսն
վճարեմ. ասէ խրատատուն, թէ
ով որ գայ 'ի քէն պարտք ուզէ,
դու ասա թէ խամ, եւ այլ ոչինչ
մի ասեր: Յայնժամ պիտի առնուն
զքեզ դատաւորի մօտն տանին.
դու առաջի դատաւորին այլ ոչ
ինչ մի ասեր՝ բայց միայն ասա թէ
խամ: Իսկ դատաւորն պիտի ասէ,
թէ այդ մարդդ խեւ է եւ յիմար՝ յում
ճէ կուզէք զպարտսն, թողէք՝ որ
գնայ յիւր բանն. Եւ այնպէս պարտա
կանն ազատեցաւ 'ի պարտուցն: Ու
եկեալ խրատատու պարտատէրն՝
ասէ ցպարտականն. այժմ որ ազա
տեցար իմ խրատովն. բեր զիմ պարք
տան տուր՝ նա նմանապ՟ս եւ նմա

ասաց խամ։ Ոսկնին առեալ զնա գը-
նաց առ դատաւոր քաղաքին. և
սկսաւ դատաւորն հարցանել զնա՝
թէ այդ մարդ ասէ. թէ յիսուն
կտոր լումացած հազար պարտիս
ինձ տալ։ Ոինչ ասես, պարտիս թէ
ոչ՝ և նա սկսաւ ըստ առաջնոյ պա-
տասխանւոյն և ասաց՝ թէ խամ։
Յայնժամ ասէ պարտատէրն ցնա՝
թէ լումացած չկայ թող խամ լինի
ընդ քո բանիդ. և այնպիսի ձար-
տարութբ էառ 'ի նմանէ զպար-
տսն։ Յուցանէ։ Թէ անիրաւ-
ութի առնելն ոչ միայն 'ի հանդեր-
ձեալ դատաստանին պիտի խայ-
տառակի. և ուրացութին իվերայ
հոգւոյն պարտք մնայ. և ամօթն
զոր մարդկան առաջի կրէ։

ճծգ Ոսն յառաջակաց՝ թէ երկու արք մի-
մեանց յոյժ բարեկամք գնա-
ցեալ 'ի ճանապարհորդութի. և
միոյն զենեալ 'ի վաճառն. և միւսն
շահեալ

շահեալ փարթամ, դարձան և գայ
ին 'ի տունս իւրեանց՝ և եկեալ մօ
տացան 'ի քաղաքն, ասէ աղքատ
ընկերն ցհարուստն թէ եղբայր.
շատ բարութ՟իս. և սէր գիտեմ
'ի քէն, նա ամենեցուն գլուխն
այս է, զոր խնդրեմ 'ի քէն, և 'ի
վերէ քան զամենն. պխտիր՝ որ ինձ
եղբայրութ՟ին առնես՝ հազար ապե
տակ փոխ տաս ինձ. որ այս տարի
զիմ տանն, և զիմ տղայոց պէտքն
լնում. և յայլ տարի յայս օրս զքո
դրամն վճարեմ. այնժ՟ հաւանեաց՝
թէ զիմ տղայսն 'ի գերութենէ
գնես քո հոգւոյդ համար: Իսկ նր
լուեալ զայս պարզմտութ՟ե ետ հա
զար դրամն խղճալով աղքատութե
նր. և ելեալ 'ի տեղւոջէն գնացին
'ի տունս իւրեանց: Եւ իբրև լցաւ
տարէ գլուխն. երթեալ տուօղ դրա
մին առ պարտականն, և ասէ. տարի
մի բոլոր եղև, հիմայ զիմ դրամն
տուր՝ որ իմ տանն, և իմ տղայոցն

'ի պէտս անցուցանեմ։ Իսկ նորա պա-
տասխանի տուեալ ասէ. ես քեզ
դրամ չպարտիմ, և յորժամ բռը-
նադատեաց՝ ասէ ցնա, եկ՝ որ եր-
թամք 'ի դատաստան առ դատաւ-
որն։ Իսկ յորժամ եկին, ասէ դա-
տաւորն ցերկուսն, զդրամն առեալ
ես թէ ո՛չ. և ցոմն թէ վկայ և գիր
ունիս։ Իսկ իբրև գիտաց թէ
ո՛չ գիր կայ, և ոչ վկայ 'ի մէջն, ա-
սէ ցայրն որ զդրամն էր տուեալ.
թէ յայն տեղն ուր ետուր զդրամն
'ի դայ՝ մարդ կայր 'ի մօտն,
դրաստ կայր, ձի կայր. ասէ տու՛-
օղ դրամին, թէ ոչինչ չկայր 'ի
մօտ մեզ՝ 'ի վեր Ած էր, և 'ի վայր
մեք երկուքս։ Սա ողոքելով խնդ-
րեաց, և ես խղճացի և ետու. այժմ
ուրանայ։ Ասէ դատաւորն, 'ի
յայն տեղն՝ ծառ կայր՝ թուփ կայր՝
քար կայր. ինչ տեղ էր այն տեղն։
Ասէ դրամի տէրն՝ ոչ ծառ կայր՝ և
ո՛չ թուփ՝ լոկ քարատակ մի էր.

նստաք

Նստայք անդ, Համարեցի եւ տու
յինքն, եւ ելեալ եկայք ի միասին 'ի
քաղաքն՝ դա յիւր տունն, եւ ես
յիմ տունն։ Ասէ դատաւորն ցդրա
մին տէրն՝ կարես զքարն զայն բե
րել՝ կամ կոտրել 'ի յայն քարէն. եւ
նշան բերել։ Իսկ նր 'ի դուրս մա
զեալ 'ի դրամին կսկծոյն՝ Թէ գնամ
զայն քարն լծօք բերեմ կամ կոտ
րեմ, եւ նշան բերեմ։ Եւ յորժամ
գնաց նա, ասէ դատաւորն ցմիւսն՝
որ 'ի մօտն մնաց՝ Թէ կարէ զնա շար
ժել 'ի տեղեացն. կամ կարէ կոտ
րել, եւ նշան բերել. Ասէ՝ որ ուրա
նայր զդրամն. Թէ զՀազար լուծք
լծէ՝ չկարէ զայն քարն շարժել
'ի տեղեացն. եւ Թէ Հազար քար
գործ բերէ՝ չկարէ կտորմի կոտ
րել՝ զի ապառաժ քար է։ Յայն
ժամ դարձուցեալ զայրն 'ի յետս,
որ գնայր. եւ ասէ ցուրացօղ դրա
մին, Թէ գնա, եւ տուր զիւր դրամն
յինքն, զի դու եղեր վկայ՝ որ պար

 տիս.

տիս. և այնպէս յամօթեղեալ վճարեաց զպարտսն: Ցուցանէ առակս, թէ դատաւորն այնպէս պարտէ լինել. որ 'ի դատաստան առնելն, ջանին ելք գտանէ. որ զի բաւունան Այ՜ չթողու: ըստ այնմ՝ որ ասէ սաղմոսն. որ հանճարեղն լցէ, զառաջնորդութի:

ծդ Ասի յառակաց՝ թէ միակեաց մի սատանայի ուխտ եդ. որ տարի մի 'ի պահս կենայ. թէ զնա 'ի մեծութի հասուցանէ. սատանայ յանձնէառ կատարել զխնդրուածս նորա: յորժամ վճարեաց զպահսն շարժեաց զեպիսկոպոս քաղաքին. որ եդ զնա եկեղեցապան. և 'ի միւս տարւոյն շարժեաց՝ որ օրհնեց զնա աբեղայ. և 'ի միւս տարւոյն եղև մեռանիլ եպիսկոպոսին՝ շարժեաց զթագրն, և զքաղաքացին. առնել իւրեանց եպիսկոպոս: Նու յորժամ կամէր զգետաւորին՝ զի ժամ

պատա

արտացէ. եկն սատանայ՝ եւ ՚ի նա փո
քրիկ չորեքաղի մի, եւ ասէ. իմա-
մէն լաւեմն փոխարէն. որ զքեզ յայդ-
մեծագոյն աստիճանդ հասուցի,
զայս արա. առ զայդ փոքրիկ չորեք
աղիդ ՚ի ծոցդ դիր. եւ զգեստդ
իմր հագիր: Եւ յորժամ ՚ի բեմն
ելանես. նա մէկ մատամբդ իվերայ
մէկ լարին զարկ. եւ այնպէս արա
րեալ՝ պատարեալ եպիսկոպոսին. յան
կարծակի հազարք հազարաց, եւ
բիւրք բիւրոց տասանաղի, եւ թմբկի,
եւ սուռնայի, եւ չանկի, եւ չորեք աղւոյ
ձայն հնչեաց՝ իմէջ եկեղեցւոյն.
Զարհուրեցան թագաւորն եւ ժո
ղովուրդն՝ եւ ո՛չ զոք տեսանէին հար
կանող նուագարանացն: Հրամայ
եաց թագաւորն բռնել զդուռն ե-
կեղեցւոյն՝ եւ զիւրաքանչիւրոք մեր
կացուցանել եւ փնտռել. եւ այն
պէս արարեալ ո՛չ զոք գտին պատա
ճառ: Եւ մնաց թագաւորն եւ եպիս
կոպոսն միայն. Թագն եւս մերկա
ցաւ.

ցաւ. և ո՛չ գտաւ առ նա ինչ։ Եւ յոր
ժամ մերկացուցին զեպիսկոպոսն.
գտին՚ի ծոցն զչորեքքաղին այն։ Եւ
՚ի չարչարանս արկեալ խոստովան
եղև զուրացութին, և զդաշինս զոր
եդեալ էր ընդ սատանայի։ Յայն
ժամ կապեցին զնա ՚ի յագի ամե-
նի ձիոյ՝ և թողին ՚ի դաշտի. ման
բամանաբար կոտորեալ եղև մար
մին նորա. և այնպս աւանդեաց
զդառնացեալ հոգին ՚ի ձեռն սա
տանայի։ Ցուցանէ առակս։ Թէ
ովըք սատանայի բարուոյն, և ուխ
տին հաւատայ՝ բաժին նր վերջն
այնպէս լինելոց է։

Ճծե Ասի յառակաց՝ թէ կայ կենդանի
մի՝ որ լուծանայ զորովայնն. և եր
թայ ննջէ ՚ի ծերպս վիմաց մինչև
՚ի մուտ դարնանային ժամանակաց.
և թէ սակաւ կերակուր մնայ ներսի
և սպանանէ զինքն։ Ցուցանէ ա-
ռակս։ Թէ մարդ որ թէ սակաւ
մեղք

մեղք մնայ առ քեզ առանց խոս
տովանութ՟ե , և ապաշխարութ՟ե.
և ընդ քեզ իջանէ 'ի գերեզմանն
նա յօրն վերջին 'ի հուրն առաքէ
զքեզ՝ և տանջէ:

Ուսի յառակաց՝ թէ ժողովեցան ձծղ
թռչունքն. և ընտրեցին, և ե-
դին զարտուտն. և օծին իւրեանց
թագաւոր՝ զի չէ գիշակեր. և է
արթուն և ս՟ղմոսասաց: Ու սկսան
'ի գնալ. և գան 'ի գեղջ միոյ սահ
ման՝ և մանկունքն եդեալէին որոգ
այթս վ՟ս ձագուց. և արտուտն
յանց կացեալ. և էառ զհատ ցորե
նոյն. և բախտն անկաւ 'ի պարա
նոցն, և անշնչացաւ: Ու եկեալ
զօրքն՝ հանին զբախտն, և ասեն.
ով բարի թագաւոր իմաստուն և
սաղմոսասաց, զի՞նչ է այս. որ
պատահեցաւ քեզ: Ու նա ասէ,
գիտացէք, զի ագահութ՟ին տարաւ
զխելք իմ, քանզի խորհեցայ ծած-
կաբար

կաբար ուտել զցորեանն մն սով
ու զի մի տեսցէ զք 'ի զօրացն : Ցու-
ցանէ առակս Թերեւագուն որք կար-
գաւորք եւ առաջնորդք կորնչին
մն ագահութե, եւ արծաթսիրութե.
եւ այնու զայթագղեցուցանեն ըզ-
միտս աշխարհաց՝ եւ լինին ողորմելիք :

ձծէ Ասի յառակաց՝ թէ այր մի գնաց
առ դատաւոր քաղաքին. եւ
խոստացաւ թէ քեզ բղուղ մի եւղ
տամ. վաղիւն յորժամ ես, եւ ասոխն
եմ առ քեզ զամբ. զխս իրաւ արա 'ի
դատաստանին։ Ու 'ի միւս աւուրն
յորժամ եկին 'ի դատաստանն, դա-
տաւորն զեւղոյն տոնօղն իրաւ ար-
ար. եւ գրեաց զգիր հաստատութե։ եւ
գնաց այրն, որ զեւղն խոստացաւ,
ելից զբղուղ մի յարդով մինչ եւ 'ի
Ջիտն, եւ իվր յարդին երկու եւ երեք
շերեփ եւղ եդ, եւ զբերան բղղին
սերեկեաց. եւ եբեր առ դատաւորն,
եւ գնաց։ Ու յետ սակաւ աւուրց

սաէ

ասէ դատաւորն ցսպասաւորն իւր.
Թէ սիրտս իւղով բրինձ կուզէ՝
բեր զայն մարդոյ բերած իւղն. և
բրինձ եփէ: Իսկ նա վառեալ կը-
րակ. և եդ զԹաւայն իւր՝ կրակին.
եբեր զիւղնյատաւն՝ եբաց և էզարկ
զդգալն ՚ի բղուղն. նա յարդն ՚ի
դուրս վազեաց: Իսկ նա աղաղա-
կեաց Թէ զբղուղն իւղով բերին,
նա յարդ է դարձեալ. Յայնժամ
իմացաւ դատաւորն: և ասաց Թէ
այն մարդն զիս խաբեաց. ես հետ
նր հանեմ: Եւ յաւուր միում այն
մարդն դատաւորին դռնովն ան-
ցանէր. և տեսեալ դատաւորին
զայրն զայն՝ ասէ. ով այր դու, զքո
դատաստանին գիրն, զոր այն օրն
ետու պակաս կայ ՚ի ներս՝ բեր ընում
խեղճ ես. որ յետոյ այլ քո դաւըն
կերն չգայ զքեզ ՚ի դատաստան
քարշէ՝ և զքեզ ասէ: Ասէ այրն, ով
դատաւոր՝ Թէ պակաս կայ՝ ՚ի բղու-
ղն է, Թէ չէ յիմ գիրն պակաս չկայ.
և

և այնպս՟ յամօթ եղև կաշառօք դա
տաստանն նորա։ Ցուցանէ առակս՝
թէ ով որ կաշառօք դատաստան
առնէ, կամ յայս կեանքս պիտի
խայտառակի. կամ 'ի հանդեր
ձեալն։

ճծը Ասի յառակաց՝ թէ թագաւոր մի
կամեցաւ աշտարակ շինել. և
քանի ցերեկն շինէին՝ գիշերն 'ի
փուլ գայր։ Եւ ժողովեալ զգի
տունս իւր էհարց զպատճառն.
Եւ նք՟ ասեն թէ կամիս որ այլ չփլչի.
դու ընտրէ տգէտ մարդ մի՝ որ քան
զինքն տգէտ չլինի՝ և 'ի մէջ որմին
դիր կենդանի. և խլեր ած՝ որ չէն
մնայ։ Ասէ թագաւորն՝ զայդ բանի
ընտրութիդ այլ դուք արարէք՝
թէ յինչ հարցաքաթ կայ 'ի տգէտ
մարդն, և բերէք՝ որ տամ դնել 'ի
մէջ որմին։ Իսկ ն՟ք նստեալ 'ի մի
ասին ընտրել՝ թէ յինչ տեղ գտա
նեն տգէտ. և ոմն ասաց զձկնորսն

գոլ տգէտ. որ հետ մարդոյ չէ նմ՟ առնուլն. և տալն, այլ 'ի ջուրն. և 'ի հետ ձկանց: Իսկ ոմանք ասացին, զի՞նչ պահակն՝ որ հետ իշուն կենայ՝ եղիւր կեանքն 'ի մայրեն և 'ի լերինն հետ գրաստուն շրջի: Ոմանք զծովավարն ասացին. իսկ ոմանք զհովիւն, որ 'ի լերինս զամառն և զձմեռն հետ ոչխարացն շրջի, 'ի գիւղ կամ 'ի քաղաք ոչ մտանէ: և հաւանեալ կամեցան բերել զհովիւն: Յայնժամ ասէ միոմն 'ի նոցանէ. թէ թագաւորիս մերոյ է հովիւ մի. որ 'ի լեառն է ծնեալ հետ ոչխարացն, և անդ է սնեալ՝ և զիւր ժամանակն ո՛չ 'ի գիւղ մտեալ՝ և ոչ 'ի քաղաք. և յուղարկեցին տասն ձիաւոր՝ զի բերցեն զայրն. և նք՟ գնացեալ գտին զհովիւն, զի կթէր զոչխարսն. և ողջունեալ ասեն՝ կոչէ զքեզ թագաւորն: Ասէ հովիւն՝ ես զիմ ժամանակս ո՛չ 'ի քաղաք եմ գնացեալ՝

 և

և ոչ 'ի գիւղ. զիս զիարդ կոչէ ։ և
նք ասեն պատճառանօք՝ ոչ գի-
տեմք. բայց նորա պատուեալ զզօրա-
կանս, և զգաւն զենեալ, և պանիր
մածուցեալ ուրախացոյց զնոսա. և
երդմամբ հարցեալ զպատճառն
կոչելոյն ։ Իսկ նոցա ասացեալ թէ
այսպիսի պատճառաւ կոչէ զքեզ. զի
իմաստունք նորա ասացին. թէ մի
ոգէտ 'ի մարդկանէ դնեն յորմն. որ
չէն մնայ ։ Յայնժամ ծիծաղեցաւ
հովիւն, և ասէ. յիմարք և ոգէտք
այնք իմաստունքն են. որք զայդ-
ընտրութիւն արարեալ։ Իւ բե-
րեալ զոչխարն ասէ. ես ցուցից
ձեզ զտգիտութիւն ձեր։ և ասէ, ոչ
խարս. այս երկուս գաւակս ունի 'ի
փորն մինն էգ է, և միւսն որձ.
միոյն գլուխն սեաւ, և միոյն սպի-
տակ՝ և զենեալ ոչխարն և հանեալ
զգաւակսն 'ի փորոյն. և էր այնպ
որպս ասացն։ Իւ բերեալ ոչխար մի՝
ասէ, ոչխարս այս մէկ գաւակ ունի
'ի

'ի փորն. անձն սեաւ և գլուխն սպի
տակ՝ և ետքն որձ. Եւ զենեալ տես
եմ այնպէս: Աւասէ հովիւն, զայս
երկու բուն գեհս որ կայ ձեր առա
ջի, զամէնն գիտեմ, թէ որն է՝ որ
ծնանելոյ է. և որն է՝ որ ատերջ է, և
որն է, որ որձ ծնանի՝ և որն է որէգ
և որն սեաւ կամ սպիտակ, կամ որն
խայտախայրի. ձեր գիտունքն կար
են գիտել զայս: Ասեն զօրականքն
ոչ ամենևին: Ասէ հովիւն ապա գի
տացէք՝ որ ես չէմ այն տգէտն, և
չիմարն՝ զոր դուք խնդրէք. այլ
թէ կամիք՝ ես ցուցանեմ: Թող
թագաւորն զիւր անխօ նայխայն
բուծէ, թալանէ, և զինչ ունի
զամէն առնու. և խմէջ քաղաքին,
'ի հրապարակին կախէ. և չարա
չար տանջէ՝ որ ամէն քաղաքացիքն
տեսանեն. և տանին՝ թաքուցա
նեն և ասեն, թէ սպանեցին. և ե
րեք օր 'ի քաղաքն կանչեցնեն, թէ
զինչ մարդ որ գայ՝ զայն նայխայն

գործն 'ի յանձն առնու. նայ
ապրանքն զամէն այն մարդոյն
տանք՝ որ 'ի նորա՛ տեղն նստի։
Այն մարդն, որ զայս ամէն խաղ
'քութիւն տեսանէ, և լսէ՝ զոր
յայն նայխպին գլուխն անցուցին.
և յառաջ գա՛յ թէ ես չլինիմ թա
գաւորին նայխպ. այն մարդն
է յիմար, և տգէտ. զայն բռնե
ցէք՝ իմէջ որմին դրէք կենդանի,
որ այլ չի փլչիլ. և 'ի չէն մնայ։
Իսկ նոքա եկեալ պատմեցին թա
գաւորին. և թագաւորն արարեալ
այնպէս. եգիտ զայրմի որ մինչ
դեռ կանչեցնէին 'ի քաղաքին՝
թէ ով գայ զայն նայխպին զիշխա
նութիւն, և զգործն յանձն առնու,
նա զնր ապրանքն և զհայրենիքն
նմա տամք։ Յայնժամ ջրմի. և
թմնի այրմի յառաջ վազեաց և ա-
սաց՝ թէ ես յանձն առնում զայն
նայխպութիւն. և հարցին ցնա՝ թէ
տեսեր ընդ այն նայխպին հետ ինչ

արա

տղայրէն․ նա ասէ՝ այո տեսի․ բայց ես այլ աղէկ առնեմ, որ զերդ զայն չ լինիմ։ Ու ինչ առեալ փաղփաղակի տարեալ եդին կենդանի յորմն շինուածոյն․ և հաստատուն եկաց շինուածն։ Ցուցանէ առակս թէ ոք զընկերն տեսանէ 'ի գործ թագաւորի, կամ մեծամեծաց ձեռն անկեալ՝ և այնու պատճառաւն 'ի յաղքատութի և 'ի տուգանս անկեալ․ և ինքն յանդգնեալ 'ի նոյն գործն ձեռնարկանէ․ նման նմա լինիցի․ և 'ի կենացն ևս զրկեսցի։

Ասի յառուակաց՝ թէ աքլօրք երկու կռուէին իմէջ փողոցին․ և մէկն յաղթեաց ընկերին, և ձգեաց զնա․ և հպարտացեալ, ել 'ի բարձր տանիս․ և սկսաւ կարկաջել՝ և ձայնել բարձր, որ յաղթեաց ընկերին, և հպարտացաւ ինքն ընդ իւր անձն։ Ու ահա արծուի մի 'ի վերուստ էառ զինքն․ և վեր ՃԾԹ

բացաւ յօդս երկնից։ Ցուցանէ
առաւելս Թէ որ լինդայ ՚ի կորուստ
թշնամեոյն իւրոյ. և ուրախանայ
հպարտութբ. թէ յաղթեցի ընկե-
րին. գայ խլ ՚ի նր նեղութի յանկար-
ծակի, որ վայ տայ իւր անձինն՝ ոտղ
տայ դառնին. գուբն զոր փորեաց
և Տրն տայ՝ թէ որով չափով չափի։

ձէ Նման յատակոց՝ թէ պղլօրն օթեւ-
էր ՚ի ծառ մի, և խմէջ գիշեր
քն սկսաւ փառաբանել զԱծ. և
աղաղակէր անտանելի ձայնիւ. լռե
եալ աղուեսն. և գայ առ պղլօրն
և տայ ող. քահանայ, էջ ՚ի ծառէդ
՚ի վայր, զի այսօր տօն է մեծի ող.
կարապետին. և փիլիսոփայ չու
նինք, որ կատարենք զտօնս։ Նէ
պղլօրն սակաւ մի համբերեա մինչև
գայ քեռեն իմ, որ հանդիսիւ տօն
առնեմք. և խըրև առաւօտ եղև,
գայր շուն մի քերց յանկարծակի.
և բռնեց զաղուեսն։ և նա այլ ընդ-
այլ

այլ ձայնէր, և գոռայր: Ասէ խօսօղն, վայ ինձ թէ այդպիսի գարշելի ձայնիւդ կամէիր կատարել զտօն մեծի ս͞բ կարապետին: Ցուցանէ առակս: Թէ որ ջանայ նենգել ընկերին իւրոյ. ինքն անկցի յորոգայթն ո͞պ Ա͞ծ հրամայէ. և սաղօմօն. որ փորէ:

Ասի յառակաց՝ թէ ժողովեցան երեսուն նապաստակք. խոր հուրդ արարին, և ասացին: Թէ եկայք, երթամք ամէնքս միաբան անկանիմք 'ի ծովն. որ ազատիմք 'ի յայս դառն կենացս. զի կարի տը կար է ստեղծեր զմեզ Ա͞ծ. թէ գա զանք են, թէ հաւք են զմեզ ուտեն: լաւ է որ մեռանիմք քան այս կենօքս ապրիմք: Ու 'ի գնալն իւրեանց տե սին շատ գորտունս. և Ճիչ բար ձեալ գորտանցն փախեան, և ան կան 'ի ջուրն, և թաքեան: և նա պաստակքն գոհացան զԱ͞ծ. զի Ճկա

տկարք տեսլին քանզ ինքեանս ։ Ցուցանէ առակս ։ Թէ մի հայիր 'ի մարդն՝ որ բարձր է զքան զքեզ՝ և մխիթարեաց ։ և թէ մեղաւորես ․ մի հայիր 'ի կարի արդարն՝ և անյոյս լինիր ․ այլ հայեաց 'ի մեծ մարդիկ, և մխիթարիր ․ և յուսով դիմեա առ Ա՟Ծ, և փրկիս ։

ճկբ Ասի յառակաց՝ թէ 'ի տանի զատկին եկին թռչունքն ամ՟, և խոստովանէին ըստ օրինացն ․ եկին ընդ նոսա սակաւ մի և հողամաղք ։ խոստովանէին քահանային՝ թէ չեմք մեղուցեալ ․ բայց զի որսացաք զմուկն, և զգորտ, և կերինք ։ Եւ նա մերժեաց զնոսա պիղծս կոչելով, և նոյն երթեալ ստացան զանձս բազումս, և մատուցին քահանային ․ և տարեալ այնու արդարացոյց զնոսա ասելով ․ ոչ գիտացիք խոստովանիլ՝ զի այն ձեզ թռչունքեն և հաղորդեաց զնոսա ։ Ագահ ե-

պիսկո

պիսկոպոսացն , և քահանայից ,
առաքս նշանակէ։ զի զպտունկս և
զայլս մերժեն յեկեղեցւոյ , և դար
ձեալ ընդունին կաշառօք ։

Նաև յառակաց՝ թէ բուն հրշէ Ճկդ
տակ առաքեաց առ արծուծին·
և խնդրեաց զդուստր նր հարսն։ և
ասէ դու տունջեան քաջ ամարտիկ
ես և ես գիշերոյ · պատշաճ է մեզ
խնամութի · և յանձն էառ տալ·
և՛ի լինիլ հարսանեացն , ՛ի տուէ
լոյս ոչ կարէր տեսանել փեսայն, և՛ի
գիշերի հարսն · և ծաղր առնէին
զնա բազէքն · և լուծաւ հար
սանիքն ։ Ցուցանէ առակս։ Որբ
հաւատացեալ մարդ զդուստր իւր
տայ այլասեռի խաւարեցելոյ ՛ի
լուսոյ ։

Այր մի գնալով ՛ի ճանապարհի Ճկդ
հանդիպեցաւ արանց՝ որք զճո
պանս կապեալ ՛ի բուն վէմ մի , զի

շարժեսցեն զվէմն և առ ինքեանս
քարշեսցեն. բայց յամենունց կող
մանց քարշէին. կամելով իւրաքան
չիւրոք առ ինքն քարշել՝ և իւրա
ցուցանել. Իսկ քարն ամենևին ան
շարժելի մնայր՝ և անխախտ: Ասէ
այլն, ով մարդիկք, եթէ կամիք
շարժել զդա 'ի տեղւոջէ իւրմէ,
'ի միոջէ կողմանէ քարշեցէք, զի
շարժեսցի. քանզի յամենէ կող
մանէ քարշելով զդա շարժել անհ
նարին է: բայց նոքա ոչ կամեցան
լսել նմա. այլ յամառեալ քարշէին
ըստ սովորութեան իւրեանց՝ վ՟ն որոյ
քարն մնայր անշարժ: Ցուցանէ:
Վէմն է ինքն Ք՟ս ըստ Դանիէլի
և Պօղոսի. իսկ քարշողքն առ ին
քեանս Քրիստոնեայք, զի իւրա
քանչիւրոք ազգ Քրիստոնէից կամի
հակառակութ՟բ զՔ՟ս առ ինքն
քարշել՝ այսինքն իւրացուցանել՝
բայց Ք՟ս անշարժ մնայ՝ և ո՛չ առ
միոք գնայ: քանզի Ք՟ս ո՛չ կամի

զհա

զհակառակութիւն և զընդդիմու-
թիւն հաւատացելոց իւրոց. այլ
զսէր և զմիաբանութիւն նոցին.
որովք շարժի ՚Բ̃ն առ նոսա։

## Ա. Ն. Ր. Դ.։

---

## Յանգ գրոցս։

Նախ յառաջաբանութիւն սակս աշ-
խարհաց, ներ ում խօսի բանս
յերկրաչափութէ, նա և յիշատա-
կէ զանուանս արանցն, որք եղեն
գտօղք երկրաց. նաև թէ որոյ
հրամանաւ ՚ի խնդիր ելին։ նա և
զանուանս չափուց և կշռոց։ այլ
և զմասունս երկրի բաժանէ յերիս
Նւ զորքանութիւն ծովուց բացա-
տրէ. և զպարունակութիւս նո-
ցունց սահմանէ հանդերձ պարա-
գայիւք։ և զանուանակոչութիւս
նց̃ բացորոշ է։

զԱ̃ռա

զԱ՛ռաջին մասն դնէ զԵ՛ւրօպիոյ սկսեալ 'ի սեպտայէ, և յաւարտէ Թրակիայիւ և Ելլադայիւ. Ներ ում պարունակին աշխարհք երկոտասանք: սկսանի յերեսն: 19.

զԵ՛րկրորդ մասն սահմանէ զԱ՛փրիկայ, սկսեալ 'ի նոյնոյ սեպտայէ՝ և ծայրաւորէ կարմրով ծովու և հարաւայնով ծովու. Նորում բաժանէ զաշխարհս եօթն. բայց զեօթներորդն 'ի յոլովս հատանէ: սկսանի յերեսն. 26:

զԵ՛րրորդն զԱ՛սիայ, սահմանէ յարևմտից ծովախառնուրդիւն Պոնտոսի, իսկ հարաւոյ արևմտից ծայրիւ նոյնոյ կարմրոյ ծովու. և աւարտէ արևելականաւ հարաւայնով, և հիւսիսայնով Ովկիանոսիւ՝ և բաժանէ յաշխարհս. խբ: Գեղեցկապէս և մանրամասնաբար զաշխարհս Հայոց բացորոշելով: Այս զաշխարհն Սարմացւոց յանուանէ և եթ յիշելով.

լով. նոյնպէս և զաշխարհն հնդ-
կաց. սկսանի յերեսն. 32:

Չորրորդ մղոնաչափութիւն զբա
ցակայութիւնս նոցունց բացատրե
լով. 'ի Հռովմայ սկսանելով և
յամենեսան կողմունս ընթանալով
բացատրէ: սկսանի յերեսն. 65:

Անուանք գետոց սկսանին յե
րեսն. 69:

Այլ եւս անուանք գետոց որք 'ի
Ասիաէ արարեալ այլ յայլմէ: և
բղխմունք նոցունց, և ընթացք նո
ցունց. յերեսն. 70:

Անուանք քաղաքաց հնդակաց՝
վաճառք նոցունց: և փարթամու
թիւնք, որքանութիւնք, և հօյակապու
թիւնք իւրեանց. յերեսն. 77: բայց
բանին շարադրութիւն գռեհկա
բար:

# Երկրորդ Գիրքն է
# ԱՌԱԿԱՑ ԳԻՐՔԻ։

Ագռաւու զպանիրն ՚ի բերանն
ունիլ. գլուխ. ճզ ։
Ագռաւու զձագս խրատելն. հը ։
Աղէկսանդրու յանմուրեք խոսրովլի
գնալն դեսպան. ժզ ։
Աղէքսանդրու պատահելն եղեր
աշխարհն. ժը ։
Աղէքսանդրու զնուանն կորելն.
ժթ ։
Աղէքսանդրու զօրու խոսրովլ ձեան
պատահելն. ի ։
Աղէքսանդրու մեռանելն. ժէ ։
Աղուէսու զպառաւն գտանելն. ճզ ։
Աղուէսու և խեցգետնի եղբայր
լինելն. լթ ։
Աղուէսու զուղտն մերձ ՚ի մահ
գտանելն. ծէ ։
Աղուէսու զթուղթ գտանելն, և
առ գայլն տանելն. կզ ։

Աղուէ

Աղուէսու զգայլ խաբելն. կէ։
Աղուէսու զպանիր յորոգայթն
գտանելն. կը։
Աղուէսու քաղցնուլն, և իմէջ
հորոյն զքար գտանուլն. հ։
Աղուէսու զետարար լինելն. հա։
Աղուէսու զպաղ գտանուլն. հբ։
Աղուէսու զգրաւ գտանուլն. հգ։
Աղուէսու զկաքաւ ըմբռնելն. հդ։
Աղուէսու զչիտ ըմբռնելն. հե։
Աղուէսու արծուոյ եղբայրա
նալն. հզ։
Աղքատի գնալն ի գիւղ մի. հէ։
Աղքատ իրիցու մօտ մնա գործ
գնալն. հը։
Այծոյ ի բարձր պատնոտելն. հթ։
Այբի կնոջ զգող տղայ ունելն. ձ։
Այրւոյ զատական այծ ունել. ձա։
Արանց երկուց ընկեր անալն. ձբ։
Արուծու ի քար այր մտանուլն. ձգ։
Արուծու հիւանդանալն և բժշ
կաց խնդրելն. ձդ։

Արև

Յաղագս զաղօթս պատարագ կանոնելն. Խ:

Յաղագս տեսանելն զփախուստ կենդանեայն. ՀԳ:

Յաղագս հիւանդանալն, և էր էոց տես գալն. ՀԴ:

Յաղագս, գայլոյն, և աղօթելոյն եղբայրանալն. ՁԲ:

Վասն ելանելն 'ի դժուար դարն 'ի վեր. Ը:

Վասն աղքատանալն 'ի ղալաթե այ՝ և զարտ վաճառելն. ԺԴ:

Վասն ըմբռնելն 'ի գողութեն. ԻԱ:

Վասն գերեզմանակարի, և խաթունին. ԻԲ:

Վասն բաղրկանի զբեռինան տա նիլն. ԻԵ:

Վասն միոյ յեքեմ գնալն. ԻԴ:

Վասն միոյ առ թագաւորն մտա նելն. ՁԱ:

Վասն մեծ տնգնալ խնամախօս. ԾԴ:

Վասն գնացողի առ դտուրն. ՁԾԷ:

Վասն միդաստյնի փախուստն. ԾԹ:

Ունն յիմարի, և ունողի զմի դե
կան. ղգ։

Ունն հողագործի զակնածաթ լա
րելն. ղդ։

Ունն զլեզու հորթուն հաստա
նելն. ղե։

Ունն աղքատի զմիս լարոտելն. ղզ։

Ունն բարւոյ չարութեց զատելն։
ճժդ։

Ունն ցանողի զձմերուկ. ճլդ։ ճծը։

Ունն որ զիւր ժամանակս 'ի մեղս
էր. ճլե։

Ունն զգայլ ըմբռնելն և զոտ
ներն կապելն. ճխբ։

Ունն զէշ կորուսանելն. ճխդ։

Ունն հարիւր մութ հաց փաստա
կելն. ճխթ։

Ունն 'ի հօզ փարման զերխս գանգան
գտանելն. ճթ։

Ունն զհազար խոզս 'ի մի փայր ա_
ծելն. ճժա։

Ունն պարտկանի. և անձրոկի. ճծբ։

Բանն զՀազար կաղապար ծակնո
Թաղելն · ՃԺԳ :
Բարուոյ երկցու կուսին · ՃԳ :
Բրագլի բռնութե գալն յամուս
նութիւն · ՀԵ ·
Բրագլի՝ և ոպոպի զծնօղսն դար
մանելն · ՀԹ :
Բրծունոյ վերանալն՚ի տապ · ԿԲ :
Բրծունոյ նետահար լինելն · ԿԳ :
Բրծունոյ եկաքեւ չարակամ · ԼԴ :
Բանն ունօղի զկին բարկացող · ՃԻԲ :
Բանն ունօղի զկին անզգամ · ՃԼԱ
Բանն ունօղի զկին գեղեցիկ · ՃԼԵ :
Բւքձր ծուն որոյ մեղրկեթէբ · ՃԻԱ :
Բժշկապետի գալն՚ի քղուքմի · ՃԸ :
Բուէի և արծուոյ խնամանալն · ՃԿԳ :
Գաղանին յանմարդաբնակ տե
ղուոջ · ԽԲ :
Գաղանին ծովայնոյ՝ զՀուր ու
տելն ԽԴ :
Գաղանին, որոյ ձուն դեղէ : ԽԴ :
Գա

Գազանին ծովայնոյ յորոյ բերա
նոյն հոտ անոյշ գայ. խե։
Գայլոյ և աղուէսու եղբայրա
նալն. կե։
Գայլոյ զէշ գտանելն, և իշոյ աքա
ցելն. ձգ։
Գայլոյ ՚ի լերին ելանելն. ձխգ։
Գողի զծմերուկ գողանալն. ձն։
Եղբօր ումեմն գնալ առ հայրն,
և խոստովանիլն. ժգ։
Երկուց աքլօրաց կռուումն. ձծթ։
Երկուց արանց յոյժ բարեկամաց.
ձծգ։
Ընձուցն խայտալն, և զեզինան
խրատելն. կ։
Թագաւորի դեսպանաց զսեղան
կազմելն. ա։
Թգրի բարեմտի զճաշ կազմելն. բ։
Թգրի յարևմուտս յաթոռ ելա
նելն. գ։
Թգրի որդւոյ ՚ի վերջին աղքատու
թեն հասանելն. դ։
Թգրի նեղանալն ՚ի լուծոց. ե։

Թգրի զմի խոզ ունիլն և սիրելն. ղ:
Թգրի զմիակեց տեսանելն. ճ:
Թգրի միոյ մեռանիլն. և միոյ
ականն. ժե:
Թգրի Հաղար ակն ունելն. ճդ:
Թագաւորի շրջիլն ի վ՟ր երկոյ գաւառին. ճէ:
Թգրի զբարձր զախուն կանգնելն. ճը:
Թգրի զգեղեցիկ զզգ ի ունիլն. ճթ:
Թգրի երիցս զերագ տեսանելն. ճի:
Թգրի զժառանգ ոչ ունիլն. ճժա:
Թգրի զանիրաւութիւն առնելն. ճժբ:
Թգրի միոյ սիրելի օձն. կթ:
Թգրի աշտարակ շինելն. ճժդ:
Թռչնոյ ՚ի տանի զատկի գալն. ճկե:

Կողովուն թռչնոց կացուցանել թգր զախրամարքն. ղէ:
Կողովուն թռչնոց կացուցանել զարտուտն թգր. ճծզ:
Կողվուն երեանիցն պատկիցն. ճկա

Կրան աւետարանին. ժը:
Կմասանոյ աւագ երիցոյ. ճխդ:

Կմասա

Իմաստնոյ ճարտարապետի · Ճկե ։
Իմաստնոյ աղքատի զծոյլ որդի ունելն · Ճխա ։
Իշոյ ՚ի դժուարին տեղին · Ճլ ։
Իշոյ առնուլ զպատանեակն յարօ · Ճղ ։
Իշոյ անկանելն ՚ի գետն · Ճե ։
Իշոյ մեծարելն ՚ի հարսանիս · Ճղ ։
Իշոյն աւետիս տալն վն որդւոյ · Ճէ ։
Իշխանի որդւոյ մեռանելն · Ժա ։
ուսմնն խաւարի · Ղ ։
Ծերոց զբուն ոչ գտանելն · Ճխը ։
Ծոյլն և բզէզն և այլ կենդանիք · ղէ ։
Ծօսելն եղին և ձիոյն ընմիմեանս · Ճխղ ։
Ոաւ մեհենդեկց աշխարհին · ՃԺղ
Կապիկին որ ապուզայ ասի · Խա ։
Կապիկն զատվորուն առնուլն · Հզ ։
Կատուին զփիլոն հագնելն · Խթ ։
Կատուին լուսակալ լինելն · Ծ ։
Կենդանւոյ զորով այն լուսնին · ՃԾԵ ։
Կենդանւոյ անուխկալութեն · ՃԽԹ ։

Կնոջ երեք երեսն ջուր լինելն. ձխը:
Կնոջն գնալն յԼ,ֆմ, թ:
Կնոջ ընդ դրախտ շրջելն. ծդ:
Կնոջ այրուոյ զկով մի ունելն. հէ:
Կուսին հաւատաւորի. ղթ:

Հարսին հեզի և համբերողի ծդ:
Հարցումն ընդ աղուէսին վ̃
արուեստի. լէ:
Հինգ բան ՚ի մարդկանէ անգիտե
լի. կդ:
Հիւսան աշխատելն երեք ամ ՚ի
բաղդատաքաղաք. ձխդ:
Ձկան ՚ի ջրոյն ելանելն. ձլթ:
Ձկան ՚ի կեռ գալն. ձխ:
Ձմռան չորացուցանելն զբոյսս. ղա̃,
Ճանապարհորդի հանդչելն յաղ
բերն. ճը:
Մեծատանն ունողի զծառանգ
դքեռորդին. ղը:
Մկանց զալեհ չունելն եզզէն. ձժէ:
Միայնակեցի, նստելն ՚ի վ̃ր վիմի. ժ:
Միայնակեցին, ՚ի սահմանս գեղջ
բնակողին. խդ:

Միայ

Մ՝իայնակեցին, որ արար ղշնուն․ խէ։
Մ՝իայնակցին շնացողի երիս ամս․ խը։
Մ՝իայնակեցի դատշնադրութին․ ձծզ։
Նունենուոյն պարծ ին ընդ ձիթենին․ ձլը։
Յանմարդաբնակի լերին մրջիւնն ղզ։
Որոտրդի կալնուլ զկապաւն․ լե։
Որոտրդ մի յարևմուտս․ ծա։
Ուղտք երեք, և աղուէսք երեք․ ծբ։
Ուղտոյ, գայլոյ, և աղուէսուն գնալն․ հե։
Թերմոտեին բադմօրեայ․ կդ։
Պատմնւոյ զող օթս կատրելն․ ձլբ։
Պարծ ինչ եկեղեցւոյ․ ձլզ։
Սնդիկնոսայն երկուց․ ձ։
Սպիտակ հաւուն ՚ի տունս թգրայ․ ձժբ։
Սաձաւակաւնայն տասանց․ ձժե։
Սարզին արև՝ լզատմունս․ կա։
Սաձաւականին դալ՝ եքզապ մի․ ձթ։

Սխին

Մխիթն ամենից կողմնից քաղցրելի
ՃԿԴ։

Բահամնայլին գտողին ...
Բարաքին, ...
պարհելի. ՃԺԴ։

Օձի մնտոխկնոս լինիլն. ՀԾ։
Օձին եղանելն՝ ի ծառեն. ՃԺԸ։
Օձի գնալն՝ ի գուբ դաշտ. ՃԺԹ։
Օթելն աքլորին՝ ի ծառն. ՃԿ։

---

Շնորհօք և ողորմութեամբ ամենազօրին ԱՅ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ աւարտեցաւ գրքուկս շահաւէտս։

Ի Թուականին. 1669. Յունվարի. 20։
Իսկ ըստ Հայոց. ՌՃԺԸ.
Տրէի. ԺԸ։

Ա.Մ.Ե.Ն։